

9120  
buy.



3195  
~~0000~~

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

# Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը



Գ Ր Ի Գ

ԳԱԲՐԻԷԼ քահ. ՊԱՏԿԱՆԵԱՆ



Նոր-Նախիջևան  
Տպար. Ս. Յ. ԱՂԱԳԵԱՆԻ

1917

Нахичевань н-Д.  
Тип. С. Я. АВАКОВА


9120

Ս. Կ. Մանուկյանի Գրքերի Գործարանի  
Վրաստանի Կոնստանդնուպոլիս

5415 Գրքերի Կոնստանդնուպոլիս


173

9120



ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը



Գ Ր Ե Գ

ԳԱՔՐԻԷԼ քահ. ՊԱՏԿԱՆԵԱՆ



Նոր-Նախիջևան  
Տպար. Ս. Յ. ԱԿՈՎԱՆԻ

1917

Нахичевань н-Д.  
Тип. С. Я. АВАКОВА



## Ա Ձ Դ

Հրատարակելով սոյն պատմութիւնը՝ հարկ ենք համարում յայտնել, որ Պատկանեանի Հարիրամեակը շատ ընդարձակ գործ էր, չափազանց խառն անձնական պատմութեամբ եւ կենսագրութեամբ: Այդ գործից հանեցինք բուն Մախիջեանի պատմութեան վերաբերեալ դէպքերը. կենսագրական մասերը տուել է պ. Ե. Շահագիրը իւր «Տէր Գաբրիէլ Պատկանեան» գրքի մէջ՝ լիապէս օգտուելով Հարիրամեակից: Դէպքերն ներկայացնելիս՝ հարկատր տեսանք մի քանի փոփոխութիւններ մտցնել նիւթի մէջ եւ ծանօթութիւններ դնել:

Ի վերջոյ պարտք ենք համարում շնորհակալութիւն յայտնել պ. Յարութիւն Պոպովին, որ իւր հանգուց. հօր Մարգար Բարդուղիմէոսեան Պոպովի կամըը կատարած լինելու համար յօժարեցաւ յանձն առնել սոյն գրքի տպագրութեան ծախար:

Ա. Ձ. արքեպիսկոպոս

## ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ

### ՆՈՐ ՆԱԽԻՋԵԿԱՆ ՔԱՂԱՔԻ

Ա.

Ազգի կամ քաղաքի և կամ որև իցէ գերդաստանի իսկ պարձանաց հիմն՝ իւր պատմութիւնն է և չի գտնվիր այնպիսի ազգ՝ որ իւր վաղնջուց նախնեաց յիշատակն չկամենայ իմանալ և այլոց պատմել, որպէս և չի գտնվիր այնպիսի քաղաք որ իւր ծերերու գործքն չյիշէ, նոցա կրած վիշաք ու թշուառութիւնք, և նոցա օրինակն՝ ինքեան խրատուց և դաստիարակութեան նիւթ չյօրինէ:

Նորն Նախիջևան, որոյ հարիւրամեակն ահա կմերձենայ\*) իմ վրայ հարկ կդնէ՝ իւր հարիւրամեայ կեանքի նկարագիրն յօրինել աւելի այն պատճառաւ, որ համարեա թէ նորա վերջին յիսնամեակն՝ իմ կենաց լաւագոյն մասին ասպարէզն է եղել: Նոր Նախիջևան՝ թէպէտ և աւելի մեծ քաղաք չէ եղել, բայց որովհետև նորա ընակիչք միայն հայազգիք էին, իւր անխառնութեամբ, իւր նախնեաց ժառանգեալ մաքուր բարոյականութեան պահպանութեան յաջողութեան ամենայն առհաւատչեայքն ու նենալոյ կարողութեամբ՝ կմարթանայր միւս ցրուեալ և ցնդեալ հումազեաց վիճակի վրայ ևս լաւագոյն ազդեցութիւն ի ձեռս բերել, եթէ խելամուռութեամբ ժամանակակից անցից և անցիլոց իմիա առնոյր զժամանակ այցելութեանն իւրոյ (Ղուկ. ժթ. 44):

Բ.

Մեր հայաբնակ քաղաքներէն ոչ մին կարէ ասել այնքան համարձակ՝ թէ իմ բնիկ հայրենին Անի քաղաքն է՝ Բաղրս-

\*) Գրուած է 1879 թ.

տունեան թագաւորութեան Աթոռն, որպէս Նոր Նախիջևանն: 1050 թուին Բագրատունեաց Գագիկ վերջին թագաւորն ստիպուեցաւ Աթոռէն հրաժարուիլ և Անի քաղաքի բնակիչներն յունաց յանձնել: Ահա այն օրէն սկսած Նոր Նախիջևան քաղաքի արդի բնակչաց նախնիքն սկիզբն արարին արտասուօք թողուլ իւրեանց հայրենիքն և Անի քաղաքէն հեռանալ: Նոցա գաղթելոյ նախկին շարժառիթն այն էր, որ իւրեանց ազատութիւնը կորուսին, որ Յոյնք իսկ և իսկ ընդ աիրապետելն սկսան Անուոյ զարգարանքն, ճոխութիւնքն կողոպտել: Շուտով այլազգի թըշնամիք եկան Անի քաղաքն առին յունաց ճանկերէն և նոյնպէս տւերեցին: Վերջապէս վրացիք, որ այն ժամանակն երկու հայազգի զօրավարաց իշխանազնեայ Իւանէ Աթաբէզ և Ջաքարիա սպասաւար երկայնաբազուկ Արղութեանց առաջնորդութեամբ թամար թագուհոյն ժամանակն զօրացել էին, Անի քաղաքն ազատեցին այլազգեաց բռնութիւնէն. բայց երբ այս դիւցազնեայ Հայազգի զօրավարը աշխարհի տեսարանէն հեռացան, վիրք ևս յունաց նման չկարողացան պահել Անին և այլազգիք կրկին տիրապետեցին Անուոյն և մղկիթ փոխեցին Քրիստոսի տաճարն: Եւ որովհետև Անիւսայրաքաղաքի հազար և մի եկեղեցիքն սկսան անընդհատ անարգուել նախ իւր բնիկ բնակիչ ազգադաւ հայերէն, ապա չարախորհուրդ յոյներէն, յետոյ անհաւատ այլազգիներէն և վերջապէս յունահոգի վրաց ազգէն, այն եկեղեցեաց Տէրն ևս իւր պաշտպանութեան աջն ամփոփելով, իւր երկայնամտութիւնն մէկ կողմ դրեց, և թոյլ տուեց այնպիսի երկրաշարժի զարհուրելի սասանութեան հասնել Անուոյ վերայ, որ բնակիչքն թողին ամենայն ինչ և ցրուեցան: Քանիցս որ Անիի մէջ քաղաքական փոփոխութիւններ աեղի ունեցան, այնքան նորա բնակիչքն զանազան տեղեր ցրուեցան. մտտամբ հասան Ռուբրիկեանց իշխանութեան նորազրու ազատութեան աշխարհն, մասամբ ևս անցան Թաթարաց երկիրը և հաստատուեցան Ախսարայ, որ Հաշտարխանայ և Ղազանի միջոցն էր Ադրի (Վուլգա) գետի վերայ: Այստեղ բաւական բազմացան հայերը և վաճառականութեամբ ծաղկեցան: Երբ Ջենովացիք Տաւրիկեան թերակղզոյ մէջ հաստատուեցան, Ախսարայի և Ափտարխանի Անիէն գաղթած հայերն թաթարներէն ձանձրանալով՝ պատգամաւորներ ուղարկե-

ցին Սրիմ բնակեալ Գենուացոց և ի նոցանէ հրաւէր ստացան, և 1299 թուին սկսան շարժիլ. այլ թաթարները հնարը կորոնէին նոցա թոյլ չտալ ելանիլ ի ներքուստ ձեռաց իւրեանց, այս պատճառաւ հայերն սուր հանեցին: Ելան բազմութեամբ և հազիւ 1330 թուին Տաւրիկեան թերակղզին հասան, սուր արդէն կային բազում հայք և նոցա հետ միասին բնակուեցան: Ռուբրիկեանց թագաւորութեան անկումէն վերջն ևս (1375) Կիլիկիայէն դուրս եկած Անիցիք, որ Նոր-Նախիջևանցոց նախնիքն էին, երբ եկան հասան Ղազան, տեսնելով որ այն տեղոյ հայերն կիսով չտփ նուազել էին, իրենք ևս դարձան զէպի Տաւրիկ և բնակութիւն հաստատեցին իւրեանց հայրենակցաց հետ միասին:

Գ.

Նոր-Նախիջևանցոց բնիկ նախնիք Անեցի հայերն իւրեանց բնակութեան համար ընտրեցին զանազան տեղեր. ոմանք՝ որ ճոխ էին և վաճառականութեան սէր և ընդունակութիւն ունէին, նստան Թէոդոսիա և Եւպատորիա ծովափնեայ քաղաքներն, նաև Սևաստոպոլ, ոմանք՝ որ այգեգործութեան սէր ունէին և հմտութիւն՝ նստան Սուդախ. իսկ որք երկրագործ էին՝ ցրուեցան Խարասուբազար ու Էսկի Սրիմ, որ իհնումն կասկէր Քիմմերիում կամ Սուրդազ. և այլ քաղաքներ ևս գնացին ոմանք, որոց գործն էր փերեզակութիւն:

Անեցի հայերն՝ երբ որ տեսան իւրեանց անձն Տաւրիկեան թերակղզոյ մէջ ոչ միայն ազատ ամենակերպ հարստահարութիւններէ, ինչ որ ունէին իւրեանց հայրենեաց իսկ՝ Անի քաղաքին մէջ, այլև կալուածատէր այգեաց, ազարակաց և արօտատեղեաց, համարեցան, թէ նոցա համար վերադարձաւ ոսկեղարն և Անի քաղաքի բարօրութիւնն նորոգվեցաւ Տաւրիկեան նահանգի մէջ. սկսան իւրեանց բնիկ բարեպաշտութիւնն այնտեղ ևս ցուցանել. և ինչ որ աւանդութեամբ իւրեանց մտքի մէջ ունէին պահած՝ թէ Անիի երկիրն հազար և մի եկեղեցի էին թողել, Տաւրիկեան քաղաքների և գիւղերի մէջ այն հսկայական թիւն համարեան թէլրացուցին:

Տաւրիկեան թերակղզին ամբողջ Գենովացոց իշխանու-

թեան ներքոյ չէր. այն երկրի մեծ մասն թաթարաց ձեռին էր. Գենովացիք միայն ծովեզրեայ մի քանի քաղաքներու էին տիրապետել, այսինքն՝ Թէոդոսիոյ, Եւպատորիոյ, Էսկիխարիմայ և այլ մի քանի մերձակայ տեղերու, և Թէոդոսիոյ բերդն էին շինել. և հայերն ևս՝ որ Ախսարայէն, Աժտերխանէն և Ղաղանէն և Սիսէն եկել էին, տյն քաղաքաց մէջ էին բնակուել և գենովացւոց շինած Ֆրէնկհիսար կոչուած բերդի մօտ՝ շինեցին իւրեանց պատսպարան՝ Տէր-Մաղաքիա աւագ երիցու յառաջընթացութեամբ՝ Հայոց բերդն: Հայերն բերդն շինելոյն յիտ ցոյց տուին աշխարհի՝ որ այն բերդն պահել ու պաշտպանել ևս գիտեն:

Թաթար ազգին ցաւ էր որ երկու փոքրիկ զաղթականք Գենովացիք և Հայք Խրիմու պատուական վաճառատեղի քաղաքներն տիրապետել են և օրըստօրէ կզարգարին այն քաղաքներն, կծաղկեցնեն առևտուրն, և ինքեանք կզօրանան վասնորոյ և անդադար Գենովացոց դէմ ի մարտս կըկաքաւէին և սորա օգնական ունենալով իւրեանց զհայերն կըմնային անպարտելի: Այլ չարագուշակ զիպուածք ինչ անակնկալ պատճառ եղեն ոչ միայն գենովացւոց՝ կորուսանել իւրեանց զաղթականներն Խրիմու մէջ, այլև հայերուն՝ ողբալ իւրեանց ազատութեան և երջանիկ կենաց վայելչութիւնն: Մէնգլի Քիրէյ խանն թաթարաց, որ թագաւորեաց ի Խրիմ 1468 թուականին, կամենալով որովհիցէ հնարիւր առնուլ գենովացւոց ձեռքէն նոցա տիրապետած երկիրներն, ի կնութիւն որդւոյ իւրոյ խնդրեց գենովացւոց Շիրին իշխանի դուստրն և հարսանիքն կատարուեցաւ: Զկնի հարսանեաց զօրացան երկուստեք քութիւններն. Մէնգլի Քիրէյ խանին հաւատացուցին, թէ այդ խնամութեամբ Գենովացիք կամին տիրապետել Խրիմոյ թերտկղզոյն, իսկ Գենովացւոց սրտին մէջ կասկած սերմանեցին՝ թէ այդ ամուսնութիւնն մի դարանակալութիւն է, որով կամի Մէնգլի Քիրէյ Գենովացւոց սերմն ցամքեցնել Խրիմի մէջ: Կասկածն զօրացաւ: Շիրին՝ հարս ու փեսին, որոյ անունն էր Օսման, հրաւէր անելով՝ իւր հովանաւորութեան ներքոյ պահեց Թէոդոսիոյ մէջ որպէս պատանդ՝ ընդ պահպանութեամբ գենովացւոց հիւպատոսին, և երբ Մէնգլի Քիրէյ սկսաւ պահանջել իւր որդին՝ Շիրին իշխանն յայտնեց՝ թէ

ինչ կասկածանաց աղագաւ է պահել այն նոր ամուսին զուգակիցներն:

Դեռ ևս տասնեկինգ տարի չէր անցել, որ Կոստանդնուպոլիս ընկել էր Օսմանցւոց թուրքաց ձեռքը (1453 մայիսի 29): Մէնգլի Քիրէյ խանն գնաց Կոստանդնուպոլիս և բողոքեց Ֆէթիհ սուլթան Մէհմեմէտ երկրորդի դրանն գենովացւոց դէմ: Օսմանցւոց դուռն տեսնելով որ գենովացւոց և հայոց դէմ միանգամայն պատերազմ պիտի ունենայ, չշտապեց Մէնգլի Քիրէյ խանին օգնելու. և գուցէ թէ բնաւ չէր ևս օգներ, եթէ այս առաջին դիպուածի վրայ չաւելնայր և երկրորդն: Թէոդոսիոյ, կամ որպէս թաթարաց մէջ սովորութիւն էր կոչել, Քեաֆիր քաղաքի, (ուստի յետոյ կըճտանաւ Քէֆէ կամ Կաֆա անունն ել) հայոց հասարակութեան ազգապետն էր Աւետիքի որդի Գարբիէլ երեկի իշխանն Անեցի: Գենովացւոց վերջին հիւպատոսն այս Գարբիէլ իշխ. հրաշագեղ Շուշան կինն յափշտակել էր, և որքան ջանացին հայերն առնուլ՝ չյաջողեցին: Հայերն առ վայրոյթ սրտին պատգամաւոր յղեցին Մէնգլի Քիրէյ խանի մօտ, որ տաճկաց դրանն յաճախէ իւր գանգստն, և Հայոց կողմանէ խոստանայ Ֆրէնկհիսար բերդի և Թէոդոսիոյ անձնատուր լինելն: Օսմանցւոց Գուր պահանջեց՝ որ հայերն խոստանան հայոց բերդն ևս տաճկաց. հայք չյօժարեցան: Օսմանցիք իմանալով որ արդէն հայոց և գենովացւոց մէջ ընկել է երկպառակութիւնն, 1474 թ. եկաւ Կէտիկ Ահմէտ փաշայ ծովակալն: Թէպէտ ուշացան տաճիկք, բայց վերջապէս երեկեցաւ Թէոդոսիոյ հանդէպն երեք հարիւր նաւերէ կազմեալ օսմանցւոց հզօր աէրութեան նաւատորմն: Մէնգլի Քիրէյ ցամաքէն, օսմանցիք ծովի կողմէն յարձակելով թէպէտ առին Սուդաղ, Բալըբլաւայ, Կիրչ, Մանգուբի և Քիրսոն, բայց Թէոդոսիա չզօրեցին առնուլ, որովհետև գենովացիք Ֆրէնկհիսարն, և հայք՝ հայոց բերդն վայելուչ քաջութեամբ պաշտպանեցին: Բայց գենովացիք չկարացին զղէմ ունել. նստան իւրեանց նաւերն և փախան. օսմանցիք մտան և տիրեցին Թէոդոսիոյ, և գենովացւոց իշխանութիւնն իսպառ բարձին: Հայք շարունակեցին անվեհեր արիութեամբ պատերազմել: Պատնշափակ պաշարեալ բերդի մէջ հացն սպառեցաւ. հայերն սկսան պատգամաւորութիւն: Կէտիկ փաշայն երգմամբ խոստացաւ հայե-



րուն՝ պահպանել այնպէս, որպէս էին գննովացուց ժամանակն: Հայերն չհաւատացին, այլ որովհետեւ ոչ փախչելոյ հնար ունէին և ոչ պատերազմելոյ՝ Հայոց բերդն ևս տուին, և եղաւ հաշտութիւն:

Բայց կարճ եղաւ այս հաշտութեան տևողութիւնն. Կէտիկ Աճմէա փաշայն երեսէն ի բաց զրեց այն դիմայլակն՝ որ դեռ ևս Կոստանդնուպոլսէն յուզի չընկած գրեւ էր. սկսաւ նախ համոզել, որ նոքա ընդունին մահմէտական կրօն. բայց երբ տեսաւ՝ թէ հայերն իւրեանց կրօնին ամենայն ինչ պատրաստ են զօհել, այլ հնար ձեռն առաւ:

Փաշայի բնակարանն էր Իսկէլէ Քարուսի կոչեալ տեղն. ստէպ կոչուեց կանէր և հայերն կըհրաւիրէր. հայերն կերթային փաշայի ճաշկերոյթն վառեալ սուսերօք. փաշայն երբեմն զըժկամակութեան նշաններ ցոյց կուտայր, որ հայերն այդպէս զինեալ նորա սեղանն կուգան: Օր մի հայերն զարձեալ հրաւէր ստանալով գնացին փաշայի տուն և սուրերն լուծելով գօտիներէն՝ զրին մէկ անկիւն: Երբ ճաշն վերջացաւ և սկսան դահլիճէն ելանն՝ դարանամուտ դահլիճներն նրբաշաւիղ անցբերի մէջ մի մի գլխատեցին և զիակունքն ծովը ձգեցին: Այս էր 1475 չարաբաստիկ թուականն: Յետ այսորիկ եէնիչէրիք ցրուեցան քաղաքի մէջ՝ որպէս թէ հայերու ձեռքէն զէնքերն ժողովելոյ պատճառաւ, և կողոպտեցին ու կոտորեցին: Թէոֆոսիոյ, Կազարաթի, Սուրդաթի հայազգի՝ բնակիչք ցրուեցան, և հարիւրհազար գերդաստանէն՝ հազիւ մնացին վեց հազար գերդաստանք, յորոց միջի կային արդի նոր-նախիջևան քաղաքի նախորդքն: Այս դառնադէտ անցից յիշատակն արձանագրուած է Նիսովիթայ գիւղի ս. Կարապետ եկեղեցոյ Յայամաւուրաց մէջ, ուր այն զօհերու անուններն մի ըստ միոջէ գրուած կան:

Օսմանցիք Տաւրիկեան երկիրն տուին Ճինկիղ խանի ժառանգ կոչեցեալ Քիրէյ խաներուն, որ տաճկաց բարբարոսութեան թերին լրացուցին անտէր ու անխնամ հայերու վրայ: Այս տեսնելով՝ հայերն այստեղէն ևս սկսան ինքնահալած ցրուիլ. մեծ բազմութիւն ժողովեցաւ Լիհաստան՝ նորա թագաւորաց համեղ և քաղցրաճաշակ խոստումներէն հրապուրեալ, և Լվով քաղաքն մարդաշատութեամբ զբաւեցին. և երբ սկսան երջանկու-

թեան ժպիտն տեսանել, անօրէն և անաստուած Նիկոլ ազգուրաց և հաւատագրուժ զեպիսկոպոսի խուովութիւնն ծագեցաւ, որ նորինորոյ պատճառ գառաւ այն ողորմելիներուն վերադառնալ թաթարի սուրի տակ, որ եզուլիթաց մահաթոյնէն ազատուին: Տաւրիկեան թերակղզոյ մէջ երբեմն բնակուած, յետոյ ցրիւ ընկած և վերջապէս՝ զարձեալ ժողովված հայերն՝ Անեցիք՝ բազմաժամանակեայ և երկարատև ծառայութեան վիճակ կրեցին այս վերջին գառն ժամանակին. բայց այնքան ընտելացել էին այն լծոյն, այնքան կորուսել էին ազատասիրութեան աշխոյժն, որ իւրեանց անձն այս բեղմնաւոր և առատաբեր երկրի մէջ ոչ պանդուխտ կըհամարէին և ոչ թշուառ. հարիւրաւոր տարիներով գերութեան մէջ բնակելով, գերութեան մէջ ծնանելով, գերութեան մէջ աչք բանալով, գերութեան մէջ վարգանալով և գերութեան մէջ կեանք անցուցանելով՝ իւրեանց նախնեաց ազատութիւնն որպէս թէ ի սրտէ ուրացել էին. ուր ուրեք մէկ տուն ի ձեռք բերէին, ուր ուրեք մէկ սեպհական ազարակ ստանային, ուր ուրեք մէկ այգի ունենային արծաթազին, ուր ուրեք ձեռնհաս լինէին մէկ եկեղեցի կանգնել, մէկ առանձին գերեզմանատուն ունենալ, այն երկիրն կըհամարէին իւրեանց հայրենիք:

Այլ մէկ զիպուած յանկարծ յայտնեց՝ որ Խրիմու հայերու սրտի մէջ իւրեանց հայրենեաց սէրն աճիւնացած չէ, այլ միայն գաղախացած է, որ փոքրիկ զովարար շունչն փչելով՝ կարէ արծարծել, և ի ներքուստ գազախի՝ հրոյ բոցն փայլեցնել:

Գ.

Խրիմարնակ հայերն Անեցիք՝ մարմնուոր ամէն տեսակ ուրախութիւններէն զուրկ՝ հոգեւոր ուրախութեան մէջ որոնելով միտթարութիւն՝ ստէպ ծովային ճանապարհորդութիւն կանէին՝ երբեմն ի Կեսարիա և ի Մուշ՝ ի վտնս սրբոյն Յովհաննու Կարապետի, այլ յաճախ յերուսաղէմ, այցելութիւն կանէին հայաբնակ քաղաքաց և հանդիպելով հայազգի վաճառականաց և ուխտաւորաց՝ կլսէին Հայաստանի հայոց ազգի կրած անպատմելի տառապանքն:

1720 թուականին խրիմարնակ հայ ուխտաւորաց հետ ու-

ղեկից եղեն երկու քահանայք, վերոյիշեալ հայոց բերդի հիմնադրաց առաջնորդ տէր Մաղաքիա աւագ երիցու շառաւիղէն՝ տէր Բարդուղիմէոս աւագ քահանայն Թէոդոսիոյ, հանդերձ իւր կրտսեր որդուքն Թորոսիւ, որ էր պատանի տասնեութամեայ, և տէր Մարկոս աւագ քահանայն Եւպատորիոյ (Կէօզլեկ), որ Հայաստանի կողմէն եկած սկանառես վկայից բերանէն լսելով հայոց կրած նեղութիւնքը, ցաւեցան հոգևով և Քրիստոսի գերեզմանի վրմի վրայ երգուեցան, որ հրը դառնան ի Խրիմ, իւրեանց քանաւոր հօտի հոգսն յանձնեն իւրեանց որդւոց, և ինքեանք երթան յօգնութիւն դժբախտ եղբարց: Նոյն տարին 1720 թուականի աշնան հայ վաճառականք համբաւ բերին, որ Խարաբաղցի հայերն՝ վրաց թագաւորութենէն հրաւիրել են իւրեանց հայրենակից մի քաջ անձն՝ Դաւիթ Սիւնի (Դաւիթ բէգ կոչեալ), որ զայ՝ զօրագլուխ դառնայ, որ իւրեանց երկրէն թշնամիքն հալածին: Խարաբաղցոց կողմէն սղարկուած դեսպանն եղել է Ստեփանոս անուն մի ազգապետ, վասն որոյ և անունն մնացել է էլչի Ստեփան\*):

Խարաբաղցոց քաջութեան լուրը Խրիմ հասնելով՝ տէր Բարդուղիմէոս ծերունի քահանայն յիշեց իւր ուխտը և իսկոյն նամակ գրեց առ տէր Մարկոս և հրաւիրեց զնա ի Թէոդոսիա: Այս երկու պաշտօնեայք Աստուծոյ ունէին մի մի քահանայ որդիք՝ համանուն. տէր Բարդուղիմէոսի որդին էր նորընծայ տէր Բարդուղիմէոսն, որոյ կրտսեր եղբայրն էր մահտեսի Թորոսն, իսկ տէր Մարկոսի որդին էր նորընծայ տէր Մարկոսն, որոյ որդին էր մահտեսի Յովհաննէսն և սորա որդիքն յետ ժամանակաց եղեն Մարկոս աղայ և Դուկաս աղայ: Մահտեսի Թորոսի որդին էր յետ ժամանակաց Լուսաւորչի տէր Յակովբ աւագ քահանայն Մոսկով-

\*) Այս էլչի Ստեփանի եղբայրն էր երկրորդ ահագին Սահակ եպիսկոպոսն՝ Չայնապետն էջմիածնի: Այս էլչի Ստեփանի հարազատ անդրանիկ որդին Դաւիթ բէգն 1832 թուականին մարտ ամսին վախճանեցաւ Գրիգորիւպոլիս քաղաքի մէջ՝ թողեալ անորդի զայրի կին իւր Չանազան: Թաղման աղագաւ եկն Քիշինե քաղաքէն մտերիմ բարեկամն Ներսէս սրբազան արքեպիսկոպոսն, պատարագամատոյց էի ևս ինքն. իսկ դամբանական ձառն ասաց Ներսէս սրբազան Արշին:

ցի մականուանեալ, և տէր Յակոբի որդին Բարդուղիմէոս (Բաթիք) աղայն:

Վերոյիշեալ երկու ազգասէր աւագերիցունք յանձնելով իւրեանց հովուական պաշտօնն իւրեանց քահանայացեալ որդւոց՝ զաղանի հաճութեամբ իւրեանց առաջնորդի՝ Աստապատեցի Վարդան եպիսկոպոսի ընկան Խրիմու հայազգի ժողովրդեան մէջ և սկսան վառել ու բորբոքել ազգի ու հայրենեաց սէրն: Տէր Բարդուղիմէոսի և տէր Մարկոսի հայրենասիրական քարոզութենէն վառուելով՝ հայազգի երիտասարդք սկսան միմեանց յորդոր լինել, և այսպէս քանի հարիւր հոգիք ուխտ դրին՝ սուրբ Կարապետի ուխտագնացութեան պատրուակաւ Խրիմէն երթալ Հայաստան և Խարաբաղի մէջ միմեանց հանդիպել: Ժամանակի դիպումներն ևս յաջող համախմբեցան: Քարլան Քիրէյ խանի ժամանակն էր, որ Խալի Քիրէյ խանի աթոռն ժառանգելոյ միջոցն շփոթումներու նշաւակ եղաւ: Այս խռովութեանց ժամանակն հայազգի երիտասարդք մի մի, երկերկու նաւ նստան, անցին ի Տրապիզոն: Առաջին նաւով յուղի անկիաւն եղել է տէր Բարդուղիմէոսն՝ վաճառականի անուամբ, և երկրորդ նաւով ճանապարհորդոյն Եւպատորիայէն՝ եղել է տէր Մարկոսն, աշխարհականի զգեստ հագած: Սոցա յետեւէն կերթան ազգասէր անեցի երիտասարդք և կը հասնին Տրապիզոն, ուր կը սպասէին նոցա զալտեան տէր Բարդուղիմէոսն և տէր Մարկոսն: Այս Խրիմէն ելած հայ երիտասարդները, Նոր-Նախիջևան քաղաքի հիմնադրաց նախնիք՝ ընդ ամէնն հաւաքուել էին թուով 285 հոգիք, որք զգուշանալով խուճարու կը բաժնվին՝ տասն տասն, կամ տասնեակներով տասնեակներով՝ իւրաքանչիւր տասանց վրայ մի տասնապետ դնելով՝ ծնապաշի, ընդ ամենն քսան և չորս տասնապետք, որոց մին եղել է Քէֆէցի Քարաքաշ Գէորգ աղայի որդին, զուարթածաղիկ Յովհաննէս երիտասարդն, յորմէ յառաջացել են Նոր-Նախիջևանայ և Խրիմու Քարաքաշեան ազնուականք: Երկրորդն եղել է Խաթրան չէքէն Սուրդաթցի Ալէքսանի որդի քաջարի Յակոբն (որոյ թոռն էր Խաթրանօղլու մահտեսի Յարութիւնն, հայրն մեծահամբաւ Պօղոս աղայի Խաթրանեան): Երրորդն եղել է տէր Մարկոսի ազգական Շահինեան մահտեսի Պօղոս աղայի որդի Անդրէասն (որոց թոռն էր Շահինեան տէր Յով-

հաննէան, որ վախճանել է Նոր Նախիջևան: Չորրորդն եղել է Սալայը Ստեփան աղայի որդի Սաղաթիէն (որոյ թոռն էր մոսկի Դաւիթն և իւր հղբարքն, յորոց ծագել են ամենայն Քայալեանք): Հինգերորդն էր Խրիմու Ազամաթ Գիրէյի խըլըճճի (սուսերագործ) տէր Մարկոսի ազգական մահտեսի Մատթէոս աղայն (որոյ թոռն էր Խըլըճճի Յակոբն, որ ունէր որդիս՝ Մատթէոս և Վարդիվան և այլն): Վեցերորդն էր Կէտիկ փաշայի քառասուն գլխատեալ իշխանաց մէջէն՝ Խոջենց նահատակի շառաւիղ՝ Խոջողլի Մուրատ աղայի որդի Գրիգորն, (որոյ մի թոռն էր Ազամ, որ զնաց ի Ղզլար, և միւս թոռն էր Խոջողլի Թումաս աղայն՝ հայրն Մարտիրոս և Գաբրիէլ աղայից: Այն Գրիգորն էր նախահայր համայն Խոջայեանց տոհմին, որ ի Չմիւռին, ի Ղզլար և ի Նոր-Նախիջևան): Եօթներորդն էր Ալաճալը Գրիգոր պատանին (որոյ թոռն էին Ալաճալը օղլի Խաչերես և ազգակիցք նորա Գէորգ և Թումաս): Ութերորդն էր Տէվէճի Մանուկի որդի Վարդպարոնն, (որոյ թոռն էր Լուսաւորչի եկեղեցւոյ երեսփոխան Տէվէճեան մահտեսի Սահակն, և միւս Տէվէճեանք): Իններորդն էր Խարասուզագարի մեծ ջրաղացի կալուածատէր Սալթուկ Մարգարի որդի Սերոբն (որոյ թոռն էր Սալթիկեանց նախահայր Գասպարն՝ Թոփալ մականունեալ): Տասներորդն էր Նազիրեան Յովհաննէս աղայի որդի Վարդանն (որոյ թոռունք էին Մկրտիչ և Ստեփան աղայք): Մետասներորդն և երկոտասներորդն էին Չորչոփեան մահտեսի Գերոբն և տէր Կարապետի որդի Ալէքսանն: Այս Ալէքսան Տէր-Կարապետեանի թոռն էր Յովակիմ աղայն, որ ցասկոտ և անվեհեր սիրտ ունենալով՝ թաթարներն մականուն էին տուել տէլի, իսկ հայերն խե Յովակիմ կըկոչէին, որոյ որդիքն էին Մինաս աղայ՝ Պապուկ մականունեալ, Մըկըր աղայ, Խաչատուր և Արիստակէս, տէր Կարապետի անուամբ Փոփովեանք: Տէր Բարդուղիմէոսին և տէր Մարկոսին մէկ յաջողակ միտք ևս կծագէ Տրապիզոնի մէջ: Իմանալով որ Հայաստանի կողմի խռովութիւնն լսող ազգէն է առաջացիլ՝ որ յարձակել են ասպատակութեամբ պարսից երկիրներն, իւրեանց ժողովըրդեան արտաքին տարագն փոխել տալով՝ ամենեցուն կըյորգորեն ծպտիլ լազերու կերպարան, և այսպէս աս սակաւ սակաւ կը ճանապարհորդեն դէպի Մուշ, որոց առաջին նախընթաց կըլինի

մահտեսի Գէորգ Տէր-Կարապետեան, որոյ թոռն էր Քրիստոստուր Սալկիրեան, որովհետև սոցա նախնիք Սալկիր գետի վրայ ունէին ջրաղացք Ախմէջիթ քաղաքէն վեր, և այն մահտեսի Գէորգն կըկոչուէր Սալկիրի կամ Սալկիրեան, (Քրիստոստուր Սալկիրեանի թոռն էր Քրիստոստուրն, որ Սաղըր կասուէր): Սոքա կերթան կը հասնին Ս. Կարապետ և իւրեանց ուխտը կատարելն յետև կը դառնան դէպի Բամբակաձոր: Կարս մտնելով՝ կը սպասեն Տէր Բարդուղիմէոսի և Տէր Մարկոսին, որովհետև նոքա վերջին խմբի մէջ էին, որ բաղկացել էր ի քսանկիւն զինուորաց, որոց միոյ մասին տասնապետն էր Հայրապետեանն՝ սէջմիւսնի որդիգիր, իսկ միւս մասին տասնապետն էր մահտեսի Յովհաննէս Աբրահամեանի որդի Աբրահամն, որոյ որդի Յովհաննէսն յետ ժամանակաց որսաց պաշտօնի մէջ յառաջանալով՝ պոտպոլկոմիտի եղաւ և Աբրահամեանց ազգատոհմի զլուխ: Վերջապէս 1722-ին կըհասնեն Դաւիթ բէգի բանակն ու նորա հետ կըմիանան և իւրեանց բանակին վանապահ կըկարգեն մի քաջ երիտասարդ Մխիթար անուն, որ մինչև վերջը օտարաշի անուամբ էր ճանչըցուած, և վերջապէս այդ անունը կըբեց իւր յետնորդաց Օտարաշեանց վերայ: Այս Մխիթարի որդին էր Օտարաշեան Գէորգ աղայն:

Այս Խրիմաբնակ Անեցւոց Խարաբաղի երկիրն բանակած ժամանակն էր, որ 1723-ին օգոստոսի 23, Մեծն Պետրոս Ինքնակալ Կայսրն եկաւ Դարբանդ. վասն որոյ Դաւիթ բէգն՝ Խարաբաղի մէլիքներու և Վրաստանի Վախտանգ թագաւորի հետ միասին գնացին ընդ առաջ որսաց. Դաւիթ հետ էին Նոր-Նախիջևանի նախնի անեցիք, որք մնալով միշտ հնազանդ և միաբան Դաւիթ բէգին՝ նորա ամէն քաջագործութեանց ձեռնտու և օգնական գտնվեցան:

Հասաւ 1725 ամն: Յանկարծ Խրիմու երկրէն մի ձիաւոր եկաւ և գոյժ տուեց տէր Բարդուղիմէոսին և տէր Մարկոսին, թէ Քափլան Գիրէյ խանն լսելով նոցա գործին, բանտարկել է նոցա որդիքն՝ նորընծայ քահանաներն հանդերձ ընտանեօք և նոցա զինուորեալ ուղեկցաց գերդաստանն, որ եթէ ի միջոցի երկից ամսոց չվերադառնան, ամենն պիտի ի սուր մասնեն: Շատերը չհաւատացին այս լրոյն, միայն Աբրահամեան Աբրահամ

աղայն և այլ ևս չորս տասնապետք սկսան պնդել, թէ պէտք է վերադառնալ և ամէնքը հապճեպ վերադարձան զէպ ի Տրապիզոն: Երբ նոքա Անի էին, Կողպէթլեանց գերդաստանի մէջէն մի ձիավարժ երիտասարդ հասաւ, որ բերեց նոցա նամակներ, որոնցով կը ծանուցուէր նոցա, թէ սուտ է այն լուրն, որ իբր թէ Քափլան Քիրէյ խանն հալածանք է յարուցել հայոց զէմ. այս ուրախ լուրի վրայ, նոքա յետ դարձան:

Դաւիթ բէգի յաջորդ Մխիթար զօրավարի մահուանէն վերջը (1729 թ.), ինչպէս Խարաղցի, այսպէս նաև Խրիմցի հեծելազօրը ցրիւ ընկաւ. տէր Բարդուղիմէոսի և տէր Մարկոսի առաջնորդութեամբ անեցիք ողջամբ հայրենիք դարձան՝ ճանապարհին մի անգամ ևս Անի հանդիպելով:

Ե.

Ինչ ժամանակ խրիմաբնակ Անեցիք վերադարձան Խարաբաղի արշաւանէն, արդէն Մեծն Պետրոս վախճանել էր. նորա յաջորդներու ժամանակ՝ 1736 թ. օգոստոսի 5, հիմն դրուեցաւ Ղզլար հայաբնակ քաղաքին և ուսար Տաւրիկեան թերակղզին մտան, Օր գարուն առին, Եւպատորիա, Բահճէսարայ և Սիմֆերոպոլ հրձիգ արին: Խրիմաբնակ հայերն՝ Ղզլարայ հայոց գտած անդորրութիւնն լսելով իհետուստ՝ իրեանց սրտի մէջ սկսան սէր տածել զէպ առ Ռուսաստան, և վաճառաշահի պատճառով երթեկեկելով, տեսան որ այնտեղ չին երեկր բարբարոսական հարստահարութիւններ, ինչ որ անընդհատ կը կրէին թաթարաց ազգէն:

Տաւրիկեան թերակղզին խաղաղասէր հարեան չէր ուսաց տէրութեան. թաթարներն միշտ անհանգիստ կանէին ուսաց սահմանազուլներն: 1768 թուին պատերազմ ծագեցաւ ուսաց և տաճկայ մէջ: Ռուսաց զօրքը յաջողութեամբ առաջ գնալով՝ 1771 թուին զրաւեց բոլոր Խրիմու թերակղզին: Պատերազմն վերջացաւ Քիւչիւք Քայնարճըքի դաշնադրութեամբ՝ ի 1774, որով Ռուսաստան ստացաւ Ազով, Կերչ և Քինբուռուն, և Խրիմու թաթարք օսմանեան տէրութենէն կորզվելով՝ անկախ ու ինքնագլուխ կոչվեցան: Խրիմու թաթար խանութիւնն կարծեց, թէ

իւր արժանաւորութեանց վարձ ստացաւ անկախութիւնն, և չիմացաւ՝ որ այն անկախութիւնն՝ միայն նախասկիզբն էր իւր անհետանալոյն: Քաջայայտ էր՝ որ անսանձ և աւազակաբարոյ թաթարներն ոչ իւրեանց անկախութիւնն պիտի յաջողէին պահել, և ոչ աշխարհամիջեան խաղաղութիւնն պահպանել, գոյով երկուց՝ տաճկաց և ուսաց հակառակ ազգեցութեանց ներքոյ: Անհանգիստ մրդաներն ազգի ազգի կուսակցութիւն յօրինելով՝ ոմանք մի Քիրէյի կողմն կը պաշտպանէին, և ոմանք միւսի: Երկրամիջեան պատերազմներ բորբոքուեցան. ամէն տեղ հայոց անտէր և անօգնական ազգին կը հասնէր վնաս:

Խրիմաբնակ Անեցի հայազգիներն երբ տեսան թէ իշխանազնեայ Դոլգոուկովն յաղթական զօրք մտաւ Խրիմ, սկսան ուսաց բանակն երթեկեկ անել, որոց նախընթացք էին՝ Աբրահամեան Յովհաննէս աղայն՝ գեղեցկատես, բարձրահասակ երիտասարդն, Խարայ Մանուէլ աղա Շահինեան, Դերջանեան Մանուկ աղայն, Մարթինեան Մարթին աղայն, Կիւզէլեան Յակովբ աղայն և Ղազարոսեան (Հազարեան) մահտեսի Աստուածատուրն, և ուսաց զինուորական պաշտօն մտան և իւրեանց մտերիմ ծառայութեամբ սպայութեան կոչուին ստացան. այս էր 1775 թ., որով զրգիւ արկին թաթարաց սիրտն: Հայերն ինքեանք էին ցարդ իւրեանց ամեն տկար կողմերն ցոյց տուել թաթարներին. իրենք էին պատճառ տուել, թէ հայերն միշտ թաթարի հպատակ պիտի լինին. հայերն էին առիթ տուել թաթարներին առած շինել և ասել. էրմէնի սին՝ վէրմէլի սին (Հայազգի ես՝ հարկատու ես): Անպատկառ թաթարներին այսքան երես աւլէն յետ այժմ ոմանք յաշտնի կամ ծածուկ սկսան կողմնապահութիւն անել ուսաց, զիշերներն ելումուտ անել նոցա բանակն:

Այս ժամանակ Խրիմու հայոց առաջնորդն էր սրբազան Պետրոս արքեպիսկոպոս Մարկոսեան՝ ձեռնասոււն աշակերտ Պետրոս Քիւթիւր կաթողիկոսին, որ առաջնորդ կարգեցաւ հրամանաւ Յակոբ Շամախեցի կաթողիկոսին 1760 թուականին: Սա խնամատար հայր էր, անձնազիր, բօրի ու քաջ հովիւ: Արդ՝ այս նեղութեան ժամանակն փոխանակ ազաւնոյ միամտութիւնն գործածելով առ սա դիմելոյ, որ երթայ Սէլիմ Քիրէյի յաջորդող Դէվլէթ Քիրէյ խանին պաղատանք անէ՝ որ իւր հօտն անդոր-

րութիւն գտնէ գայլարարոյ մրդայից յափշտակութենէն, նորա լսելով՝ թէ Յովսէփ արքեպիսկոպոս ոմն կայ Ռուսաստան, ուսաց երկրի հայոց ազգի առաջնորդն՝ սկսան 1775 թուականին նորա հետ բանագնաց լինել, նորա սպասն յաճախել, ուր միանգամ նա լինէր իւր վիճակի հայաբնակ քաղաքաց մէջ՝ Աստրախան, Ղզլար, Մոզդոկ, Մոսկվա: Յովսէփ ազգասէր հովուպետ էր, բայց Ներսէսի, որ այն ժամանակ եօթնամեայ մանուկ էր, ոչ հեռատեսութիւն ունէր, և ոչ շրջանկատութիւն, որ ունէր հեղահողի և խոնարհամիտ Պետրոս սրբազանն: Եթէ Յովսէփ իւր փառացի կերպարանօք էր ամենեցուն պատկառելի, Պետրոս իւր քաղցր և ազնուաբարոյ դիտական և հրաշաքարոզ ատենաբանութեամբ զարդ էր եկեղեցւոյ և պաշտելի հեթանոսաց անգամ, որում կը վկայեն ժամանակակիցները: Յոսէփայ ազասիրութիւնն չէր խսպառ ազատ փառասիրութեան գոլորշիքէն, մինչ Պետրոս էր անխօսուն, զուտ մարմնացիալ ազգասիրութիւն: Նորա հոգին ազատ էր անձնասիրութեան և արծաթասիրութեան կապանքներէն, որոյ միակ մխիթարութիւնն էր հայազգի ժողովրդեան բարեբաստութիւնն: Յոսէփ պարզամտութեամբ հաստատել էր իւր սրտի մէջ, թէ իւր շարժողն և նպատակն էր մաքուր ազգասիրութիւնն, և չունէր կասկած, թէ կան աշխարհիս մէջ այնպիսի անձինք, որ այն անկաշատ հոգին ձեռնհաս էին և են առնել որսորդ մարդկան: Վաղնջուց Սկիւթացւոց, Սարմատացւոց ընդարձակ երկիրներն մնացած կային ամայի, հարկաւոր էր մարդկութեամբ լցուցանել, Յոսէփ՝ եթէ ազատէ իւր ազգակից հայերն՝ թաթարի բռնութեան ի ներքուստ, չի՞ լինիր երկրորդ Մոսէս՝ այս նոր Իսրայէլացւոց Աւետեաց երկիրն առաջնորդող:

Խրիմի հայերն Յոսէփ սրբազան արհւոյն սպառն յաճախելով կըխնդրէին, որ սրբազան արհւոյն միջնորդ լինի, որ ուսաց աէրութիւնն իւր լայնածաւալ երկրի մէջ նոցա բնակութեան տեղ աայ: Բայց այս հայցուածն անողներն ոչ թէ ազգապետ ազաներն էին, այլ այն ազաները, որ սրճանոցներն, գինետոռներն, կորեկօղտոռներն նստած՝ մեծմեծ կըկտորտէին, իսկ մրդաներու առջև պատրաստական խոնարհ ծառայ կըլինէին. և այդ հարցուածն արին ոչ թէ ազգապետ ազաներու կամ Առաջնորդի կամ ժողովրդեան խորհրդով, այլ միայն իւրեանց բերնէն:

և Յոսէփի նման ծանրարարոյ և ազգապարծանք մարդոյն առիթ տուին խարուելոյ և թեթեանալոյ: Յովսէփի ազգասիրութիւնն՝ նորա մտաց աչքը շարացոյց: Յովսէփ հարցմունք չառաջարկեց այն դատարկապորտ ազաներուն, թէ դուք էք որպէս լիազօր պատգամաւորք ի դիմաց վից հազար գերդաստանի՝ յորոց կազմեալ էր ժողովուրդն Խրիմայ. նա հարցուփորձ չարաւ՝ խարուելով նոցա մեծ մեծ գտակներէն, նոցա լայն լայն ֆերածէներէն, նոցա գոյնզգոյն մէտտ փտպուճներէն, նոցա խոշոր խոշոր խաթըրներէն, նոցա շամալաճա պարեգօտիններէն, լեհի գօտիններէն և սրճանոցի պերճարանութիւններէն. երեկի ձոռոմբաւն էին մա նաւանդ կիզէլեան Յակօբն, Շահինեան խարա Մանիէլն, Մարթինեան Մարթին ազայն և Դերջանեան Մանուկն՝ որ յետ ժամանակաց Երանելի Մանուկ կոչուեցաւ:

Բայց սրբազան Պետրոս արքեպիսկոպոսն Մարկոսեան՝ ազգային հին և նոր անցից պատմութեան հմուտ այրն, և ազգի բարութեան համար կեանք մաշող ազաներն կը խորհէին, որ ուսաց կայսրուհին ողորմի տառապեալ ազգին և նոյն տեղերն դարձեալ յանձնէ հայերուն և հրաման տայ, որ զէն առնուն և թաթարներէն անկախ պահպանեն իւրեանց ազատութիւնն և ստանան ազգութեան կորիզն և յաւիտենական բարեկամութեան ուխտն ու դաշն դնեն ուսաց տէրութեան հետ. ահա անձնահրաւէր պատգամաւոր ազաներն եկան և աւետիս բերին, թէ Յովսէփ սրբազանն գնաց քնհազ Փաթէօմքիւի մօտ, խնդրեց որ ուսաց ինքնակալ թագուհին ընդունի խրիմցի հայերն իւր հպատակութեան տակ, և քնհազ Փաթիօմկիւնն յօժարեցաւ միջնորդ լինել, վասն որոյ և Յովսէփին առաջարկեցին, որ թող Խրիմաբնակ հայոց ազգն՝ իւր բնիկ առաջնորդի հետ աղերսազիր մատուցանէ համազգային ժողովոյ վկայութեամբ՝ ի դուռն տէրութեան:

Ասպուշ կըթիցան ազգապետներն, և հրբ ասացին, թէ այս լինչ է, որ դուք էք արիւ, ձևդ ո՞վ էք գործ յանձնել, կատարեցան այն մեծ գրակ ազաներն և այնքան վայրահաչութիւն արին, ոչ թէ միայն իրենց մէջ, այլ և իրենց պաշտպան կարծած մրդաներու առջև, մինչև համբաւն հասաւ Պոլիս, և սուլթան Համիդ՝ որ դեռ պահած ունէր այն թերակղզոյն վերայ մեծ ազդեցու-

թիւն՝ ծածուկ հրաման արաւ թաթարաց՝ որ խրիմարնակ հայագ-  
գիաց ճանապարհ տան Խրիմէն ինքնահալած աքսոր երթալ:

Մինչ այս մինչ այն՝ Յովսէփի ևս աչք բացեց. իմացաւ նախ՝  
որ ուուսաց մեծամեծաց մէջէն ոմանք յոյս ունին և մտադիր են՝  
որ Խրիմէն գաղթած հայերն՝ իւրեանց ստրուկ անեն և զանա-  
զան տեղեր իւրեանց կալուածների մէջ ցրուեն: Այլ ինչ ափշու-  
թիւն պատեց նորա միտքն, երբ իմացաւ Պետրոս արքեպիսկո-  
պոսի գաղափարներն, որ իւր ազգասիրութեան թափոյ ուժըզ-  
նութեամբ վերուվայր է տապալուել և բնաւ մի անգամ ուղղի-  
ւոյ հնար չէ մնացել: Բարկութեամբ միտքեց նա այն ինքնակոչ  
աղաները, բայց և հասկցաւ, որ հայք Խրիմէն պիտի ելանեն.  
այլ թէ ուր պիտի երթան, անյայտ էր: Այսպէս անփոխարինելի  
փաստուին իրենց և ազգին այն անպիտան լմարդիկ, որ գուցէ  
թէ չար դիտաւորութիւն ինչ ևս չունէին: Մինչդեռ հայոց մըտ-  
քերն այս վիճակի մէջ էին, ահա Կայսերական տունէն հրաման  
հասաւ, որ ո՛վ կամենայ Խրիմէն ելանել և Ռուսաստան գաղթել,  
թող ուուսաց զօրապետքն ընդունին և գանձարանէն օգնութիւն  
ընձեռեն, որ չքաւորներն գաղթելոյ ժամանակ նիդութիւն չը  
կրին:

Վեցհազար գերդաստանէ բազկացիալ խրիմցի հայոց բազ-  
մութեան մէջ ընկաւ երկպառակութիւն: Սուվորով հազարա-  
պետն, որ Յովսէփայ ծանօթից մին էր, և բանիւ և զրով շատ  
էր խօսակից եղել այս հովուապետի հետ խրիմարնակ հայոց աղ-  
գի աղագաւ, երկպառակեալ ազգի կէսն մարթացաւ այն հար-  
բած աղաներու ձեռքով իւր կողմն յանկուցանել և 1777 թուին  
ճանապարհ հանել գէպի Դնիպր գետն, ուր որպէս թէ գետնէն  
նոր կրնձիւղէր Եկատերինոսլաւն: Մեծ հարուած էր այս ազգա-  
սէր աղաներուն և հայոց երկու հովուապետաց՝ Յովսէփին և  
Պետրոսին:

Երեք հազար գէպի Դնիպր գաղթեալ գերդաստանաց օրի-  
նակաւ խմորեալ միւս երեքհազարի մէջ անհանգստութեան շար-  
ժումն նշմարելով Պետրոս սրբազան առաջնորդն, և տեսնելով որ  
առաջին երեք հազարին արմատախիլ անող ճոռոմարան աղաներն  
ոչ թէ նոցա հետ գնացել են, այլ մնալով սկսել են միւսներու  
միտքը պղտորել և իւրեանց ընտանիքը տեղափոխ անելու հա-

051B

021B

մար պատրաստութիւններ տեսնել, ազգապետ աղաներն հրաւի-  
րեց և սկսան նորոգ խորհուրդ անել: Որոշեցին, որ մի քանի  
երիտասարդք երթան տուջ, տեղ ընտրեն, որ ուայն տեղն յան-  
ուանէ խնդրին յարքունուտա, որովհետեւ հրաման էր, որ Խրի-  
մարնակ հայերն Ազգային ժողովով՝ առաջնորդի վկայութեամբ  
աղերս արկանեն: Չորս հոգի ընտրեցին, որոց մին էր Պօղոս  
աղա Խալիպեան\*): Սոքա Թէոդոսիա քաղաքէն յուղի անկան և  
ձինիչքէի ճանապարհաւ, միշտ Միստիս (Ազով) ծովակի ափե-  
րով երթալով՝ հասան այն տեղ, ուր յետոյ շինուեցաւ Բերդեանք,  
և չհանեցան. անցին անտի, հասան այն տեղ, ուր ընդ փոյթ  
հիմնուեցաւ Մարիամպոլ, այն ևս չհանեցան: Հասին Թագանրո-  
գի բերդն, այն ևս չեղև նոցա հաճելի: Այս երեք տեղն ևս էին  
ճովափնեայ, բայց առատ գետ չունէին, վասն այն շտրեցին:  
Թագանրոգէն գէպ արևելք երթալով՝ հասին Դեմետրի Ռոստո-  
վացւոյ բերդն, ուր յետոյ ընձիւղեցաւ Ռոստով քաղաքն, այն  
ևս նոցա աչքին լաւ չերեցաւ, որովհետեւ աւելի մօտ էր բերդն՝  
հանդերձ իւր բարքերով. այս տեղէն ևս փոքր ինչ անցանելով  
գէպ յարևելք, գտան Ազովեան գաւառապետութեան ծայրն, ուս-  
տի կըսկսանէր Դոնաւիսեան խաղախ հեծելազօրաց լայնածա-  
ւալ երկիրն, տափարակ տարածութեամբ, որոյ առջև Դոն գետն  
երկու քաժին լինելով կը կազմէ մի երկայնաձիգ կղզի՝ փոլու-  
տէննիկ կոչեցեալ, որ կըթարգմանի՝ միջօրէական կամ հարա-  
ւային. այն սարահարթն ընարեցին\*\*):

\*) Ո՛չ Պօղոս, այլ Յարութիւն աղա Սպանդեան՝ հասարա-  
կօրէն ծանօթ Խալիպսըզ կամ Խալիպեան ազգանունով և որի մա-  
սին յիշատակում է Յովսէփ սրբազանն իւր Դաւթարում կոչե-  
լով՝ Փառակեցի Իգնատիոսի որդի մահտեսի Յարութիւն, որ և  
Պետերբուրգում վախճանեցաւ: Այս Յարութիւնի որդին էր պրա-  
պօրշէիկ Պօղոս Սպանդով՝ հայրն հոշակաւոր Խալիպեան Յարու-  
թիւնի, որ նոյնպէս 1789 թուին քաղաքի գործերով գնաց Մու-  
ղաւիս և ապա Պետերբուրգ Յովսէփ սրբազանի և ուրիշների հետ  
և այնտեղ 1792 թ. վախճանեցաւ: Հրա.

\*\*) Այս հաստատում է նաև Յովսէփ սրբազանը իւր Մաս-  
նաւոր պատմութեան մէջ գրելով—Ի սմին աւուր (23 մարտի  
1779) եկին առ մեզ (ի Մոսկով) ի Դոնուս ելեալ ժողովրդենէն  
արք երևելիք՝ կապիտան պարոն Յովհաննէան Աբրահամեան, պա-



Իսկոյն այն չորսէն մին վերադարձաւ Խրիմ, որ յայտնէ իւրեանց ընտրութիւնն, իսկ երեքն մնացին, որ տեղեկանան տեղւոյն որպիսութեան՝ մերձակայ ընակչաց հարցութեամբ անելով: Այս տեղւոյ հաւանութեան գլխաւոր պատճառն այն էր, որ գիտափունքէն սկսելով սարահարթն առ սակաւ սակաւ կը բարձրանար, որ քանի տեղէ պատուական աղբիւրներ կը վազէին և Դոն ձկնառատ գետը իբր քառասուն փարսախ հեռի այն տեղէն կը մտնէր Միստիս ծովակն:

Երբ տեղւոյ սակաւաւոր բնակիչք, մանաւանդ խաղախք, լսեցին, թէ այն տեղն հաճոյ է երևցել հայազգի պատգամաւորաց, և արքունական հրամանաւ թէ կանուխ և թէ անագան պիտի հայ գաղթականք գան և բնակվին անդ, սկսան աստ և անդ եղած ծառերն կտրել, որ հայերուն չմնան և մի քանի աղբիւրներ ևս խցին, որ յետ քանի ամաց գետնի տակէն ճանապարհ անելով՝ այլ տեղերէ բղխեցին և իսպառ կորեան քաղաքի համար:

Խրիմու մնացեալ հայերն, որ շնորհօք այն ճարպիկ աղաներուն առաջին իսկ նուազին երկու բաժին էին պատառուել, ոմանք՝ որ Յովսէփին գայթակղութեան պատճառ էին դատել և նորամէն անարգանօք հալածուել և կը փափաքէին՝ որ ընդ փոյթ ամենքն տեղերէն շարժին և Յովսէփէն հեռանան, այժմ լսելով՝ որ երթալու տեղերն քանի հարիւր փարսախ հեռի է և մանա-

րոն Մկրտիչն Պետրոսեան, պարոն Դանիէն Խոջաբէյեան և այլք... նոքա խնդրէին զՌուստովու բերդատեղն, որ է ի վերայ Դոն գետոյն «(Դիւան եր 19 և Կոռնկ, 1863 եր. 566): Այս խընդրի մասին օգոստոս 22-ին գրում է. Խնդրեցաք վասն Դոնիոյ եկեալ ժողովրդոյն զԱռաստով. զի գուրեհնաթ տեղւոյ հակառակէր. և պայծառափայլ գնեալն իսկոյն շնորհեաց մեզ զԱռաստով. և յոյժ յամօթ եղև հակառակող գուրեհնաթն, թէպէտ շատ գնաց առ բնեալն իբր ի խափանել, սակայն ոչ կարողացաւ»:

Աւելացնենք և այս, որ Պոլուտենկա կոչվում էր ոչ թէ կղզին, այլ այն արուարձանն, որ գտնվում էր բերդի արևելեան կողմը՝ մեր այժմու ս. Նիկողայոս եկեղեցւոյ մօտերը. զիւրի բնակիչները պարագում էին ձկնորսութեամբ և առևտրով: Երբ այս հողը հայոց տրուեցաւ, բնակիչները մասամբ բերդի հարաւային կողմը Զինուորաց գիւղ կոչուած տեղը փոխադրուեցան, մասամբ էլ այլուր: Հրտ.

ւանդ Յովսէփայ հին և նոր վիճակաց կեդրոնն է, սկսան այն ընտրութեան դէմ հակառակել. և որովհետև այն ընտրողներն Ազգապետ աղաներու և առաջնորդի կամօք էին ուղարկուել, նոցա հակառակ սկսան ժողովրդեան մէջ տարաձայնութիւն սերմանել, թէ գնացող պատգամաւորներն մեզ համար խաղախաց ձեռին գերութիւն և սարկութիւն են պատրաստել. վասն որոյ չերթանք, այլ ուրիշ կողմեր մարդ ուղարկենք և տեղ ընտրենք: Միւսներն՝ վստահ լինելով իրեանց ուղարկած մարդոց ընտրութեան վերայ, մեծաւ դժուարութեամբ մարթացան նոցա բերաններն փակել, և Լուսաւորչի տօնի ուխտի պատրուակաւ 1778 թ., յուլիսի 16-ին Բահճէսարայի Լուսաւորչի եկեղեցին համախմբել և բազմաստորագիր հաւատարմագիր յօրինել յանուն այն չորից ընտրեցոց, որոց երեքն կային յափունս Դոնաւիսայ, և մին վերադարձի էր Խրիմ. այն փոխանորդագրի մէջ առաջնորդն ևս իւր անունն գրել էր՝ Պետրոս վարդապետ Մարկոսեան: Թուին այն չորրորդի ձեռն, որ երթան Ս. Պետերբուրգ և Կայսերական Դոնէն Հրովարտակ ստանան այն ընտրեալ տեղւոյ անուամբ: Իսկ այն չորս խոովասէր անձինք, որ Յովսէփի դէմ թշնամացել էին, շփոթ յարուցին ամբոխի մէջ և պատուէր տուին չորս պատգամաւորաց՝ որ բնաւ թոյլ չտան Յովսէփին նոցա գործին մէջ խառնուել: Պատգամաւորքն հասան Դոնաւիսեան ափունքն, և չորերքին հասին Ս. Պետերբուրգ և մատուցիր Խրիմէն բերած աղբիւրագիրն, և Կայսերուհին հրամայեց գրել Հրովարտակ արքայական պարգևագրոյ յանուն Պետրոս վարդապետի Մարկոսեան և իւր ձեռագրութեամբ հաստատեց ի 1779 նոյեմբերի 14. բայց այն կայսրաբքայտեան արտօնագիրն այնքան արագ չհասաւ պատգամաւորաց ձեռքն, որքան արագ դրոշմվեցաւ Միստիսեան ձեռագրով և կնքով:

Յովսէփ արդէն հնգետասանամեայ առաջնորդ էր Հայոց Ռուսաստանի և նորա թեմի մի ծայրն էր Ս. Պետերբուրգ և Մոսկվա, իսկ միւս ծայրն Աստրախանէն սկսեալ կը տարածվէր մինչ ի Կովկաս և մինչ ի Դնեպր: Այժմ Խրիմու գաղթականք պիտի գան ու բնակին նոր Ռուսիոյ սիրտն, և պիտի ունենան առանձին առաջնորդ, որ մի նուաստ վեղարաւոր ոք չէ, այլ ձեռնադրութեամբ հին, գիտնական և քաջ աստուածարան քա-

րողիչ եպիսկոպոս: Յովսէփայ աղգասիրութիւնն տկարացաւ ի պայքարի ընդդէմ անձնասիրութեան. նորա չքնաղ հոգւոյ մէջ գլուխ բարձրացոյց փառասիրութիւնն՝ որ նորա բնիկ տկարութիւնն էր. որովհետեւ պատգամաւորքն ուղիղ առ նա չդիմեցին, նա ևս չվաղվաղեց օգնել այն տառապեալ ազգին, որոյ արէկոծութեան ծայրագոյն սկզբնապատճառն՝ թէև առանց կանխապաշար կամաց՝ իւր գահավէժ հապճեպն էր, որպէս զի այն անպարտ անձն՝ որ պիտի ակամայ կանգնի իւր հակառակորդ, նորա աշխատութեանց պտուղն չքաղէ: Յովսէփ ունէր մտերիմ բարեկամ հայազգի սեպուհ մի՝ Յովհաննէս Եղիազարեան Լազարեանց, որ յառաջադէմ էր ի դրունս մեծամեծաց Ռուսաց: Այս երկոցունց լռելն և չօգնելն Խրիմցի հայազգի պատգամաւորաց բաւական էր նոցա ամենայն գործոցն լինել խոչընդոտն:

Չորս պատգամաւորքն՝ չունենալով հրաման իւրեանց առաքիչ ժողովրդէն և առաջնորդէն զիմել առ Յովսէփ և առ Լազարեանն, և ընդմիջն Պետերբուրգ մայրաքաղաքի մէջ տեսնելով ամենայն դռներն փակ իւրեանց առջևն, քանիցս գրեցին իրենց առաքչաց զգուշութիւններ, որ չշտապին և՛ ճանապարհ չելանեն:

9.

Պատգամաւորաց տուած զգուշութեանց լուրն՝ քսութեամբ ազգանենգ հարբած աղաներու հասաւ զօրապետաց և զօրագլխոց ականջն և հարկադրեց նոցա՝ որ փոխին իւրեանց կենցաղավարութեան ձևն, և որովհետև արդէն կայսերական գանձարանէն հրամայեալ ձեռնտուութեան դրամագլուխներն բաշխել էին, և ստացել բարոյական իրաւունք նոցա կամաց վերայ իշխելոյ, քաղցրութեամբ կըբռնադատէին և ժպտանօք ծոծրակներուն զարնելով՝ մղոն կուտային, որ փութան ելանել Խրիմէն, պատճառելով թէ պիտի ինքեանք ևս ելանեն: Չշտացեալ այսու՝ ի ձեռն այն անպիտան աղաներու խաբեցին նոցա պաշտպան մրզաներու ջուրին, հարբեցուցին և սրճանոցների մէջ պարծենալ տուին, թէ այս ինչ օր, այս ինչ ժամ պիտի թաթար հեծելազօրօք շուրջ պաշարենք հայերու գերդաստաններն, արական սեռն կոտորենք, իգական սեռն գերի վարենք և նոցա ստացուածներն յափշտակենք:

Այս անպիտաններն, որ իրենք էին այս խրատն տուել մրզաներուն, դարձեալ իրանք սկսան աղմուկ և շփոթ և խռովութիւն յարուցանել իւրարանչիւր քաղաքաց մէջ, և պատճառ դառան բոլոր թերակղզւոյ մէջ լաց և սուգ և կոծ ամբառնալոյ: Թէպէտ իմացան աղգապիտ իշխանք և հեղահամբոյր առաջնորդն՝ որ այս ամենն որոգայթնիր էին՝ լարած ձեռամբ այն աղգապետ առձանց, որոց մէջ կային և տէր կիրակոսի հոգւով քահանայք, բայց ոչ ժամանակ կայր յարմար նոցա սանձն քարշել, և ոչ զօրութիւն որ ունէր և ոչ իղձ վրէժխնդրութեան: Թէպէտ կային ոռուսաց զօրապետք, բայց նոքա այն ժամանակն երկու ծայրագոյն նպատակ ունէին, մի՛ որ քրիստոնեայ ազգերն կարողանան տեղափոխել Ռուսաստան, և երկրորդ՝ որ թաթարաց այնքան քաղցրանան, մինչև թաթարք ինքեանք անձնատուր լինին և այն թերակղզին տան ոռուսաց. վասն որոյ և ինքեանք կըթելադրէին թաթարներուն, որ աւելի զգուանք հասուցանին հայերուն, որ նովաւ նոցա՝ թերակղզիէն ելանելն ձեպեցնեն:

Այսպիսի խորամանկ հնարագիտութեանց արգասիքն այս եղև, որ այն անձինք, որ առաջ չկամէին տեղերէն շարժիլ, այժմ կարծելով, թէ հասարակաց օգուտն այն է, սկսան ճանապարհի պատրաստութիւն տեսանել. իսկ որ առաջ՝ երթանք ասելով կրկորդներն կըպատուէին, այժմ չերթանք կաղաղակին. իսկ Առաջնորդն կըբարոյգէ թէ համբերեցէք՝ մինչև պատգամաւորներէն բարի համբաւ ինչ ստանանք, այլ այն բարի համբաւն չունէր երբէք լսել:

Առանց առաջնորդի գիտութեան և տեղեկութեան, առանց ազգապետաց համահաճութեան այն աղմկայոյզ աղաներն, որ գանձարանէն ելած դրամներն իւրեանց ձեռքն էին անցուցել և բաշխել իւրեանց կամակից խարդախ մարդոց, ինչպէս յաջողել էին առաջ երեք հազար գերդաստան Դնեպրի գետափունքն ցրուել, նոյնպէս այս միացորդաց մէջէն սկսան, որքան կարողացան՝ ճանապարհորդներ կազմել. այս առաջին կարաւանն էր այնպիսի գերդաստանաց, որոց համար հաւաքուենն ապարանք էին: Բայց սոցա օրինակներն շարժեցին և միւս բազմութիւնն, որք որ գեղէն որ քաղաքէն միանգամ սկսան ի չու հանդերձիլ, առանց առաջնորդի գիտութեան եկեղեցեաց մէջէն ամենայն ոս-



կեղէն, արծաթեղէն, պղնձի, երկաթի զարդերն և անօթք, և եկեղեցական զգեստք, մինչև եկեղեցեաց օծեալ վէմերն և այլ ամենայն ինչ՝ ուրոյն ուրոյն սայլերով բեռնաւորեալ՝ պատրաստուեցան ի ճանապարհ ելանել:

Այս կամաւոր և ակամայ վտարանդութեան, որոյ սկիզբն եղև թէպէտ 1777 թուոյ օգոստոս 20, փոքր մի յետոյ քան զգաղթելն առաջին երեք հազար գերդաստանայն, Առաջնորդի և ազգապետաց հետ համամիտ ընդդիմացել էին այն հայազգիք, որք կարուածատեարք էին տանց, կրապակաց, այգեաց, պարտիզաց և այլոց անշարժ կայից, թողունք եկեղեցիքն, գերեզմանատներն և այլ սրբազան տեղերն՝ որ պիտի մատնուէին ի պղծութիւն և յապականութիւն, և այս իսկ էր պատճառն՝ որ առ տէրութիւնն ռուսաց համարեան թէ տարի մի ամբողջ յապաղեց պատգամաւորութիւնն և գուցէ այլ ևս յապաղէր, եթէ սայլերու ճոնչսցն միշտ յուշ չառնէր ազգապետաց՝ ժողովրդեան ցրուելն:

Այս ժողովուրդն չսպասեց ի պատգամաւորաց (1777 թ.) գոհարար ինչ լուր ստանալոյ տեղոյն մասին, այլ այն օգոստոսի 20-էն սկսեալ բազումք տեղերէն շարժեցան: Բազումք ևս 1778 թուոյ գարնանամտէն սկսան շարժիլ. իսկ մեծագոյն մասն նոյն տարւոյ Լուսաւորչի տօնէն յետ, երբ ազգային ժողովով հաստատած բազմատորագիր նամականին ուղարկվեցաւ զէպի մայրաքաղաքն ռուսաց, և այս յուղի անկանելոյ վերջն եղև զեկտեմբերի 9:

Հայոց Խրիմու երկրէն ելանելոյ ճանապարհներն երկու էին, մի՝ Օր գափու կոչեցեալ զոնէն, և միւսն՝ Ճինիչքէ ասած ցամաքալեզուէն, նշանակեալ տեղեր ունէին, ուր պիտի առաջին գնացողներն՝ հետևորդ եկողներուն սպասէին: Երամ երամ կերթային կարաւաններով: Ազգապետ աղաներն նախագուշակ լինելով՝ որ թաթարներն կարող են իւրեանց փաստիլ, խնդրիլ էին ռուսաց սպարապետէն, որ զինուորներ տայ ուղեկից, որք ճանապարհորդակից էին գաղթականաց մինչև այն տեղն, ուր պիտի երկու կողմէն ելեալքն միաւորվէին:

Եկաւ հասաւ իւր բանաւոր հօտին և հովուապետն բարի՛ սրբազան առաջնորդն Պետրոս: Ազգապետներն ազգահամար արարին իմացան, որ երեքհազար և հինգհարիւր գերդաստանէն աւելի

էին: Առաջնորդի խորհրդով Կողպէթիեան աղա Միքայէլին յանձնեցին լիակատար իշխանութիւն, որ լինի կառավարիչ այն գաղթականաց մեծ գերդաստանին անկողար իշխանութեամբ: Այնուհետև նորա անօրէնութեամբ ընտրուեցան իւրաքանչիւր քաղաքէն երկերկու, իսկ իւրաքանչիւր գիւղաքաղաքէն մի մի հոգաբարձուք, որ շաբաթն երկու անգամ կը ժողովէին առաջնորդի մօտ՝ հասարակաց պիտոյից համար խորհուրդ առնել: Անաի էր այնուհետև Պետերբուրգի պատգամաւորաց հետ նամակակցութիւնն, և նոցանէն եկած նամակներն՝ նոցա ամենեցուն համախումբ ժողովի մէջ կընթեռնուին: Այս հոգաբարձուաց ժողովն կարաւաններն բաժանեցին ըստ քաղաքաց քաղաքաց, և իւրաքանչիւր քաղաքի ժողովուրդքն ուրոյն ուրոյն բանակ կազմեցին, և իւրաքանչիւր քաղաքի եկեղեցեաց բազմութիւնն՝ առանձին առանձին կարաւան, և իւրաքանչիւր քահանայ իւր ծխոյ հետ անբաժին կերթայր, որ եթէ ճանապարհին կարիք ինչ պատահի՝ քահանան մերձ լինի:

Բոլոր եկեղեցեաց բեռներն, հազար և մի տաճարաց ծանրութիւնն յանձնուեցաւ առաջնորդին, որ դեռ ևս Խրիմէն ելանելոյ ժամանակն պատուէր էր տուել, որ քահանայք ծուլութիւն չանեն. ոչ առաւօտն առանց ժամերգութիւնն աւարտելոյ ճանապարհ ելանեն, և ոչ երեկոյին՝ հանգիստ առնելոյ ժամանակն մնան առանց ժամասացութեան. այս պատճառաւ առաջին օրէն սկսեալ, երբ առաջին երեկոյին բաց երկնքի տակ պիտի երեկոթս առնէին՝ լսուեցաւ թաթարաբնակ անապատների մէջ երեկոյեան աստուածային պաշտօնն, և այսպէս առաւօտ և երեկոյ անխափան կատարուեցաւ պաշտերի, ձորերի և այլ անմարգարնակ տեղերի մէջ կրօնական ծիսակատարութիւնն. ոչ անձրև, ոչ արև, ոչ ձիւն, ոչ մրրիկ, ոչ տապ և ոչ ցուրտ մարթացան ուրեք արգելումն տալ կամ խափան արկանել:

Քան զամենն առաջ ճանապարհին կերթային Քէֆէցիք, որոց առաջին կարաւանի մէջ էր և առաջնորդն՝ հանդերձ եկեղեցեաց զարդերովն և անհուն ձոխութեամբ: Մէկ սայլ քանի եզն լծած կտանէր Պարոն Լոյս նահատակի գերեզմանի քարն, որ Թէոդոսիոյս Աննայի և Յովակիմայ եկեղեցւոյ մէջէն էին առել և կասուէր Լուսաւորչի Քար, որովհետև Պարոն Լոյսի յիշատակն

Հուսաւորչի տօնին կը կատարէին, և այն քարի ներքոյ թաղուած նահատակի հոգեհանգիստն այն վիմի վերայ կը լինէր:

Երկրորդ կարաւանն էր Բահչէսարայացւոց. երրորդն էր՝ Ախմէշիթցւոց. չորր՝ Ախեարցւոց (Սևաստոպոլցւոց), հինգեր՝ Կէօզլեցւոց, վեցեր՝ Խարասուբաղարցւոց. եօթներ՝ Սուդաղեցւոց. ութերորդն՝ Օրցւոց. իններորդն՝ Էսկի Խրիմցւոց տասներ՝ Չալթըրցւոց. մետասաներորդն՝ Թոփտեցւոց. երկոտասաներորդն՝ Սալացւոց. և այլ գիւղացւոց և աւանաց բնակչաց, որոց անուանք, որովհետև քանի գիւղ միաւորվեցան և մի ժողովուրդ կազմեցին, այժմ իւրեանց յիշատակաց հետ ի միասին անկեալ են ի մոռացօնս: Եւ ինչպէս ամենքին ի միասին չելան ճանապարհ, նոյն էս և ամենեքին ի միասին հաշիւ չմտան և մատեան չգրուեցան. որովհետև ճանապարհին կուգային, կըխառնվէին նախնիաց կարաւանին հետ և մի կարաւան կը ձուլվէին և նոցա անուամբ կը կոչուէին: Բայց բազումք ևս վստահ լինելով մրդաներու բարեկամութեան՝ իսպառ չիլլան այն առաջին նուագին, յորոց երեկելի էին մահտեսի Յարութիւն աղա Խաթրանեան, Ստեփան աղա Յուսիկեան և այլք, որք զկնի երկուց ամաց եկան, և ոմանք բնաւ չեկան կամ այլ կողմեր ցրուեցան:

Թէպէտ այս մեծ գաղթականութեան կարաւանն, որ սկսել էր ելանել Խրիմէն 1777 ամի օգոստոսի վերջն, բայց ելանելոյ վերջն եղել էր 1778 դեկտ. 9, անգաղար առաջ երթալով միշտ տեղաշարժութեան մէջ էր, բայց գաղթականաց և նոցա պատգամաւորաց՝ որք կային ի մայրաքաղաքին Ս. Պետերբուրգ՝ նամակակցութիւնն անընդհատ կը շարունակէր, և գաղթականք՝ որքան առաջ կերթային, այնքան աւելի դառն լուրեր կ'ստանային պատգամաւորներէն, յորոց մին՝ աղա Յարութիւն Խալիպեան ի 1778 ամին վախճանեցաւ և թաղեցաւ անդ Ս. Պետերբուրգ:

Խրիմցի Հայոց գաղթականաց կարաւանն հազիւ թէ հասել էր ճանապարհի կէսն՝ մինչ ի փոքրիկ գետն Սամար, որ ժամանեց նոցա Ռուսաստանի ցրտասառոյց սաստիկ ձմեռն:

Է.

Անպատասպար բանակն այն ստիպուեցաւ անհնարին նեղութիւններ կրել յերեսաց ցրտոյն՝ ըստ ամենայնի բացօթեայ լինելով, և անտառազուրկ անապատի մէջ փայտի և վառելիաց կարօտութիւն կրելով: Այստեղ առաջին անգամն լսուեցաւ այս սղորմելիաց իրաւացի գանգատն: Տաւրիկեան թերակղզին բնութեան տնօրէնութեամբ բաժանված էր յերկուս մասունս՝ հիւսիսային և հարաւային: Հիւսիսային մասն ծածկուած էր գիւղորէիւք, որոյ բնակիչք իւրեանց ապրուստ ունէին երկրագործութիւն և խաշնարածութիւն. իսկ հարաւային մասն լեռնաւէտ, և ըստ մեծի մասին ծովափնեայ, ծաղկեալ էր մեծամեծ քաղաքօք, որոց բնակիչք կապրէին այգեգործութեամբ և վաճառաշահուք: Բնակիչք գիւղորէից և աւանաց փայտի տեղ գործ կածէին աթար կամ քակոր, իսկ մեծամեծ քաղաքաց բնակիչք՝ առատ փայտ: Այժմ այս ձիւնապատ դաշտի մէջ ոչ փայտ կար, և ոչ դեղակ (քակոր) և սկսան տրտնջալ: Այստեղ յիշեցին Խրիմու լայնատարած անտառներն և նորա արժանագին փայտի բեռներն. միտքերն բերին այն ջերմիկ տներն՝ ուր այն սառնամանեաց ժամանակն պիտի ունենային սպահով պատասպարան: Ի՞նչ նեղութիւններով ցրտէն քարացեալ գետինն բրելով՝ իւրեանց համար գետնափոր բնակարաններ հնարել բռնադատեցան: Չանագան տարափոխիկ ախտեր առաջացան: Կային մէջերն բժիշկներ, յորս երեկելի էին երկու հէքիմ Գրիգոր անուն՝ մարդասէր և Աստուածասէր անձինք. մէկ հէքիմ Գրիգորի դուստր Հոփսիմէ անուն կայր և ցաւուրս մեր, որ նոյնպէս ի մարդասիրութենէ շարժեալ՝ ձրի բժշկութիւն անելով՝ կը ծառայէր համազգեաց. իսկ միւս հէքիմ Գրիգորի դուստր Խատըն անուն՝ հարսնացած էր Ալաճարեան Խաչերես աղային\*), որոյ թոռունք կան այժմ ևս: Գոյր և չերքեզահոյ բժիշկ մի հէքիմ Կարապետ կոչեալ, որ ունէր որդի Խաչատուր անուն: Այս բժիշկք երեքճազար և հինգհարիւր գերզաստանօք ծածկեալ սառնապատ դաշտավայրի մէջ՝ իւրեանց

\*) Խաչերես աղայի որդիքն էին՝ Սիմէօն, Աղեքսանդր և Մանուկ:

ձիերն խոնջիցնհլով, իւրեանց զեղարանն՝ իւրեանց ծոցի, գրպանի, պալուսակի մէջ ունենալով՝ կըհասանէին օգնութեան այն զառնացեալ ժողովրդեան, որ զոճ էին եղել տէր Կիրակոսի, Վեստ Սարգիսի և Վասակայ հարազատ զաւակաց: Բայց անողորմ մահը կուգայր և հայազգեաց գերեզմանատունն օրըստօրէ կըլայնանայր և կըմեծանայր\*):

Այս հանգամանաց մէջ ազգապետ աղաներն կըհաւաքուէին առաջնորդի տաղաւարն և արտասուօք կողբային այն կորուսեալ երջանկութիւնն, ինչ որ կարող էին ունենալ Խրիմ մնալով և Յովսէփայ քաջութեամբ և հզօր միջնորդութեամբ ստանալ ինքնակալ Կայսերուհւոյ ողորմութենէն: Խօսելով անգաղար այս առարկայի վերայ՝ նոցա սրտերի մէջ արծարծուեցան յոյսն՝ թէ դեռ ևս ամենայն ինչ կորած չէ, և հնար է յետ դառնալ Խրիմ և նոր ի նորոյ աղերս արկանել միջնորդութեամբ Յովսէփայ այս մտօք: Այսպիսի խորհուրդներով վառված՝ սկսան մէկզմէկ խրախուսել, որ երբ գարունն հասնի և ուղեգնացութեան հնարաւորութիւնն երևի, յետ դառնան դէպի Տաւրիկ: Ահա այս մտքով՝ պիտի առաջնորդն մի քանի անձանց հետ երթար, և Խրիմու մէջ՝ որոց հետ պէտք էր՝ թէ խանի, թէ մրզաներու և թէ ուսաց զօրապետաց հետ, խօսէր, և ապա գաղթականութիւնն սկսէր յետադարձի ճանապարհորդութիւնն:

Այս խորհուրդի գաղտնիքն իմացան ազգակործան աղաներն և հասուցին այնպիսի մարդոց ականջն, որ վատ էին քան զԽրիմու թաթարի մրզաներն, որոց մէջ քան զամէնն աւելի էին քսութեամբ Զա. Զ. և Գրիգոր Զ.: Սորա սկսան քարոզել ժողովրդեան մէջ, թէ այդ գործն չի ներիր Կայսերութիւնն, որովհետև գաղթականների շարժման համար շատ դրամք են դուրս եկել արքունական գանձարանէն: Ազգապետ աղաներն խոստացան ինքեանք այն դրամագլուխն հատուցանել, ինչդրեցին Դանիէլ ազա Քարաքաշիանէն և մահտեսի Եղիազար Բարասինեանէն, որ բաժանորդագրութիւն յօրինեն, և Պետրոս սրբազան ա-

\*) Գաղթականաց կրած տառապանքները լսելով՝ Յովսէփայ և պա. Արղութեան նոցա մխիթարութեան թուղթ գրեց 1779 յնվր. Դիւան 19: Հրտ.

առաջնորդն յանձն առաւ՝ որ առնու այն գանձարանի պարտուց դրամագլուխն և երթայ առ Յովսէփ, որոյ հետ տակաւին տեսութիւն անել ձեռնհասութիւն ունեցած չէր. և վստահ էր որ նա իւր միջնորդութեան աշխատութիւնն չխնայէ, այլ ազգապետա հակառակորդներն այդ ևս հնար գտան խափանել, պատճառ բերելով՝ թէ լաւ է որ առաջ ձիււոր աշխարհական պատգամատար երթայ և ազգի բազմաստորագիր նամակն տանի առ Յովսէփ, իբր թէ՝ առանց նրա տնօրէնութեան՝ գործոյ ձեռնամուխ եղած չհամարվին, որովհետև ուսաց հողի վերայ են:

Իմացան ազգապետ աղաներն, որ այդ ևս մի նոր խորամանկութեան որոգայթ էր՝ ժամանակ կորուսանելոյ և ժողովրդեան մէջ երկպառակութիւն սերմանելոյ դիտաւորութեամբ, և աղերսեցին առաջնորդին, որ իւր ձայնն լսելի առնէ: Քահանայապետական ձայնէն զօրացեալ՝ պատրասուեցան հրկոտասան երեւելիք՝ որ առաջնորդին հետ երթան ի դուռն Կայսերուհւոյն ուր կային արդէն Խրիմեցոց պատգամաւորք անպարան կապիալ, և վստահանալով Յովսէփայ օգնութեան սկսան բազմաստորագիր աղերս պատրաստել:

Ազգամատնիչ աղաներն իմանալով այս՝ իւրեանց մէջէն ինքնագլուխ մարդիկ ընտրեցին և նամակ գրեցին առ Յովսէփ և ամենայն ինչ բարեցցին Պետրոս սրբազանի ուսերուն վերայ, որպէս թէ նա է արգելող ժողովրդեան ճանապարհի և կամի բազմութիւնն պատառել և իւր համախոհների հետ վերադառնալ, և նամակն ուղարկեցին խալիֆախչի Գէորգ Շարոշնիքեանի հօր ձեռամբ:

Հասել էր մարտ ամիսն 1779 թուոյ: Գաղթականաց բանակն արդէն երկպառակութեան մէջ կըծփայր: Ոմանք կըսպասէին գարնանային նղանակին, որ ծիր առաջնորդի և ազգընտիր իշխանաց հանդէպ ճանապարհ բացուի, որ երթան ի դուռն Կայսերուհւոյն՝ տառապեալ ժողովրդեան համար այցելութիւն, ողորմութիւն հայցել. և ոմանք ակնապիշ կապասէին, թէ ինչ լուր կստանան Յովսէփայ մօտ ուղարկած պատգամաւորութենէն. և այս միջոց բոլոր բանակն կը պատրաստուէր տեղէն շարժիլ կամ յառաջ երթալոյ համար կամ յետս դառնալոյ. յանկարծակի լրսուեցաւ, որ սրբազան Պետրոս առաջնորդն վախճանել է: Անվա-

րատ սուգ պատեց ամենեցուն սիրտն և հոգին: Սա դեռ ևս երեկեան օրն այն խորհրդոյ վերայ էր, որ երթայ Ս. Պետրբուրգ և կրքաջալերէր ժողովրդեան տկարներն: Ուրախ, ազգի ապագայ երջանկութեան յուսով մանկացած՝ անակնկալ գտնվեցաւ իւր մահճաց մէջ անհարթչելի քնով նիրհած: Ինչ կասկածներ դուրս ամբարձին՝ ճանապարհի կէսն անտէր մնացած ժողովրդեան սրտից մէջ, լեզու չի պատմեր: Մերձ հարիւրամիայ հասակի, վաթսուն տարի ս. Էջմիածնի եպիսկոպոսին վիճակեցաւ, որ իւր ոսկերքն թողու Սամար գետի անմարդաբնակ ավիներն\*):

Քահանայք թաղեցին իւրեանց Հովուապետն, կնքեցին և պատուեցին նորա գերեզմանն, որ պիտի յաւիտենական մոռացութեան մատնուէր: Միմիայն այս քահանայից բազմութեան մէջէն՝ տէր Յակոբ քահանայն, որոյ որդին տէր Թադէոսն յետ ժամանակաց էր ս. Թէոդորոս եկեղեցւոյ միաբան, չէ յայտ թէ էր և ուստի՝ ստացաւ ժառանգութիւն քանի մի հօտ ոչխարաց՝ որ այն մերձակայ դաշտերն փարախ ունէին:

Ը.

Վերջապէս Խրիմցի հայազգի պատգամաւորաց յանդիման բացուեցան ամենայն դոճերն՝ որ ցայն վայր փակ էին: Ըստ ակնարկութեան Յովսէփայ արհւոյն՝ աղա Յովհաննէս Լազարեան, որ մեծարոյ էր յաչս երեկիաց տէրութեան, տարածեց իւր խնամքն այս խղճալի պատգամաւորաց վերայ. ի ներքուստ զըրուանի դուրս ելու յանուն հանգուցեալ Պետրոս վարդապետի Մարկոսեան գրեալ Կայսերական Հրովարտակն, որ իւր կայսրաբայական ձեռագրութ, դրոշմեց ինքնակալ թագուհին ի 1779 ամի

\*) Մեր հեղինակը Պետրոս սրբազանի մահուան թուականը գնում է 1779 թուի մարտ կամ մայիս ամսին. իսկ Յովսէփ սրբազանը նշանակում է 1779 յունուար. կարծում ենք որ երկուսն էլ սխալվում են. ի նկատի առնելով Կայսերուհու հրովարտակը, որ տրուած է Պետրոս սրբազանի անունով 1779 թուի նոյեմբ. 14-ին, պէտք է ընդունել, որ սրբազանն վախճանել է աւելի ուշ և հաւանօրէն Նախիջևանի մէջ 1780 թ. յունուար ամսին՝ զոհ գնալով ըստ աւանդութեան մի քահանայի կամ արեղայի չարութեան: Հրտ.

ի նոյեմբերի 14: Այս էր շնորհալ արտօնաբերն, որով կընդարձակուէր Խրիմցի հայերուն գնալ իւրեանց ընտրած տեղն՝ Դօն գետոյ ափին և բնակարկել: Յովսէփ արհւին Հրովարտակն պատգամաւորաց ձեռքն յանձնեց և պատգամաւորներն յուզի անկան գնալ գաղթականաց մօտ:

Այլ գաղթականք վաղ էին շարժել ի տեղւոջէ: Պատգամաւորք երբ տեսել են թէ բազմ սկսել է ժպտիլ նոցա, խկոյն գրել են գաղթականաց, որ այն մահաբեր Սամարի գետափունքէն ելնեն: Սորա ևս 1779 թուին, յունիսի սկիզբն, երբ գարնանային ձիւնհալներն անցան, ելան. եկան յուլիսին Կաթնագետի (Սիւթի) դաշտորայքն (ուր յետոյ շինուեցաւ Բերդեանսք քաղաքն) և ուրախացան, որ իւրեանց պատգամաւորներն այն տեղը չեն ընտրել: Եկան Վերափոխման օրը Մարիամպոլի տեղն, որ յունաց գաղթականքն էին ընտրել և ուր արդէն տօնավաճառ էին խմբել ի պատիւ այն Աստուածածնի պատկերին, որ՝ ըստ աւանդութեան հնոց՝ էր մի ի չորից պատկերաց, որ իբր թէ Դուկաս Աւետարանչի նկարածն են, որ հանել էին Բահչեսարայի Մարիամ կոչեալ վիմափոր մատուռէն. և ականատես լինելով նորա դրութեան՝ տեսան որ նորանէ զրկելոյ աղաքաւ մեծ զղջման պատճառ չունին:

Եկան նոյեմբեր ամսին Թագանրոգի բերդի մօտ, և տեսան, որ իւրեանց պատգամաւորներն սխալված չեն, որ այն տեղն արհամարհել են: Դեկտեմբերի սկիզբն հասան այն տեղն՝ որ նշանակվել էր հայոց նոր բնակութեան սահմանագլուխ: Չէին հաւատար Խրիմցի հայերն՝ թէ այն հողն, որոյ վերայ գրել են իւրեանց օտքն, իւրեանց սեպհականութիւն է: Լայնածաւալ Հայաստանն կորուսանող հայերն՝ մէկ բուն հողի համար ուրախութեան կողարներէն կեչանէին. այնքան նեղացած էին օտար երկիրներ պանդխտութիւն կրելէն: Չալթր գիւղի աղբիւրկ մօտ ընդ առաջ ել նոցա աւետաւոր հեծեալն, որ պատգամաւորներն էին ուղարկել. այստեղ իմացան, որ 1779 նոյեմբերի 14-ին Կայսրուհին հաստատել է նոցա պարզեագիրն և պատգամաւորքն ևս կուգան: Այս ուրախութեամբ յառաջ երթալով՝ վերջապէս եկան հասան ի դեկտ. 9 այն տեղ, ուր պիտի վերջանայր նոցա դժուարին ուղեգնացութիւնն և նոցա ականջէն դադրէր օրհատական

գնն գնն ձայնն\*) :

Քէֆէցիք՝ որոց կարաւանն քան զամենն առաջ կըքայլէր, առաջին անգամն իջան այն հարթայատակ տափարակալայրն՝ ուր յետոյ եղև Լուսաւորչի լայնարձակ սրահն և նորա հիւսիսային կողմի որգոստայն և մեծ վաճառանոցի հարաւակողման տարածասփիւռ շուկայն: Այնտեղ Քարաքաշեան Դանիէլ աղայն, Խոջայեան Թուճա աղայն, Տէր-Բարդուղիմէոսեան Թորոս աղայն, Տէր-Մարկոսեան մահտեսի Յովհաննէս աղայն և Բարասինեան մահտեսի Եղիազարն հանդիպելով իւրեանց ազգընտիր Կողպէթլեան Միքայէլ աղային՝ համբոյր տուին միմեանց և որոշեցին Աստուծոյ գոհութիւն և փառաբանութիւն տալ: Հաւաքուեցան Քէֆէի Հրեշտակապետաց, Աննայի և Յովակիմայ, ս. Մարգսի և այլ եկեղեցեաց քահանայք և սարկաւազունք՝ ծնծղաներով և ձեռաց զանգակներով, և այն զաշտի մէջ՝ ուր մինչև այն օրն Յիսուսի անունն չէր լսուած հայ բարբառով՝ սկսեցին գոհացողական թափոր կատարել: Կային աստուածաբան քահանայք, որոց մէջ հրեւիի էր տէր Մարտիրոս Քէֆէցի աւագ քահանայն, որ յետոյ եղև զարդ Համբարձման եկեղեցւոյ, և Աստուածաշունչ պատմութեան հմուտ աշխարհականք՝ Մանուկ Դերջանեան, մահտեսի Յարութիւն Արարատեան, մահտեսի Մանուկ Թուֆլիկեան և այլք:

Առաջին գոհացողական թափորէն յիտ՝ իւրաքանչիւր ազգապետ իւր տան քահանային և եկեղեցեաց սպասաւորաց հրաւէր արաւ իւր սեղանն: Թէպէտ ձմեռնամտի օրն եկան հասանալստեղ, բայց անտեսութեան քաջավարժ Խրիմցի հայազգի տիկնայք ձանադարհին ամբնայն ինչ խոհական մտածութեամբ էին պատրաստել՝ մանաւանդ Թագանրոզի բերդի և նորա արուար-

\*) Ժամանակակից մի յիշատակարան գրում է. Թվին 1227 ումն սեպտեմբերի գ-ումն Քէֆէյէն քօջիւանք, հոգտինպերի թ-ումն Սամար եկանք. թվին 1228-ին մայիսի առին Սամարէն մեզի հանեցին Եկատերինոսլավ տարին. չօլումն կեցանք 6 ամիս. և անկից այլ նոյեմբերի 1-ումն հանեցին բերին Ըւաստով զեկտեմբերի 1-ին և անդ նստանք մինչև 6-ամիս և յունիսի 1-ին Նախիջևան տուն առի, եկի իմ տունն. Տէր Աստուած անշարժ պահացէ: Ամէն: Հրտ.

ձանի մօտից անցնելոյ միջոցն: Դեռ թափորն չէր վերջացել, որ բանակի մէջ հրեւեցան շրջակայ գիւղորէից բնակիչք՝ որք ձուկն ձեռին, որք հաւեր ու վառիկներ:

Այստեղ զաշտի մէջ ի հեռուստ միայն քանի մի ձկնորսներ ի խրճիթներ կերեկին, որոց հրաման էր նոյն իսկ օրն այն տեղերէն հեռանալ: Խրիմցի գաղթական հայերն իւրեանց սայլերուն մէջն կամ տակն՝ ինչ ունէին սիոսեցին, և ինչով հնար գտան վրանաձև ծածկեցին և այն առաջին դիշերն անցուցին:

Զկնի զալստեան գաղթականաց համբաւ տարածուեցաւ, թէ հրեք պատգամաւորքն հասել են Թագանրոզ և այն տեղէն ձիաւոր են ուղարկել՝ որ ժողովրդեան աւետաւոր լինին Արտօնագիրն բերելոյն: Թնդաց բանակատեղն: Երկուամեայ պահուխտներն կըվերադառնան և կըբերեն իւրեանց հետ Մեծի Թագուհւոյ պառզակազիրն: Լծվեցան իսկոյն սայլերն և սկսան ընդառաջ վազիլ. քաղաքագլուխ Կողպէթլեանն Աբրահամեանի որդիքն գնացին ընդ առաջ պատգամաւորաց: Սոցա գալուստն լսել էին առաջ գիւղապիքն, որ քանի օր առաջ գնացել նստել էին իւրեանց տեղերն, և կըսպասէին որ պատգամաւորներն գան և իւրեանց հետ բերեն քաղաքի և գիւղորէից բնակարկութեան ծրագիրն. թէպէտ և գիտէին՝ որ այն հրկու գիւղն, որ Թագանրոզի բերդէն դէպի Դեմետրեայ Ռոստովացւոց բերդն ձանապարհի վերայ են, պիտի կոչվին, մին՝ Հին Խրիմ, և միւսն Հորթալանք, որովհետև նոցա բնակիչքն այդ անունն քաղաքէն և գիւղէն էին, բայց որովհետև մէջերն կային Չալթր և Թոփտի գիւղորէից տարր, չէին վստահ իւրեանց գեղերուն՝ իւրեանց կամեցած անունն կնքել, կասկած տանելով, որ գուցէ պատգամաւորներն այլ տունն խնդրած լինին:

Այս երկու գիւղացիք արդէն ընդ առաջ էին գնացել պատգամաւորաց և բերել էին իւրեանց բանակատեղն, ուր նստած էին այնպէս, որպէս և քաղաքացիքն՝ անուաւոր տուների մէջ՝ թաղիքներով և գորգերով ծածկուած: Սոցա պալոյ միւս օրն հասան և քաղաքացիք:

Խաթլամածեանց տաղաւարի մէջ պատգամաւորաց պատուոյն վայելուչ նախաճաշիկ կայր պատրաստած:

Զկնի նախաճաշիկին՝ երեք պատգամաւորքն բազմութեամբ

հասան բանակատեղն, որոյ արեւմտեան ծայրն կըսպասէին ժողովուրդը, բահանայք՝ ձեռներին խաչ կամ Աւետարան և սարկաւագունք:

Որովհետև Կայսերական Արտօնագիրն էր բերածն՝ Կողբէթլեանն Դեմետրիոյ մերձակայ բերդէն պահանջել էր գունդ մի զօրաց, որ զինուորական նուագարաններով կային ճանապարհի երկու կողմն, որոնք և հնչեցին, երբ պատգամաւորներն երկցան:

Այնուհետև բարձրաձայն կարգացուեցաւ Պարգևագիրն, որ է այս.

«Աստուածային արագանպատ ողորմութեամբ Մեք Եկատերինէ Երկրորդ Կայսրուհի Ինքնակալ Համակ Ռուսաց՝ Մոսկովի, Կիևի, Վլադիմիրայ, Նովգորոդի, Արքայուհի Խազանայ, Արքաուհի Աստրախանայ՝ Արքասուհի Սիբիրի, Թագուհի Պսկովայ և Մեծ Իշխանուհի Սմոլէնսքայ, Իշխանուհի Էստլանդիոյ, Լիֆլեանդիոյ, Կոնէլիոյ, Տվէռի, Իւզոտի, Պէրմի, Վիատկայի, Բուրյաքիոյ և այլոց, Թագուհի և Մեծ Իշխանուհի Նիզովեան Նովգորոդի, Չեռնիգովի, Ռեազանայ, Ռոստովի, Եառուսլաւայ, Բէլոզերսկայ, Ուղոսկայ, Օրգորսկայ, Կոնդրացոց, և բոլոր Հիւսիսային կողմանց հրամանահան և Թագուհի Իբերիոյ, Քարթալինիոյ և Վրաստանեայց թագաւորաց, և Խաբարթինեան աշխարհի, այլև Չերքէզեան և լեռնաբնակ իշխանաց և այլոց ժառանգաւոր Թագուհի և Տիրացետոյ, Ամենահաւատարմին Մերում Պետրոս վարդապետին Մամկոսեան և համակ բրիստոնեայ Հասարակութեան Հայոց Խորհուր, ըստ իւրաքանչիւր կոչմանց համայնից հանրապէս և անձնիւր անձին առանձին, բան Կայսերական ողորմութեան Մերոյ:

Աջն Բարձրելոյ օրհնեսցէ զբարենպատակ ձեռնարկ ձեր հասարակաց:

Չննեալ Մեր զմատուցեալն ի ձէնջ, ի Բահչէսարայէ ի 16 յուլիսի անցելոյ ամի զհիմնեալն յինքնայօժար բաղձանս հասարակացը հանուրց՝ յազատել զամենեսին զձեզ ի սպառնացեալ լծոյ և ի թշուառութեանց՝ ընդունելով ի մշտնջենաւոր հպատակութիւն Կայսերութեան Համակուսաց, Մեք համահաճիմք ոչ միայն ընդունել զձեզ զամենեսին յամենողորմ հովանի Մեր, և որպէս զամենասիրելի զաւակունս հանգուցեալ ընդ նովաւ, շնորհել ձեզ կեանս այնքան երջանիկս, ցոր քանակ տենչանաց մահ-

կանացուի և անընդհատ խնամարկութիւն Մեր կարեն տարածել, և զհետ ընթացեալ այդմիկ՝ բարեհաճիմք վայելել ձեզ ի Տէրութեան Մերում ոչ միայն զայն ամենայն իրաւունս և արտօնութիւնս, յորս ամենայն հպատակք Մեր ի Մէնջ և ի նախնեաց Մերոց ի վաղուց հետէ վայելն, այլ և բաց յայսմանէ Հրամայեցաք Մեք.

Նախ՝ յառաջակայ գաղթականութեան ձերում յԱզովեան զաւառապետութիւնն փոխադրել ի Խրիմայ Մերովք ծախիւք զայն ամենայն ստացուածս ձեր, որք միանգամ կարիցեն տեղափոխել, և որ արդէն ի Մէնջ նշանակեալ զբամազլխոջն ածեալ է ի կատարումն:

Երկրորդ՝ յաղագս յաջողակագոյն բնակարկութեան ձերոյ հատանել յԱզովեան զաւառապետութեան՝ որոշ ի բնակութեանց այլոց՝ զնողաբաժին ամբողջն ս. Դեմետրեայ Ռոստովացոյ, որպէս սահմանք նորա ընդ Դոնաւիսեան զօրաց հաստատեալ են, թողեալ անտի արօտատեղի դաշտագետին ի պէտս ամբողջն՝ երեք հազար կրկնօրավարաց. նոյնպէս և վասն ձկնորսութեան բնակչաց տեղոյն զչորրորդ մասն լայնութեան Դոնաւիս գետոյն, որով միանգամ քանակաւ գետն այն ի բաժնին այնորիկ շրջանակի գտանի՝ ի բերանոյ Թէմերնիկ գետակին դէպ ի վեր. իսկ եթէ ի բնակարկութիւն ձեզ ոչ բաւեսցէ այն երկիր, և ի շրջանակին բերդին Ազովայ յանդիման այնոցիկ հողաբաժնից ձեզ Ամենաողորմ շնորհեմք զձկնորսութիւնն՝ յօգուտ ի շահ համայն հասարակութեան առանց իրիք հարկաց ի գանձարան Մեր:

Երրորդ՝ յետ բաժանման ի դասակարգս բնակչաց Տէրութեան՝ Ամենաողորմ զատեմք զամենեսին ի հայկաց և ի պաշտօնավար. Տէրութեան զոր անուն միանգամ և ունիցին, յամս տասն. իսկ ընդ անցանել յայտրիկ ժամադրութեան ունին հատուցանել ի գանձարան Մեր ամբաստմէ վաճառականք ի գրամագլխոյ հարիւրաշահ մի՝ առ մէն մի ուրբլի. Համարուեստ նոյնպէս տեղացիք (մէշչանիք) յիւրաքանչիւր տանէ՝ երկերկու ուրբլի. իսկ գիւղականք՝ որք իսկապէս երկրագործ են, որոց օրինադրի առ իւրաքանչիւր ոգիս՝ երեսուն կրկնօրավար, առ իւրաքանչիւր կըրկնօրավար հողոյ ամբաստմէ հինգ հինգ կոպէկ. իսկ չքաւորք՝ ոչ միայն յառաջին ամն առնն պարէն ի գանձարանէ Մերմէ՝ ի լցուցումն կարօտութեանց իւրեանց, այլ նաև առ ի սերմա-

նել յերկիր զոր և իցէ տեսակս սերմնահատից հացի, զանասունս և զայլ ամենայն ինչ պատշաճեալ առ տնայինութիւնս, հատուցանելով զլինի տասն ամաց զայն ամենայն ի գանձարանն: Եւ առի ի պէտս շինութեանց տանց նոցա փայտք և այլ ատաղձք տացին ձրի ի գանձարանէ. իսկ որք ձուխքն հն՝ ունին իրաւունս ի վայրս անդ՝ որք վիճակաւ հասեալ իցեն նոցա՝ կառուցանել սունս, կրպակս, շտեմարանս, գործարանս և զամենայն, զոր ինչ միանգամ կամ իցին՝ ի սեպհական ստացուածոց իւրեանց, վայելեալ ամենեցուն ի մշտենջինաւորս զազատութիւն ի տնահարկաց, բաց յայնոցիկ դիպուածոց՝ յորս հարկ ի վերայ գումարտակաց զօրաց կայցէ անցանել ընդ բնակավայրս ձեր: Իսկ ի տալոյ զինուորս՝ մնալոց էք ազատ ի յաւիտեան, բայց եթէ ոք ինքնին ցանկասցի մտանել ի զօրս Մեր ի պաշտօնավարութիւնս:

Չորրորդ՝ Մարկոսեան Պետրոս վարդապետին ցվախձան կենաց իւրոց յանձնեմք զհովուութիւն այսոցիկ հայազգեաց բնաւից, որք ելեալ են ընդ նմա ի Խրիմայ և ընդարձակեմք նմա կառուցանել զեկեղեցիս և զանգակատունս՝ հանդերձ ազատութեամբ կատարել ի նոսին ըստ կրօնի իւրեանց զամենայն եկեղեցական ծէսս, և եղիցի վարդապետն այլ և ամենայն քահանայք հայոց ընդ իշխանութեամբ միակ Հայրապետին Հայոց, որ յԱրարատեան կաթուղիկոսանիստ վանսն:

Հինգերորդ՝ զլինի բնակարկելոյ զառանձնակ քաղաքն Նախիջևան անուանեալ առ սահմանակցութեամբ Պոլուտենկայ՝ տալով նմա տեղի խոտաճարակի երկոտասան հազար կրկնալծվարս զեանոյ, հրամայեմք յօրինել զՄագիրսարութ և ինմին կատարել զգատ և զիրաւարարութիւն ըստ ձերոց օրինաց և սովորութեանց, ի ձեռն ժողովրդապետաց՝ վիճակաւ ընտրելոց ի միջոյ ձերմէ, որք և ունին ստանալ զաստիճան և զոռճիկ՝ ըստ պաշտօնակարգութեան Ազովեան գաւառապետութեան՝ լինելով ընդ բողոքարկութեամբ Փոխարքայական վարչութեան. իսկ ի քաղաքի և ի գիւղորէս վասն պաշտպանութեան յոր և իցէ հարկաւոր դիպուածս՝ ունին կարգիլ առանձին աստիճանաւորք ի Ռուսաց, որք յիրաւատեսութիւնս այսոցիկ գաղթականաց բնաւ չեղեալ միջամուխ՝ լինիցին միայն պահապանք և պաշտպանեացն գնոսա: Այսու ամենայնիւ ընդ մտանել իւրաքանչիւր ուրուք ըստ իւրում ըն-

տրութեան յերանակ կենաց բնակչաց Տէրութեան՝ ընդարձակեմք վայելել յաւիտեան և ազգէ յազգ զայն ամենայն, զոր վայելեն որեիցէ դասակարգի բնակչաց Տէրութեան ըստ հանրական Օրինադրութեանց Մերոց, այսինքն ազատ վաճառաշահութեամբ թէ ի ներքս ի Տէրութեան, և թէ արտաքոյ այնորիկ. և վասն առաւել շահեկանութեան այնորիկ տուրևառի՝ ընդարձակել նոցա ի սեպհական ստացուածոց իւրեանց զառևտրական ծովագնացիկ նաւս, աճեցուցանել զհարկաւոր և զօգտաբեր գործարանս, և զմշակարանս, և զմրգաբեր պարտէզս և այգիս, և զլինի բարգաւաճելոյ այնորիկ՝ զորպիսի և իցէ գինի ի խաղողոյ՝ ի բնակավայրս ձեր մանրաբաշխիկ չափովք ի վաճառ մուծանել, իսկ զվաճառահանեալսն յերկրամիջեան քաղաքս Ռուսաստանի կարէք վաճառել տակաւոր: Այլ զՅրանսիական օղի կարէ մղել ամենայն ոք, բայց ոչ վաճառել յերկրամիջեայս Ռուսաստանի: Հակիրճ բանիւ՝ զամենայն ազգս շահեստից տարածել ըստ կամաց ձերոց և ըստ ձեռնհասութեան իւրաքանչիւր ուրուք և զայն վայելել ընդ Մերով ինքնակալութեան գաւազանաւ և պաշտպանութեամբ օրինաց: Զայս ամենայն արտօնութիւն շնորհելով հանդիսապէս և ազգէ յազգ ամենայն հասարակութեան ի յաւիտեանս ժամանակաց՝ Մեր վասն առաւելագոյն զօրութեան ինքնաձեռագիր ստորագրեցաք և հրամայեցաք հաստատել արքունական Մերով նշանադրոյժ կնքով: Տուաւ ի մայրաքաղաքն Մեր Սանկտպետրբուրգ յամի Ծննդեան Փրկչին 1779 ի 14 նոյեմբերի և յաթկատաներորդ ամի Մերոյ թագաւորութեան:

Նկատերինս.

Ընթերցումէն վերջը Պարգևագիրն բազմեցուցին առանձին տաղաւարի մէջ, որոյ վերայ կըծածանէք դրօշ՝ ուր խոշոր գրերով գրուած էր Նախիջևան. այս անունն ընտրած էր հանգ. Պետրոս եպիսկոպոս խորհրդակցութեամբ իշխանաց:

Թ.

Այնուհետև ամեն կողմն կերեւէր անօրինակ գործունէութիւն: Բազումք կըշրջագայէին բանակի մէջ բաց թողած փողոցանման տեղերն և իւրեանց ապագայ բնակարանի հիմնարկութեան վայրերն կզննէին: Այսպէս անցան 1780 թուականի ձմեռնային ամիս-

ները՝ յոգնած տառապած ժողովուրդը պատասպարուած մնաց սայ-  
լերում և կամ Պոլուսենկայի խրճիթներում: Երբ գարունն բաց-  
վեցաւ, ոմանք սկսան աներ շինել, այլք տեղացիներէն գնել, իւր-  
եանց բնակութեան յարմարել և իւրեանց առօրեայ անտեսու-  
թեան գործերով զբաղուել: Գիւղացիք ևս սկսան հնարաւորու-  
թեան չափով վարուցանքով պարապել:

Վերջապէս 1780 թուականի նոյեմբերի 2-ին Նախիջևանի  
հողն ոտք կոխեց Յովսէփ սրբազանն և մտաւ Նիավիթայ գիւղն\*):  
Բոլոր գիւղացիք լաց ու կոծով ընդ առաջ ելան և պատմեցին  
իւրեանց կրած տառապանքներն ու աղքատութիւնն: Նոյն տե-  
սարանն կրկնուեցաւ և Մեծ-Սալայ գիւղի մէջ: Սրբազանն հա-  
սաւ ապա Մարթին Թորոսեանի հովանոցն (այժմ ս. Սաչ վանքը),  
որ նա գնել էր մի ուսու կալուածաւէրէ և քանի մի ընտանիքով  
այնտեղ կրնակէր: Նոյեմբերի 4-ին չորեքշաբթի օր շինուելիք  
քաղաքի սահմանում վրան պատրաստուեցաւ եկեղեցական զար-  
դերով: Ներկայ էին բոլոր հայ հոգևորականք զգեստաւորած և  
շատ ուսու մեծամեծներ: Տառապած, զրկանքներ կրած հայ ժո-  
ղովուրդը արտասուքով գիմաւորեց իւր առաջնորդին: Սրբազանն  
Յովսէփ մեծ հանդիւսաւորութեամբ եկաւ հասաւ այն լայնատա-  
րած որդոստայն, որ թողել էին քաց որպէս կիզրոն: շարժական  
քաղաքի: Անդ սրբազանն սկսաւ երգել Նոր Միոն ծնեալ ման-  
կունք շարականն, գոհաբանական թափօր կատարեց և հոգեհան-  
գիստ հանգուցեալ Պետրոս սրբազանի և այն ամենայն ննջեցե-  
լոց համար, որ այն ապարախտ ճանապարհին իւրեանց կեանքն  
կնքել էին: Եկեղեցական թափօրն վերջացաւ Դեմետրեայ Ռոս-  
տովացւոյ բերդի փայտաշէն փոքր եկեղեցւոյ մէջ\*\*), ուր Սրբա-

\*) Այստեղ փոփոխութիւն մտցրինք. հեղինակի պատմա-  
ծովը Յովսէփ սրբազանը Նախիջևան է եկել 1779 թուի դեկտեմ-  
բերի 13-ին. մինչդեռ Սրբազանի Դաւթարից պարզ երևում է,  
որ նա այդ ժամանակներում այլ գործերով էր զբաղուած: Նա  
1780 թուի մարտի 10-ին գաղթականների առաջնորդ է կարգուել  
և Նախիջևան է եկել միմիայն 1780 թուի նոյեմբերի 4-ին: Նոյն  
թուականի դեկտեմբերի 13-ին գնացել է Չիրքասք և միւս օրը  
վերադարձել է: Հեղինակը երևի այս զէպքերը շփոթել է:

\*\*) Ռոստովի այս հին ս. Աստուածածնի եկեղեցին (Пок-  
ровская церковь) այժմ չկայ. այժմեան հին փայտաշէն եկեղե-  
ցին շինուած է 1784 թուին: Հրտ.

զանն մխիթարեց ժողովրդին՝ բնաբան առնելով Փրկչի խօսքը.  
«Այժմ արամութիւն ունիք և արտամութիւն ձեր յուրախութիւն  
եղիցի»: Վայելելով չայ կոմենդանտ Սիմէօն Գրիգորիչ Գուրեկ  
մօտ, Սրբազանն եկաւ Նախիջևան իրեն համար պատրաստած  
տաղաւարը:

Այնուհետև սրբազանն իւր ժողովրդի պէտքերով զբաղուե-  
ցաւ. ստացաւ հանգուցեալ Պետրոս առաջնորդի յանձնած Խրի-  
մու եկեղեցեաց ստացուածոց մեծ կարաւանն, որոց միջի ոսկե-  
ղէն և արծաթեղէն անօթք և ձեռագիր մատեաններն և Պետրոս  
սրբազանի սեպհական գրադարանն ոչ ցանկ ունէին և ոչ ցու-  
ցակ. և Յովսէփ արհին իւր ռգնականների ձեռքով պատրաստեց  
ոսկեղէն և արծաթեղէն անօթների, խաչերի, թանկազին զգեստ-  
ների և գորգերի և ձեռագրերի ցուցակ՝ նշանակելով թէ Խրիմու  
նր եկեղեցիէն ինչ է բերուած, որ ապագային երբ եկեղեցիքն  
շինուին՝ իւրաքանչիւրն իւրն ստանայ:

Իւր գալստենէն մի քանի օր վերջը՝ դեկտեմբեր 13-ին Յով-  
սէփ սրբազանն պ. Յովհաննէս Արբանամեանի հետ Չիրքասք  
գնաց և Դոնուախեան զօրաց զօրավարի հիւրասիրութիւնն վայ-  
ելեց, որ և խոստացաւ կատարել նորա մասնաւոր խնդիրը Նա-  
խիջևանի հիմնարկութեան առթիւ: Յովսէփ ձմեռն իւր ժողովրդի  
հետ անցուց:

1781 թուի յունուարի 6-ին մեծ հանդիսով Զրօրհնեաց տօ-  
նը կատարեց Դօնի վերայ և մի շաբաթ վերջը յունվար 13-ին  
Եկատերինոսլաւ գնաց իւր տառապած ժողովրդի պէտքերուն հա-  
մար: Վերագտնաւով այդ ճանապարհորդութենէն՝ սկսաւ Յոսէփ  
սրբազանն քաղաքն հիմնելոյ, եկեղեցիներ ու դատաստանատուն  
շինելոյ պատրաստութիւններ տեսնել: Համախումբ շրջագայեցան  
և շինուելիք եկեղեցեաց—ա. ս. Լուսաւորիչ, ս. Աստուածածին,  
ս. Համբարձում, ս. Գէորգ, ս. Հրեշտակապետք, ս. Յովհաննէս  
ս. Նիկողայոս և Թորոս—տեղերն ու նոցա գերեզմանավայրերն  
նշանակել\*):

\*) Այժմ ս. Թէոդորոսի և ս. Աստուածածնի գերեզմանները մէկ են.  
բայց քաղաքի սկզբնական տարիներից մինչև 40 թուերը ս. Աստուածածնի  
գերեզմանատունն առանձին էր, այժմեան 33-րդ գծի ծայրից դ'պ արևելք  
«Ազատ» գործարանի մօտեքքը: Յոսէփի ժամանակ ս. Կարապետ և Հրեշտա-  
կապետը եկեղեցիներն շինուցանւ Ս. Կարապետին յաակացուած տեղին վերայ  
այժմ արական գիմաղիրին շէնքն է գանձում (13-րդ գիծ № 52-30): Հրտ.



(Ես մինչ կայի ի Նախիջևան, հարցումքս քո ճով հետաքրքիր էր եղել իմանալ, թէ զինի հիմնարկութեան Նոր-Նախիջևանայ, սրբաբնի ոք էր առաջին ննջեցեալն և ոք թաղուեցաւ: Արարատեան Աստուածատուր աղայի և Ալաճալեանց Պաշտակարան աղայի յիշատակագրոց մէջ գրուած կային մանրամասնաբար, և երբ համեմատեցի տէր Մարտիրոսի Յիշատակարանի հետ, անսխալ գրտայ: Խրիմու հրկրէն գաղթեալ քահանայք ըստ մեծի մասին ունէին մի առանձին եկեղեցական յիշատակարան. ոմանց մատեանքն գրուած էին տակաւին Խրիմու քաղաքաց մէջ. Աստուածածնի եկեղեցւոյ մէջ էր այն յիշատակարանն, ուր գրուած էր Խրիմեցւոց երթալն յօգնութիւն Դաւիթ բէգի. ես այն նախ տեսայ տէր Յովհաննէսի տանն):

Երբ գերեզմանատանց կարգադրութիւնն վերջացաւ՝ Յովսէփ արքեպիսկոպոսն՝ աջակցութեամբ համախոհից՝ քաղաքագլուխ Կողբէթլեանի, Քարաքաշեանի, Սոջայեանի, Տէր-Բարդուղիմէոսեանի և Տէր-Մարկոսեանի սկսաւ Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ լայնածաւալ սրահի տեղը չափել, որովհետև նորա շրջապատն պիտի շինուէին վաճառականաց և արհեստաւորաց խանութներն ու կրպակներ:

Այլ քանզի յանուն Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ շինութիւն բազում տարիներու պիտի կարօտէր, սրբազանն Յովսէփ առաջադրեց, որ Լուսաւորչի սրահի հիւսիս-արևմտեան կողմն մի փայտակերտ եկեղեցի շինուի ժամանակաւոր, որոյ շինութեան ծախքն անձն առին աղա Դանիէլ Քարաքաշեանն, մահտեսի Թորոս Տէր-Բարդուղիմէոսեանն, որև կարգեցաւ երեսփոխան, և Միքայէլ Կողբէթլեանն:

Մինչև այդ շինութեան գլուխ գալը՝ ինքն Յովսէփ սրբազանն շինել էր մի փոքրիկ փայտաշէն եկեղեցի ս. Աստուածածնի անունով, որոյ օծումն կատարեց 1781 թուի ապրիլի 4-ին յս. Զատիկին: (Դաւթար եր. 5 և Կո. 589):

Վերջապէս աւագ եկեղեցւոյ սրահի շրջապատն կառուցանելի խանութներու աղագաւ սկսաւ խորհուրդ ի մէջ արկանել: Ազգասէր իշխանք առաջարկեցին, որ տեղերն գնահատեն և ապա վիճակաւ բաշխեն. իւրաքանչիւր ոք շինած կրպակի գինն հատուցանէ համաձայն գնահատութեան և մէջն նստի և առևտուր անէ

այնքան ժամանակ, մինչև վարձագիրն և դրամագլխոյ հարիւրաշահն (տոկոսը) վճարի և հաւասարի մտած դրամագլխոյն, և ապա կրպակն մնայ յօգուտ քաղաքին: Իշխանաց մէջէն նախ Յովհաննէս աղա Արրահամեանն չյօժարեցաւ այս օգտաւէտ խորհրդեան. և երբ Յովսէփ սկսաւ քաղաքի և հասարակութեան օգուտն պաշտպանել, նա յայտնեց իւր ունեցած ոխն: Արրահամեանն առաջարկեց, որ Լուսաւորչի սրահի հարաւային կողմն կանգնելի մեծ վաճառանոցն (պէղէսթէն) իւրեան թոյլ տան կառուցանել՝ խոտանալով կամ տեղն արծաթով գնել, կամ ամբաստմէ հողամասն հատուցանել քաղաքին. իւր համախոհներու սատարութեամբ Արրահամեանն հաստատեց իւր խորհուրդն. Հասարակութեանն շատ ինչ խոստացաւ, բայց ոչինչ չարաւ և վաճառանոցի տեղն ձրի գրավեցաւ:

Յովսէփայ վէրքն բժշկելոյ դիտաւորութեամբ՝ Լուսաւորչայ եկեղեցւոյ սրահի, ուր չորս դուռն էր նշանակած դէմ առ դէմ, հասարակութիւնն վճուեց, որ այն չորից դրանց աջ և ահեակ շինելի ութ խանութքն լինին եկեղեցւոյ սեպհականութիւն; որ նուաւ Լուսաւորչի եկեղեցին յաջողէ ունենալ մի վարժարան. բայց աղա Յովհաննէս Արրահամեանն վաճառանոցի ձևն ու չափը այնպէս գծագրել տուեց, որ նորա արևմտեան ծայրն կցուելով Արաստայ կոչեցեալ մաշկավաճառ կրպակակարգին՝ խափանեց հարաւային դուռն և երկու կրպակաց տեղն և այսպէս յայտնի բռնացաւ քաղաքի և հասարակութեան դէմ և ասիթ տուեց քաղաքամիջեան շփոթից. Յովսէփ երկայնամտութեամբ լսեց և թոյլ տուեց: Արրահամեանն փոխանակ Յովսէփայ սիրան շահելոյ՝ Պարգևագիրն մեծադիր դաստառակի վերայ ընդօրինակել տուեց և այնտեղ այնպէս պատկերացոյց, որ իբր թէ ինքն և Դանիէլ աղայ Քարաքաշեանն բարձեալ ունին Պարգևագիրն, իսկ Յովսէփ՝ որոյ միայն երեսն և վեղարն կերելն ամբոխի բազմութեան մէջ ի յետուստ՝ կրնայի ի հետուստ: Այս ինձ պատմեց նոյն իսկ նկարիչն Թէփինկիճի Մարտիրոս ծերունին:

Ժամանակաւ՝ երբ շինուեցան Լուսաւորչի շրջապատի խանութներն՝ արևելեան, հիւսիսային և արևմտեան դրանց յաջմէ և յահեկէ շինուած վեց խանութներն գրուեցան եկեղեցւոց սեպհականութիւն. և Յովսէփ կարգադրեց, որ այն վեց կրպակաց ար-

դիւնքն պիտոյանան քաղաքական վարժարանին: Բայց զկնի մա-  
հու Յովսէփայ 1814 թուին, երբ Լուսաւորչի աւագ եկեղեցոյ  
շինութիւնն յանձնուեցաւ մահտեսի Եղիազարի որդւոյն Պետրոս  
աղային՝ Պաղիրկեանպաշի մակտնուն, առանց գիտութեան առաջ-  
նորդի, որ այն ժամանակներն էր Յակոբեան Յովհաննէս արքե-  
պիսկոպոսն Գառնակերեան, այն խանութներն ևս վաճառուեցան,  
և այնպէս վարժատան յոյսն անցաւ որպէս ստուեր:

Ժ.

Հիմնարկութիւն Նոր-Նախիջևանայ, եկեղեցեաց  
և գիւղորէից.

Հասաւ 1781 թուի ապրիլի 21, երբ նշանակուած էր  
քաղաքի հիմնարկութեան հանդէսն: Յովսէփ սրբազանն այդ օր-  
ուան Կայսերական տօնին ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պա-  
տարադ մատոյց, օծեց Նոր-Նախիջևանի հիմանց չորս քարերը  
յանուն չորս Աւետարանչաց և բոլոր քահանայական դասին հետ  
դուրս գալով եկեղեցիէն՝ թագաւորական մաղթանք կատարեց և  
կարգաց Սիմէոն Կաթուղիկոսի շնորհաւորական թուղթը Նոր-Նա-  
խիջևանցոց: Այնուհետև եկեղեցական թափորն ամենայն բազ-  
մութեամբ առաջ շարժուեցաւ: Ի մեծարանս և ի պատիւ Յով-  
սէփայ՝ առանձին հրաւիրանօք երեսփոխան աղայ Թորոսի Տէր-  
Բարդուղիմէոսեանի եկաւ Դօնաւիսեան հեծելազօրաց զօրավարն  
հեծելազօրօք և զինուորական նուազարաններով. եկաւ և բերդա-  
կալ պահակն ամրոցին Դեմետրեայ Ռոստովացւոյ:

Հարիւր քսան քահանաներէ ու վարդապետներէ, քառասուն  
սարկաւազներէ և ութսուն ձայնաւոր դպիրներէ բաղկացեալ հո-  
գեորականաց դասն զնացին հիւսիսարևելեան անկիւն քաղաքին,  
որ էր մերձ Համբարձման դաշտային գերեզմանատան. այնտեղ  
սրբազանն օծեց յառաջագոյն պատրաստած վէմն յանուն ս. Մատ-  
թէոսի Աւետարանչի և գրեց առաջին վէմն անկեան: Որոտագին  
հրազինութիւնքն աւետեցին քաղաքի հիմնարկութիւնն:

Նոյն կարգաւ սկսան յարևելից յարևմուտս գալ մինչև այն  
տեղ, ուր պիտի լինէր քաղաքազուոն հիւսիսային, ուր անդաս-

Handwritten notes in blue ink, including the number '5448' and other illegible characters.

տան կատարելով՝ զնացին քաղաքի հիւսիսարևմտեան անկիւնն,  
որ է ընդ աջմէ Հրեշտակապետաց տաճարի տեղւոյն և Լուսաւոր-  
չի մեծ գերեզմանատան. անդ հաստատեցին անկիւնն յանուն ս.  
Աւետարանչին Մարկոսի: Անտի եկան դարձեալ նոյն փառա-  
զարդութեամբ զէպ արևմտեան քաղաքազուոն, ուր թափոր ա-  
րարին և սկսան երթալ զէպ հարաւարևմտեան անկիւնն, որ ան-  
կանի մերձ ի գետափն՝ ս. Կարապետի և ս. Նիկողայոս եկեղեց-  
եաց անուամբ նշանակեալ տեղեաց մերձաւորութեամբ: Աստ հաս-  
տատեցին վէմն յանուն ս. Աւետարանչին Դուկասու: Հարաւ ա-  
րևմտեան անկիւնէն վեր ելանելով՝ զնացին հարաւային քաղա-  
քազրան նշանակեալ տեղն և ապա զէպ ի հարաւ արևելից՝ ուր  
հաստատեցին վէմ յանուն ս. Աւետարանչին Յովհաննու:

Երբ կատարուեցաւ նորահիմն քաղաքի չորից անկեանց վի-  
մաց հաստատութիւնն՝ զնացին արևելեան քաղաքազուոն օրհնե-  
լու և նոյն հանդիսով դարձան զէպ ի կեդրոն քաղաքին:

Քաղաքի հիմնարկութիւնն կատարելէ վերջը՝ սրբազանն  
ձեռնարկեց եկեղեցեաց շինութեան: 1781 մայիսի 2-ին օծեց  
ս. Համբարձման և ս. Նիկողայոս եկեղեցեաց հիմնաքարերը և  
մեծ հանդիսով տանելով ս. Աստուածածին եկեղեցիէն՝ հաստա-  
տեց նշանակեալ տեղերն: Այս եկեղեցական հանդիսին ևս ներ-  
կայ էին բազմաթիւ ոռու մեծամեծք և Աբրահամեանն իւր ըն-  
դարձակ տաղաւարի մէջ ճաշ տուեց հրաւիրեալներին:

Քաղաքի հիմնարկութիւնէն վերջը Յովսէփ սրբազանն գիւ-  
ղորէից հիմնարկութիւնն կատարեց և եկեղեցեաց հիմն օրհնեց:  
Առաջին օրն Արհին կատարեց առաջին գիւղի հիմնարկութիւնն,  
և որովհետև այս գիւղի նոր բնակիչք էին ըստ մեծի մասին գաղ-  
թականք երկու գիւղերէ՝ Չալթըրէ և Հորթալանքէ, այս պատ-  
ճառաւ գիւղն սեփականեց երկու անուն՝ Չալթըր և Հորթալանք:  
Հին Հորթալանք գիւղն շինուած էր Խարասու քաղաքէն զէպի  
Հին Խրիմ ուղղեալ ձանսպարհի վերայ՝ Փրկիչ վանքէն չորս  
փարսախ (վերսթ) հեռաւորութեամբ, յորոց մին էր յանուն ս.  
Համբարձման Քրիստոսի. վասն որոյ և նոցա նոր հիմնարկելի  
եկեղեցին ևս Համբարձման անուամբ օրհնվեցաւ:

Երկրորդ գիւղն, որ հիմնարկեց և օրհնեց, էր Թոփաի, որոյ  
բնակիչք ևս էին հաւաքված Հին Խրիմու բնակչաց մէկ մաս-

նէն ու Թովտի գիւղէն: Այս Թովտի գիւղն էր շինած Խարասու-  
բազարի և Հին Խրիմու ճանապարհի վերայ և ունէր երկու եկե-  
ղեցի՝ մի յանուն ս. Սարգսի, և միւսն ս. Ուրբաթու կամ Պա-  
րաքերի կուսի: Այս գիւղը յիշատակարան ևս ունեցել է, որ զըր-  
ուած է եղել 1387 թուին. և այս յիշատակարանէն յայտնի է՝ որ  
այս Թովտի և Հորթալանք գիւղերն ժամանակակից են եղել իրե-  
րաց:

Երկրորդ օրն գնաց սրբազան Յովսէփ երրորդ գիւղատեղին,  
որոյ գաղթական նոր բնակիչք նախ և առաջ շատ գիւղերէ հա-  
ւաքուել էին Խրիմու Սալայ գիւղն, որ միասին յուղի անկանին  
և այսպէս միով անուամբ նոցա կարւաւանի բազմութիւնն կոչ-  
ուել էին Սալացիք: Այս Սալա գիւղն էր Թովտիէն դէպի Սու-  
դազ երթալոյ ճանապարհի վերայ: Սոցա բնակիչք ևս էին Անե-  
ցիք և 1340—1350 թուականաց միջոցին Հորթալանքի բնակչաց  
նման Ախսարայէն գաղթել էին և իւրեանց համար այստեղ հիմ-  
նել էին բնակարան: Խրիմէն ելանելոյ ժամանակն կամեցան եր-  
կու գիւղ կազմել. վասնորոյ և գաղթականաց մեծ կէսն ասվե-  
ցաւ Մեծ Սալացիք, և նուազ կէսն՝ Փոքր Սալացիք: Մեծ Սալա-  
ցիք իւրեանց ամայի թողած Աստուածածնի եկեղեցւոյ անուամբ  
դարձեալ Աստուածածին եկեղեցի ունեցան: Զկնի հիմնորհնու-  
թեանց Յովսէփ սրբազանն պատմեց նոցա տէր Բարդուղիմէոսի  
և տէր Մարկոսի ազգասիրութիւնն, ինչպէս Նախիջևանցւոց  
պատմել էր տէր Կիրակոսի անցքը և Բագրատունեաց թագա-  
ւորութեան անկումն: (Ինչ այս պատմել է նոցա ծերունի տ. Պետ-  
րոս քահանայն, որ ահանատես էր Յովսէփայ): Երկրորդ օրն գնա-  
ցին Նիսվիթայ և Փոքր Սալայի գիւղերն օրհնեցին. Նիսվիթայ  
գիւղի ս. Կարապետ եկեղեցւոյ օծումը կատարուեցաւ 1788 թ.  
օգոստոսի 13. մէկ օր առաջ օրհնուած էր քաղաքի ս. Աստուա-  
ծածին քարաշէն եկեղեցւոյ հիմքը: Այս եկեղեցին օծուեցաւ  
1794 թ. հոկտ. 20-ին:

Եւ այսպէս իւր հովուական պաշտօնն կատարեց սրբազան  
Արհին և քաղաք վերադարձաւ:

ԺԱ.

1780 թուի յունուարի 14-ին Խրիմի գաղթականներն հաս-  
տատուեցան իւրեանց ընտրած հողի վերայ և Նոր-Նախիջևան  
քաղաքն հիմնեցին. ահա այդ օրէն ոկիզքն արին արքայաշնորհ  
պարգևագիրն գործադրել և քաղաքագլխոյ ու մագիստրաթի դա-  
տաւորաց ընտրութեան համար բուէիւք վիճակ ձգել: Նոր-Նա-  
խիջևանցիք իմացան, որ Մագիստրաթի հինգ անդամոց մին՝ պի-  
տի շինուածապետութեան պաշտօն ունենայ. նա պիտի լինէր  
առաջիկայ, երբ վիճակաւ գետինն բաժանէին, որ ըստ թաթա-  
րաց լեզուի շուպաղայ ասուեցաւ, որ կնշանակէ վիճակ, որոյ  
երկայնութիւնն էր քսան գրկաչափ, և շայնութիւնն տասնեւերեք  
և կէս. կամ՝ վաթսուն և քառասուն կանգնաչափ: Նա պիտի վե-  
րահասու լինէր, որ իւրաքանչիւր կալուածատէր իւր տունն  
կանդէր իւր սեպհական տեղոյ վերայ, որ դրացեաց մէջ վէճ և  
տարաձայնութիւն չծագէ: Նա պիտի վերահասու լինէր, որ զրա-  
ցեաց տներն այնքան բացակայ լինեին յիրերաց, որ հրդեհի ժա-  
մանակն մին չլինէր զո՛ր միւսոց փորձութեան, որ շինու-  
թիւնքն լինէին ուղղագիծ:

Շինուածապետի պաշտօնն սահմանի մէջ դնելէն յետ՝ ընդ  
փոյթ իմացուեցաւ և ոստիկանութեան պիտոյքն. որ քաղաքի և  
բնակչաց անգորրութեան համար լաւ պահապանք ընտրվին: Մէկ  
ժիր և արթուն երիտասարդի յանձնուեցաւ ոստիկանութիւնն և  
նորա հրամանի ներքոյ հինգ ձիաւոր և հինգ հետեակ պահա-  
պաններ դրուեցան. հետեակներն բէշլի ասվեցան, իսկ ձիաւոր-  
քըն՝ աթլը խարաւուր: Սոցա պարտաւորութիւնն էր տիւ և գի-  
շեր շրջագայել քաղաքի մէջ և հսկել մաքրութեան, հրդեհէ պահ-  
պանել բնակչաց տներն և արքատաց խրճիթներն:

Առաջին ընտրութեան միաբերան քաղաքագլուխ ընտրուե-  
ցաւ աղայ Միքայէլ Կողբէթլեան, որ քաղաքի հիմնարկութենէն  
առաջ ևս կոչուած էր քաղաքագլուխ, երեքամեայ ժամանակաւ,  
որ է 1779, 1780 և 1781:

Քուէաբկութիւն կատարուեցաւ Մագիստրաթի հինգ դատա-  
ւորաց համար, և ընտրուեցաւ առաջին դատաւոր, այսինքն գա-

հերէց Մազիստրաթի կամ նախագահ դատաստանի\*)...

Երկրորդ դատաւոր կամ աթոռակից...

Երրորդ դատաւոր Ստեփան աղայ Փէհլիվանեան,

Չորրորդ դատաւոր...

Հինգերորդ դատաւոր...

Ատենադպիր Հայոց Ստեփան աղայ Փէհլիվանեան.

Ատենադպիր ուսաց՝ Տիմոֆէյ Նաուսմիչ Լիւպէնբոյ:

Այսպէս և ի հինգ զիւղօրէս:

Ներքին բարեկարգութեան հետ քաղաքաշինութիւնն ևս առաջ կերթայր. ճոխ քաղաքացիք՝ որ ըստ մեծի մասին էին ժողովրդականք ս. Նիկողայոսի եկեղեցւոյ բնիկ բնակիչք Խրիմու ծովափնեայ քաղաքաց, միաբանեալ ընդ Աբրահամեանի գուն գործեցին գետափին մօտ տեղեր ստանալ. իսկ աղքատք և չքաւորք մնացին մերձ Լուսաւորչի լայնածաւալ սրահին, թէպէտ և մեծ վաճառանոցն հանդերձեալ էր լինել անդ: Լուսաւորչի աւագ եկեղեցիէն դէպի հիւսիս էր ամայի անապատ: Վասն որոյ երբ զկնի երկուց ամաց (1783) Խաթրանօղլու Յարութիւն աղայն եկաւ, Հասարակութիւնն կամելով պատժել նորա կամակորութիւնն՝ որ միասին բազմութեան հետ գաղթական չէր եկել և Սամարի ու Նոր-Նախիջևանի երկուց ձմերանց նեղութիւններն չէր կրել՝ իբրև պատուհաս տուին նորան լայնածաւալ որգոտայի հանդէպն երկու վիճակ, որ պարսպատ առնելով ծանրութիւն կրէ. այլ աշխարհի փոփոխութիւնն այնպէս տնօրինկց՝ որ քաղաքն թողեց իւր սիրելի գետափունքն և սկսաւ գամ քան զգամ Լուսաւորչի սրահի հիւսիսակողմն շինութեամբ լցուցանել, այնպէս որ Խաթրանօղլու Յարութիւն աղայի տունն եղև կեդրոն քաղաքի: Առաջին պատճառն, որ քաղաքը գետափունքն թողեց, էր այն, որ ամառը գետափանց մոծակն էր անտանելի: Երկրորդ՝ ձկանց հոտն օդն կըծանրացնէր և շնչառութիւնն անհաճոյ կանէր: Երրորդ՝ ձմեռնային գիշեր մի աւագակը մէկ գերդաստան ինն հո-

\*) Հաւանօրէն՝ Յովհաննէս Աբրահամեան: Յովսէփ սրբազանն գրում է (Դիւան, եր. 45). Եկին (1781 սեպտ. 11) առ մեզ ի Նախիջևանցւոց արք երկու. դատաւոր կապիտան պարոն Յովհաննէան Աբրահամեան, որ զարդարողն և վաստակաւորն էր Նախիջևանայ և խնամատարն նորին որբոցն և այրեացն»:

զի խելզամահ կոտորեցին, որմէն մնաց մի որդի և մի հարսնացած դուստր. որդին էր բարեհամբաւ Նահապետ աղայն, իսկ հարսնացած դուստրն էր կին Լուսեղէն Քալմիքեանի՝ Յուստիանէ տիկին՝ կին իմաստուն:

Այս էր ահա պատճառ, որ Հայերն սկսան դէպի հիւսիսային դաշտակողմն ելանել. իսկ նոցա նախկին բնակութեանց տեղերն շինուեցան զանազան գործարաններ և մշակարաններ, որ նպատամատոյց եղև Գոնալիս գետոյ վերայ նաւագնացութեան դուրանալոյն, տուրևառին տարածուելոյն: Նոր-Նախիջևանայ վաճառականութիւնն ծաղկեցաւ և նա եղև որպէս մայրաքաղաք այս նորածագիկ կողմանց: Աղայ Յովհաննէս Աբրահամեանն շինեց յարկածածուկ պատուհանադարձ վաճառանոցն (պէղէսթէն). նորա կից շինուեցաւ Արաստան՝ կօշկակարաց և մուճակակարաց կրպակակարգն, որովք լցուեցաւ Լուսաւորչի սրահի հարաւակողմն\*). արևմտեան կողմն Օտարաշեան Գէորդ աղայն շինեց իւր և իւր ընկերակցի սանահօր Բարասինեան Սախաւ Դանիէլի կրպակաց կարգը մինչև Լուսաւորչի սրահի արևմտեան դուռը\*\*): Այս դռնէն դէպի հիւսիս շինուեցաւ կրպակակարգ, որոց կաւուածատեարք էին նոյն կրպակաց խանութպան մրգավաճառք, մինչև ի հիւսիսային անկիւն սրահին: Անտի մինչև ի հիւսիսային դուռն և մինչև յարևելեան անկիւնն շինուեցան կրպակք նպարավաճառաց\*\*\*). իսկ անտի մինչև արևելեան դուռն և մինչև ի մեծ վաճառանոցն շինուեցան կրպակք երկաթավաճառաց և դեղավաճառաց, որք կասվէին աթթարնոց\*\*\*\*):

Արևելեան և Արևմտեան կրպակակարպաց հանդէպ զուգահեռական գծի շինուեցաւ երկրորդ կարգ կրպակաց: Արևմտեանի մէջ էին գրակակարք, մուշտակակարք, հացավաճառք, խոհա-

\*) Այս շինութիւններն այժմ չկան. նոցա տեղ կանգնած են քաղաքային թատրոնը, իզական գիմնադիւան իրենց պարտէզներով:

\*\*\*) Այստեղ այժմ շինուած է Ակմբանոցի ամառնային շէնքը:

\*\*\*\*) Այժմ էլ անվոփոխ, միայն խանութները նորոգուած են:

\*\*\*\*\*) Հին կրպակակարգը մինչև այժմ էլ մնացել է և խանութներից մի քանիսը իրենց նախնական վիճակով:

նոցք և հիւսիսային անկեան սրճանոց աղայ Դանիէլի Քարաքաշեան: Իսկ արեւելակողմն՝ գինեատունք, կրպակք ընդավաճառաց և ամհնավաճառաց: Այս կրպակաց մէջ խառն նստած էին մորթեվաճառներ, դերձակներ, հիւսուներ, սափրիչք և այլք: Առանձին կրպակակարք ունէին սակերիչք, երկաթագործք, դարբինք, խաղախորդք, ժապաւինագործք, մետաքսագործք, ներկարարք, որմնադիրք, ատաղձագործք, ջրհորաշէնք, ծեփիչք, կրպակագործք, ժամագործք և այլք: Ազգք համարուեստից առաջին տարիներն կըհասանէին թուով մինչև յեօթանասուն և երկու տեսակս:

Նոր-Նախիջևանցիք յաջող առևարով շատ շահուեցան. բայց առանց իրիք հարկի սկսան մերձակայ քաղաքաց աչքերն բանալ. գնացին նոցա մէջ խանութներ բացին և նստեցան: Հեռուոր տեղեաց հարուստ կալուածատեարք՝ որ նոցա յաճախօքդն էին, սկսան նոցա պատճառաւ այն քաղաքներն ևս ճանաչել. և այսպէս սորքա իւրեանց առևտուրն մատնեցին ի ձեռս օտարաց:

Նախիջևանի առաջին տարիներէն իբրև առևտրական նշանաւոր եղան Կողպէթլեանք, յետոյ զինի սակաւ ժամանակի, աղա Պօղոս Յարութիւնեան Խաթրանօղլու, որ ի հարսնութիւն իւր հրաւիրեց մահտեսի Եղիազարի դուստրն՝ կին գեղեցիկ, պարկիշտ և պերճախօս. Պօղոս աղայի սեպհական նաւերն բացի Միստիս (Ազով) ծովու նաւահանգիստներն կանցանէին ի Կոստանդնուպօլիս, ի կղզիս Արշիպեղագոսի, ի ծովն Միջերկրեայ, ի Յունաստան, ի Գաղղիա և Իտալիա: Նոր ամուրհակք ամենայն տեղ ընդունելի էին որպէս թղթադրամք գանձարանի: Նա գնեց վերջապէս և Արրահամեան Յովհաննէս աղայի շինած վաճառանոցն\*):

Զինի նորա յառաջացաւ մի ի գործակատարաց նորա աղայ Մըկըր Յովակիմեան Պոպովեան, որ նոյնպէս տարածեց իւր առևտուրն յոյժ և յոյժ ընդարձակ ծաւալմամբ. բայց սա չունէր աղայ Պօղոսի արդարակորով բնաւորութիւնն և կսիրէր վէճ: Այս պատճառաւ կորոյս բազում ինչ, ընդ որս և հաւատարմութիւնն:

\*) Պօղոս աղայի ժառանգներից այս վաճառանոցը 1890 թ. քաղաքը փնեց, քանդեց և տեղը շինեց իգ. գլխաւորա, թատրոն և քաղաքային ուսումնարանը: Հրտ.

Մինչդեռ այս երեք վաճառական տուներն կըփայլէին, սկըսաւ երեւիլ խոհական Գէորդ աղա Օտարաշեան: Սա առաջին երեք վաճառական տան փաղփիւնն չունեցաւ, բայց սորտ արժանաւորութեանց համեմատ և պատիւն մեծ էր. չէր շատախօս Մըկըր աղայի նման, չէր լռակեաց Պօղոս աղայի նման, սակայն ունէր այն ձիրքն՝ որ ամենեքեան կապասէին նորա բերանէն ելած խօսքին. Հասարակութեան խորհուրդն նորա մի հատ այն կամ ոչ բառիւ կըվճռէր:

ԺԲ.

Առաջին տարին էր Նորն Նախիջևան եղէգնահիւս և տըղմածեփ, ցախաշէն. երկրորդ տարին երեւեցան նորա մէջ գեղեցիկ փայտաշէն և քարաշէն տներ, և քաղաքն սկսաւ զարդարուիլ գեղեցիկ շինուածովք: Առաջին մեծաշէն տունն վայելչակերտ, զինի մեծակառոյց վաճառանոցին, էր կրկնյարկ տունն աղա Յովհաննէս Արրահամեանի, որոյ ներքին յարկն էր քարաշէն, իսկ վերնայարկն փայտակերտ\*): Յետ ժամանակաց ելք Յովհաննէս Արրահամեան մեռաւ և որդիք նորա Մկրտիչ և Գրիգոր կամեցան բաժանիլ, Մկրտիչ աղայն առաւ փայտակերտ վերնայարկն և փոխադրեց իւր գիւղն, ուր և գերմանացի կին առնելով՝ ստացաւ չորս որդիք՝ Յովհաննէս, Եւգենիոս, Նիկողայոս և Լէոն և երկու դուստր՝ Մարիամ և Սոփիա: Իսկ Գրիգորն ստացաւ քարաշէն ներքնայարկն և երիցս ամուսնացաւ. նախ էառ ի հարսնութիւն Քարաքաշեան Դանիէլ աղայի դուստրն, ապա Սուլթանշահեան Լուսեղէն աղայի դուստրն, յորմէ ունեցաւ որդի մի Վիկտոր անուն, և յետոյ ստացաւ բազում դստերս, յորոց մին էր կին Մկրտիչ Մուրատեան Խոջայեանի:

Երկրորդ մեծաշէն փայտակերտ տունն էր բնակարան աղայ Դանիէլի Քարաքաշեան ի մերձակայս Լուսաւորչի, որ թէև արտաքուստ չունէր ինչ երեւիլ՝ բացի մեծութենէն, բայց ի ներքուստ ունէր ամենայն ինչ դիւրութիւն: Սա յառաջին կնո-

\*) Այս տունն իւր ընդարձակ պարտէզով, որ կըգտնուէր Դոնի ափին յետոյ սեփականութիւն դարձաւ Հայրապետեանց՝ 13-րդ գծից վար: Հրտ.

Ղեն ստացել էր մի ուստր և երեք զուստր: Իսկ յերկրորդէն ունեցաւ երկու ուստր և մի զուստր: Առաջին կնոջ որդին թորոս ժառանգեց իւր հօր բոլոր առաքինութիւնք և իւր ժառանգ թողոյց Դանիէլ թորոսեան: Իսկ երկրորդ կնոջ որդին էր անուանին Մանուէլ Բարաքաշեան, որ քանի ժամանակ վարեց Մագիստրաթի նախագահութիւնն անօրինակ կարգապահութեամբ:

Երրորդ տունն էր Կողբէթիւան Միքայէլ աղայի տունն\*) նոյնպէս Լուսաւորչի մերձ, որ իւր չորս կողմն հաւաքելով իւր կղբարց, հօրեղբորորդաց և եղբօր որդոց գերդաստաններն, գրաւել էր բովանդակ մի թաղ:

Չորրորդն էր մահտեսի Եղիազար Բարասինեանի տունն, որոյ անգրանիկ որդին Պետրոս աղայն առել էր ի կնութիւն լուսահոգի Պօղոս Սալիբեանի զուստր և իւր տունն կը զարգացուցանէր իւր աներորդին Յարութիւնն, որ երբ քանի մի ամիս աշակերտութիւն անելով Սերովբէ վարժապետին Պատկանեան՝ ուսաւ այն ժամանակի վաճառականաց բաւական գրել և կարգալ և զարգանալ, Պետրոս աղայն յանձնեց զքսանամեայ պատանին Յարութիւն՝ Օտարաշեան Գէորգ աղային՝ հանգերձ ամենայն դրամովք, ինչ զկնի վախճանի Պօղոս Սալիբեանի և կնոջ նորա և հարսնութեան երեց դստերաց նոցա մնացել էր և շահուել: Գէորգ աղայն նշմարելով Յարութիւն պատանւոյ աչալըջութիւնն՝ պահեց և զարգացոյց իւր գաւազան հետ և տունց նորան ի հարսնութիւն իւր միակ զուստրն Կատարինէն, յորմէ ունեցաւ երեք զուստր և մի ուստր Պօղոս անուն, որ վախճանեցաւ ի հասակի քսան ամաց ի 1839 ամի:

Հինգերորդն էր մահտեսի Աստուածատուր Լազարեանի տունն, յանդիման Մագիստրաթին\*\*): Սորա զուստրը Սրբուհին առեալ էր յիւր կնութիւն մահտեսի Յովհաննէս աղայ Մարկոսեանի որդի Մարկոս աղայն, որ յետ ժամանակաց եղև և քաղաքագլուխ և

\*) Այս հին տան տեղ այժմ շինուեցաւ պ. Քերովբէ Պուպովի աշխատանքի տունը:

\*\*) Հայոց Մագիստրաթի տեղը 1892 թուին շինուեցաւ ուսաց Ալեքսանդրոնևակի եկեղեցին. իսկ Լազարեանի տունը՝ այժմ պատկանում է Պլոտնիկեանց-Երիցփոխեանց:

որոյ երէց որդին Յովհաննէս չամուանացաւ, կրտսերն՝ Գասպար մեռաւ անդաւակ, իսկ միջինն Մկրտիչ եթող միայն մի որդի Կարապետ անուն (այժմ կենդանի\*):

Վեցերորդն էր տուն աղայ Յարութիւն Սաթրանեանի, զոր ընդարձակեց աղայ Պօղոսն և նորոգեց Գէորգ աղայ Սաթրանեանն: Թէ այս տներն և թէ սոցա նման շատերն շինուեցան քաղաքի մէջ առաջին և երկրորդ տարին. քարէհանքերն էին իւրեանց սեպհական, աւազն ձրի, կիրն իւրեանց հնոցների մէջ կայրէին և որմնագիրք ամենեքեան էին հայազգիք:

Բնականաբար հարուստներն իւրեանց դրամով շինեցին իւրեանց բնակարաններ, իսկ աղքատներն նպաստ ստացան տէրութեան գանձարանէն. այս նպաստով շինուած տներն միւրիկ տուն կը կոչվէին: Վերջապէս շատերը նախկին Պոլուզհննիկի բնակիչներու տներն գնեցին և իւրեանց պէտքին յարմարցուցին:

Ընդ փոյթ երևեցան ազգի ազգի մշակարանք և գործարանք. խաղախորդք (տապախ) սկսան հանել սեկ՝ որ ոչ թէ հաւասար էր արժանաւորութեամբ Սրիմու կաշեացն, այլ և կմըրցէր Եւրոպական մաշկաց դէմ: Գաղղիական օղի հանեցին, որ չէր ինչ նուազ քան իսկական օղին Գաղղիոյ:

Բայց քան զամենայն շինուածս քաղաքին փառաւոր եղև Յովհաննէս սրբազանի տունն, որ լայնածաւալ որգոստայի հիւսիսակողմն կգտնվէր և որ արքունական ապարանքի յարմարուեցաւ նոր յաւելուածներով՝ հրամանաւ Նորոյ Ռուսիոյ Հանրական գաւառապետի Պոտեոմքին իշխանի, ուր պիտի իջնանէր ինքնակալ թագուհին՝ մինչ կամէր երթալ այցելութիւն Տաւրիկեան թերակղզոյն, (1787 թ.) սրոյ խոնն Շահին Քիրէյ հրաժարվել էր թագաւորութենէն, միւրոյքն ընդունել էին Ռուսաստանի հպատակութիւնն և Օսմանեան Սուլթանն 1783 թուին յանձն էր առել, որ Սրիմու խանութիւնն միանայ Ռուսաստանի հետ: Այլ որովհետև թագուհին իւր ճանապարհորդութեան ժամանակն չմտաւ

\*) Յովհաննէս և Գասպար Պուպովեանք իրենց բոլոր կարողութիւնը կտակեցին Նախիջևան քաղաքին, որ ապա անցաւ Հայոց Եկեղեց. Հոգաբարձութեան ձեռքը, երբ սա 1884 թուին կազմակերպուեցաւ: Հրտ.

Նախիջևան, այն արքայական ապարանն (4 յնվր. 1794) վերադարձուեցաւ Յովսէփ արհուոյն, որ արեւելեան մասն արաւ առաջնորդարան և արեւմտեան մասն փոխեց ի դպրոց\*):

ԺԳ.

Նոր-Նախիջևան օր ըստօրէ կշինուէր, կզարգարուէր. և Յովսէփ՝ որ Ղուկասի ընտրութեամբ Հայրապետական Աթոռի ժառանգութիւնէն մնացել էր զուրկ, և այս պատճառաւ թուղթ իսկ հանել էր տէրութենէն, որ ատանց իւր միջնորդութեան ոչ մի հայ հոգևորական մուտք չունենայ ի Ռուսաստան, ազգի մի ամենափոքր մասի վերայ զարձոյց իւր սէրն ու խնամքն: 1783 թուականի յունուարէն նա Նախիջևանի մէջ էր և ապրիլի 23-ին նոր Կիւրակէին ս. Գէորգ եկեղեցւոյ հիմնարկութիւնն կատարոց. իսկ Հոգեգալստեան օրը յունիսի 4-ին՝ ս. Թորոս եկեղեցւոյ հիմնարկութիւնն: Նոյն թուականի օգոստոսի 27-ին օծեց ս. Համբարձման եկեղեցին, իսկ սեպտեմբերի 10-ին՝ ս. Նիկողայոս եկեղեցին: Նոյն թուականի սեպտեմբերի 9-ին հիմնարկեց ս. Լուսաւորիչ քարաշէն եկեղեցին, որոյ սեղանի տակ մասունքների հետ ամփոփեց նա հետեւեալ արձանագրութիւնն. «Շնորհօք ամենազօրին Աստուծոյ հիմնեցաւ ս. Լուսաւորիչ եկեղեցիս յամի մարդեղութեան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի 1783, և ի Հայոց՝ ՌՄԼԲ. թուին՝ սեպտեմբեր 9, ի տօնի Նիկիոյ սուրբ ժողովոյն 318 հայրապետացն ի բարեկենդան շաբաթ օրն սուրբ Սաշի. ի թագաւորութեան մեծի Եկատերինէ երկրորդ կայսերուհւոյն ամենայն Ռուստաց որ զազգս մեր ի Ղոբմու հանեալ ի թաթարաց, երբ յերկիրս Ռուստաց. ի գաւառս Ազովու, որ կոչի Ռաստով. յորում քաղաք շինեալ, անուանեցաք Նախիջևան. ըստ անուան քաղաքամօրն աշխարհի, և ի վեհագոյն ժառանգորդացն կայսերական մեծութեանց, մեծ իշխան Պաւլ Պետրովիչին և նորին զուգակից մեծ. դշխոյ Մարիա Ֆետրովիչին և զուսակաց նոցա մեծ իշխան Ալէքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պաւլո-

\*) Այս հին ապարանքի տեղն է այժմ Թեմական Դպրանոցի շէնքը՝ հասարակօրէն հին անունով խոնարհ կոչուած: Հրտ.

վիչին և մեծ դշխոյ Ալեքսանդրա Պաւլովիչին, և ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի տեառն Ղուկաս սրբազան Կաթողիկոսին ամենայն Հայոց: Ձեռամբ սուրբ աթոռոյն էջմիածնի ծայրագոյն նուիրակ Ռուստաց երկրի Հայոց առաջնորդ, և նոր քաղաքիս Նախիջևանու հիմնադիր՝ ի Քրիստոս հանգուցեալ Սիմէօն Կաթողիկոսի աշակերտ և Սանահնեցի երկայնաբազուկ Արղութեանց Ձումինց իշխան Շիօշբեգի որդի Յովսէփ արքեպիսկոպոս մեղապարտի. որ օծի զհիմունս քաղաքիս և եզի ի չորս կողմն սորին. և զհիմն սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյս, եզի ի չորս սնկիւնս սորին՝ երեք երեք քար. յանուն երկոտասան առաքելոցն Քրիստոսի. և ի ներքոյ սեղանոյն եզի զքարն օծեալ յանուն Փրկչին. ընդ նմին եզի և զբաղում մասունս սրբոց. բայց անյայտս վասն զի ի գալն ժողովրդեան մերոյ ի Սամար և ի Կատարինէսլաւ ընտկութիւնսն, անդ այրեցեալ էր բոլոր զգիստն և անօթն Դարասու կոչեցեալ քաղաքին. ուստի արձաթեայ պահարանք սրբոց մասանց հարեցեալք էին և նշխարք սրբոցն ամբողջ մնացեալ, սակայն մեզ անյայտ. բարւօք համարեցաք աստ ամփոփելն: Ըստ ամին օծաք և զհիմունս վանիցն, որ յանուն Փրկչին և սուրբ Սաշին. առյապայն հանդիպողքդ յիշեցէք զմեզ ծնողօք մերովք:

Ճիշդ այս ժամանակ փայտակերտ ս. Լուսաւորիչ ժամանակաւոր եկեղեցւոյ հիմքն ևս օրհնուեցաւ և ձեռնարկուեցաւ շինութեան: Շինելով եկեղեցիներ՝ սրբազանն ամէն մի եկեղեցւոյ տալիս էր իւր սեպհական անօթներն, որ գաղթականներն բերած էին Խրիմէն և որ այժմ կը գտնուէին սրբազանի ձեռքը: Մխիթարելով այսպիսի գործերով նորաբնակ ժողովրդին՝ Յովսէփ սրբազանն գնաց այցելութեան իւր թեմին:

Մինչև 1783 թուականն Նախիջևան քաղաքն հնթարկուած էր Ազովեան նահանգապետութեան. բայց այդ թուին Եկատերինոսլավի փոխարքայութիւնն հաստատուեցաւ, որ յանձնուեցաւ կնիսակ Պոտեօմքիւնին: Այս առթիւ հրատարակուեցաւ Կայսերուհւոյ Հրովարտակն (Հմբ 15700), յորում ի միջի այլոց ասուած էր. ի բնակարկեալ տեղիս Հայոց Մեք ընդարձակեմք ունիլ զՄագիստրաթ, ի պահպանութիւն որոյ իսկ առաքեսցի ամբաստամէ բացի զբամազումարաց որ ի պաշտօնակարգութեան է եղեալ,

զբաժին ի 4674 ուրբեաց, բայց Մագիստրաթին այնմիկ պարտ է լինել ընդ տեսութեամբ և ընդ բողոքարկութեամբ այնորիկ իրաւատեղեաց՝ որոց պատշաճին ըստ զօրութեան և իմաստից Մերոյ կարգադրութեան:

1784 յունվարի 22-ին արուած հրովարտակի մէջ ևս Կայսերունին պատուիրում է իշխան Պատեօմբինին՝ Հայոց Մագիստրաթին իւր շնորհած արածութիւններն պահպանել:

1785 թուին եղև նոր ընտրութիւն քաղաքագլխոյ և դատաւորաց. ադայ Միքայէլ Կողբէթլեանն երրորդ անգամ ընտրվեցաւ 1785, 1786 և 1787 թուականների համար: 1785 թուին սրբազանն Նախիջևան չէր, բայց 1786 թուի սկզբէն նա դարձեալ իւր սիրած քաղաքի մէջ էր և նորա հօգուերով զբաղած: Ի նկատի առնելով իւր ժողովրդի բազմապիսի պէտքերը՝ նա 1786 թուի սկզբները ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քահանայ Թիֆլիզեցի տէր Ստեփանին Հնդկաստան ուղարկեց ժողովարարութիւն անելու՝ եկեղեցիների և զպրոցի շինութեան և աղքատաց պէտքերի համար: Այդ թուի յունիսի 21-ին հիմնարկեց ս. Խոջ վանքը և կատարեց այնտեղ մի քանի այլ շինութիւններ: Վերջապէս նոյեմբերի 22-ին օծեց ս. Թորոս եկեղեցին:

Այդ ժամանակներն Նախիջևանի մէջ վերաշինուեցաւ նոյնպէս Յոսէփ սրբազանի տունը եկատերինա Կայսերունուն ընդունելու համար, որ մտադիր էր Խրիմ այցելութեան երթալ: Կայսերունին գնաց Խրիմ, բայց Նախիջևան մուտ չարար, այլ հեռուոր ձանապարհ ընտրեց որպէս երթալոյ, նոյնպէս և յետ դառնալոյ ժամանակն: Կայսերունւոյն ներկայանալու համար Յոսէփ սրբազանն 1787 թուի մայիսի սկիզբն Նախիջևան եկաւ և ապա փութաց մահատիս Աստուածատուր Լազարեանի հէտ Կրէմէնչուկ՝ ուր յունիսի 6-ին ներկայացան Կայսերունւոյն: Ապա մնաց այնտեղ իշխան Պատեօմկինի մօտ, և Նախիջևանի հասարակութեան կողմից խնդրեց, 1. որ նոցա շնորհուած հողի քանակն աւելանայ և արուի նոցա իրենց քաղաքի ու գիւղերի շրջական գտնուած գետինը, ինչպէս խոստացուած էր. և 2. Թոյլ տրուի եկատերինուսլաւ մնացած գողթական հայոց Խրիմ վերագտնուալ: Իշխանն խոստացաւ այս բոլորն կատարել և յանձնարարական գրով ուղարկեց Սրբազանին Խրիմ շրջագայելու. սեպտեմբերի 28-ից մինչև

չև նոյեմբերի 3-ը Յոսէփ սրբազանն շրջեցաւ Խրիմ. «Ձգալի եղև մեկ յոյժ, ասում է, տեսնելն զաւելութիւն քաղաքաց, եկեղեցեաց և վանորէիցն մերոց. դարձաք անտի լի տրամութեամբ ի Նախիջևան ի նոյեմբերի 24, քաղաքն ամենայն ընդ առաջ ելին զբողոքաւորաց արհեստաւորաց և ամենայն պատրաստութեամբ և մեծաւ փառաւորութեամբ ընկալան զմեզ ի ներս՝ հանդերձ հողերական հանդիսիւ»: Մի քանի օր վերջը՝ դեկտեմբերի 5-ին կատարեց ս. Գէորգ եկեղեցւոյ օծումն:

1785 թուին առաջին անգամ ամբողջ Ռուսաստանի մէջ Քաղաքային կանոնադրութիւն (Городовое положение) մտցուեցաւ և 1788 թուին առաջարկուեցաւ նաև Նախիջևանին, որ այդ կանոնադրութեամբ առաջնորդուի: Նախիջևանը կառավարվում էր Մագիստրաթով, այժմ այդ կանոնադրութեամբ քաղաքի անտեսութեան, զարգացման, բարեկարգութեան և այլ խնդիրներ առնուեցան նորա իշխանութիւնից և յանձնուեցան ընտրուած քաղաքագլխոյն և վեց անձանց:

Առաջին անգամ «վեցաձայն դում կամ խորհրդարան»\*) մտնում է Նախիջևան 1788 թուին և առաջին «զլաւայ» ընտրվում է 1788 1789 և 1790 թուերու համար Աբրահամիան Յովհաննէսն. ապա՝ Մանուէլ Մարթինեան Թորոսեան (որև Շահնարեան)՝ 1791, 1792 և 1793 տարիներու համար. ապա Միքայէլ Կողբէթլեան՝ 1794, 1795 և 1796 տարիներու համար: Բայց Նախիջևանի բարեկեցութեան, նորա անտեսական և մտաւոր յառաջադիմութեան գլխաւոր սատարիչ դարձեալ հանդիսանում է Յոսէփ սրբազանն, որ տիւ և գիշեր մտածում է նորա մասին և նորա պէտքերն դարմանում: Նա իրաւամբ պարծելով ասում է.

\*) Այսպէս է կոչվում Փառակեցի Պետրոսի որդի Մկրտչի Հաշուեմատեանի մէջ, որ սկսուած է 1755 թուին և աւարտած 1800 թուի մայիսին: Այստեղ կան պատմական և ժամանակագրական նշանակութիւն ունեցող շատ մանր տեղեկութիւններ: Նախիջևանցոց զաղթականութեան մասին նախընթաց էջերում բերուած ծանօթութիւնն այս տետրակից է առնուած: Պէտք է ասել, որ թէև մեր պատմիչը 1788 թուից առաջ էլ յիշատակում է քաղաքագլխոյն, բայց այդ էր իսկապէս Մագիստրաթի առաջին դատաւոր: Հրտ.



Այս ամենայն գործս, յորս ձեռնամխեալ եմք, եթէ մեօք և ի ժամանակի մերում ոչ յաջողեացի, զկնի մեր երկբայելի է. զի ոչ ոք է ի կարգակցացն մերոց ստանալոց՝ զայն պատիւն ազգի և հոգս նորա բառնալոյ ի յուսն, զոր մեք ստացաք և բարձար. վասն որոյ ես ցանկամ որչափ եմս կենդանի, հաստատուն հիմամբ կառուցից զպտուղ վաստակոց իմոց և աշխատանաց. ի յիրկիր պարարտ սերմանեցից՝ բարոք կարգադրութեամբ և օրինօք, սր զկնի մեր ի թռչնաման յաջորդաց և կարգաւորաց կեր չլինիցի և կամ ի վերայ աւագի չլինիցի հիմնեալ:

✕ Հիմնարկելով 1786 թուին ս. Սաչ վանքը, որոյ տեղը գաղթականներու հետ եկած Գեանջեցի Սիմէօն վարդապետի (†1781) փողով էլ զնուած Մարտիրոս (Մարթին) Թորոսեան Շահնարեանէն, որ և 1794 թուի յունիսի 13-ին թաղուեցաւ զանգաւկատան տակ, սրբազանն կամեցաւ այդ վանքը լուսաւորութեան կեդրոն դարձնել՝ հաստատելով անդ տպարան և դպրոց: Քանի մի կրօնաւորներ բերեց և բնակեցոյց անդ. և եկեղեցին օծեց 1792 թուականի նոյեմբերի 27-ին: Լսեց սրբազանն, թէ Զաքարիա պատրիարքի աշակերտեալ երկրտասան վարդապետներէն մին՝ Թաղէոս անուն Մարուգեան Կոստանդնուպօլսեցի՝ Քիթապիւտան մականունեալ՝ Վալաքիոյ կողմերն կըշրջագայի և ստացել է Հրաշաքարով անուն. ընդ նմին լսեց, թէ այդ հրաշաքարովն գինեսէր անձն է. նորա մարդկօրէն թերութեան պատճառաւ նորա ձիրքն չարհամարհեց և զԹաղէոս վարդապետն 1787 թուականի վերջերը հրաւերեց և մինչև ի վերջն պահպանեց այնպիսի խնամքով. որպէս կը վայելէր եկուցունց ևս:

Տեսնելով որ չյաջողեցաւ իրեն Ղուկաս Կաթուղիկոսի թոյլ տուութեամբ Նախիջևան տեղափոխել Ամստերդամի անդրժ հայ տպարանն՝ Յոսէփ սրբազանն 1788 թուի փետրուարի 2-ին Թաղէոս վարդապետին Պետերբուրգ ուղարկեց և գնեց հանգուց. Գրիգոր Սալգարեանցի տպարանն 12 հազար ռուբլիով՝ հատուցանելով փողի մի մասն՝ որքան կարողացաւ ժողովրդէն հաւաքել, իսկ մնացեալի համար Նախիջևանի Մագիստրաթի երաշխաւորութեամբ մուրհակ տուաւ աղայ Յովհաննէս Լազարեանին: Մըբազանի բոլոր յոյսն Հնդկաստանի հայոց առատաձեռնութեան վերայ էր: Տպարանն ս. Սաչ վանքի մէջ հաստատուեցաւ 1790 թ.,

ուր արդէն դպրոց կար և կուսուցուէր հայերէն և ռուսերէն: Հեռանալով առժամանակ Նախիջևանէն՝ նա կրկին եկաւ և օգոստոսի 13-ին օծեց Նիսովիթայ գիւղի ս. Կարապետ եկեղեցին, իսկ 14-ին՝ քաղաքի ս. Աստուածածին քարաշէն եկեղեցւոյ հիմքը և ապա կրկին հեռացաւ:

Հասաւ 1789 թուականն. լրացաւ Նախիջևանցւոց ազատութեան, ապահարկութեան տասնամեակն. և ահա յանկարծ եկատերինոսլաւեան Արքունական Պաշտէն հրաման եկաւ Նոր-Նախիջևանայ Մագիստրաթի անուամբ, որ զանձարանի պարտքն, որոյ գումարն հասել էր 178,094 ռուբլի, հատուցանին: Շփոթ և տարածայնութիւն ընկաւ քաղաքի մէջ. և այն մարդիկ որք կասեին, թէ սրբազանն մեր գործոց մէջ չխառնուի, այժմ (1789 մայիս) բոլոր հասարակութեամբ սրբազանի մօտ մարդուղարկեցին, որ իրենց օգնութեան հասունէ: Սրբազանն խնայեց իւր անմեղ գոտանց և 1789 թուականի մայիսի 20-ին մեծափառ հանդիսիւ մտաւ Նախիջևան: Ամէնքն միաբերան խնդրեցին, որ երթայ իշխան Պատեովկինի մօտ, և սրբազանն օգոստոսի 20-ին երեք պատգամաւորների՝ պարոն Մարտին Շահինեանի, Յակոբ Գեօղալօղլու և պոսպօսչիկ Պօղոս Սպանգովի\*) հետ գնաց Քիշնի, ուր այն ժամանակներն իշխանն գտնվում էր պատերազմի պատճառաւ: Սրբազանն ու պատգամաւորներն սիրով ընդունվում են. իշխանն յօժարում է Նախիջևանցւոց խնդրին կատարելու. աշխարհական պատգամաւորներն աստիճաններ ստացած վերադառնում են, իսկ սրբազանն մնում է այնտեղ և զբաղվում նոր գաղթական հայոց վիճակով և հիմնում է Գրիգորիոսով քաղաքը: Նախիջևանցոց խնդրի լուծուժը Յոսէփ սրբազանի ջանքերով լուծուժն է ստանում միայն 1794 օգոստոսի 28-ին, երբ հրատարակուեցաւ Կայսերուհւոյ առ Նոր-Նախիջևանցիս վերջին շնորհն, որ ի վերայ միջնորդագրի նորոյ Փոխարքայի կոմսին Զուբովի էր հիմնեալ ի չորրորդ պարբ. Զգալթեալսն ի Տաւրիկեան կողմնապետութենէ. . . զՀայս, յորոց վերայ հաշուին ապա-

\*) Փառակեցի Մկրտչի տեառակի մէջ սա կոչվում է «տեպուտատ որդի Պօղոս Էսպանտունց» որ Սալիպեանց հին ազգանունն է: Հրտ.

որիկը ց178094 ուրբխա, Մեր կամելով թեթևացուցանել զվիճակ նոցին, զնեկ հիմն երջանկութեան նոցին և այնու առնել զնոսա առաւել օգտաբերս անձանց և հայրենեաց, ազատ կացուցանեմք ի պահանջից ի գանձարանն Մեր համայն վերոյիշեալ գումարաց պարտուց. իսկ փոխանակ այնորիկ կամակցիւք պարաւանդել զիւրաքանչիւր որ ի նոցանէ ըստ ազգի կոչման իւրեանց՝ ի վերայ հիման Պարգևագրոյն շնորհելոյն նոցա՝ ի հարկատրութիւն, սկսեալ գհատուցումն նոցին յայս 1795 առաջակայ ամի՝ յառաջնոյ կիսոյնն:

Եւ որովհետև Գոնաւիսեան հեծելազօրք՝ օգտուելով Նախիջևանցոց ներքին գծաութիւնէն՝ Նախիջևան քաղաքի գիտնէն նշանաւոր մասն ինչ գրաւել էին, և թէպէտ Նախիջևանցոց բողոքի վերայ հրատարակուել էր 1793 ամի մայիսի 27 հրովարտակ, բայց մնացել էր անպտուղ, այժմ այս հոգոյ մասին ևս Սրբազանի խնդրով Հրովարտակի վերջն կցորդեալ էր. դ) Առ ի գոհ կացուցանել զհայս Նախիջևանցիս, փոխարէն բաժնին գետնոյ՝ որ ի հողաբաժնէ նոցին անցեալ կայ ի ձեռս Գոնաւիսեան հեծելազօրաց, հատանել ի պէտս Հայոց զխնդրեալն նոցին երկիր, որ կայ ի մէջ գետոցն Թուլլովի և Սամբէկի, և վարիլ համաձայն Հրովարտակի Մերում որ ի մայիսի 27 1793 ամի:

Երբ սրբազանն Գրիգորիոսով քաղաքի հիմնարկութեամբ զբաղած էր, անտի Նախիջևան ուղարկեց երեսուն որբ մանկունք, որք բնակեցան ա. Սաչի վանից մէջ, և որք հիմն պիտի լինէին Հնդկաստանցի Յոհաննան Յակոբ Գերաքեանի բացուելիք երկու դպրոցների: Յիշեցինք արդէն, որ Սրբազանն Յոսէփ գաղթականների պէտքերին համար Հնդկաստան նուիրակ ուղարկեց Ստեփան քահանային. բայց սորամէն ևս առաջ շրջաբերական թղթով Հնդկաստան էր ուղարկած իւր սիրելի Եային մականունեալ ա. Գրիգոր ա. քահանայն, որ զկնի տասն ամաց վերագարձաւ և բերեց իւր հետ Հնդկաստանի Հայոց արդիւնքն և յատկապէս այն գումարն, որ Գերաքեան Յոհաննան աղայն շնորհել էր որ Լուսաւորչի սրահում երկու դպրոցք կանգնուին՝ Դպրատուն և Ուսումնարան (Հոգևորական և Քաղաքական վարժարան), որոյ և յիշատակարանն՝ ըստ ապսպարանաց նուիրատուին, Յոսէփ սրբազանն փորագրել տուեց Պետերբուրգում և ուղարկեց

Նախիջևան. ինքն ևս սրբազանն Թագէոս վարդապետին շարագրել տուեց մի երկրորդ յիշատակարան և պատուիրեց, որ ըստ ժամանակին գետեղուին այն ուսումնարանի որմոց վերայ: Այս վարժարանն Յոսէփ չյաջողեց Լուսաւորչի եկեղեցւոյ սրահն կառուցանել. Արբահամեան դրդեց վաճառանոցի խանութպաններն՝ տրտունջ ամբառնալ, մանաւանդ կցանկային Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ շինութեան զկնի, փայտակերտ եկեղեցին ևս բառնալ այն սրահէն, ուր պիտի ըստ արքայահաստատ ձեւադրութեան միջին կրկակակարգքն ևս շինուէին: Այս պատճառաւ այն վարժատունն ևս տարաւ և ս. Սաչ վանից մէջ շինած ուսումնարանի հետ միացոյց և այս տախտակներն այն ուսումնարանի մէջ դետեղեց յորմունսն: Այլ երբ այն ուսումնարանն քաջութեամբ Ներսիսի հիմնայատակ եղև, տախտակքն մնացին. և ապա երբ աղա Պետրոս մահտեսի Եղիազարեան Բարասինեանն ձեռն մխեց Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ շինութեան, այն երկու տախտակքն զանգակատան ներքոյ ի հիւսիսոյ և ի հարաւոյ դէմ առ դէմ ի ներքուստ զետեղեց: Ահա յիշատակարանքն: Դպրատունս այս և ուսումնարանս կանգնեցաւ յանուն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, արդեամբ Զուղայեցի գերապայծառ իշխանի աղայ Յոհաննանի յանջնջելի յիշատակ իւրն և կենակցին հանգուցեալ Գուլիստանին, հօրն Քալանթար Յակոբին, մօրն՝ Մերբան (Մերջան) տիկնոջն, պապուն Քէրաք աղային, հանւոյն Թագուհի տիկնոջն և զստերացն և ամենայն ազգայնոցն: Յամի Փրկչին 1790:

Այս յիշատակարանի հանդէպն:

- Յօրինուած պայծառ յարկիս նորասքանչ,
- Արամեանց ծագեալ ջինջ արփւոյ ճաճանչ.
- Ուշիմ Յօհաննան իշխան քաջալանջ
- Բամին Քերաքեան պարձանք իսկաքանչ:
- Վեհափառ դպրոց գիտնոց ի կաճառ,
- Հաւատոյ ամբոց, շնորհաց վաճառ,
- Սուրեալ Հայկազնեայց հրաւիրման ճառ,
- Դասուց որբ մանկանց դայեակ անաչառ:

եկ յայս խրախոյս Ասքանագեան փունջ,  
Երջանկիս բաշխոյս ձօնել համաշունջ.  
Փողեա ի հոչակ հրճուանօք աննինջ  
Տինչալի վիճակ երախտեացս անջինջ:

Տանգլուխք յօգեն՝ Յովսէփ արհդէտ:

ԺԴ.

Որչափ և Յոսէփ սրբագանն աշխատում էր Նոր-Նախիջևան քաղաքի բարեկեցութեան համար, բայց և այնպէս նա հակառակօրդնր ունէր, որք ամէն կերպ կովում էին նորա դէմ: Հակառակութիւնն սկսաւ 1792 թուականներէն: Նոր-Նախիջևանցւոց և Յոսէփայ արհւոյ մէջ ծագած խռովութեանց շարաժոյթն էին մասամբ այն, որ Արհին կխառնվէր հասարակական գործերու մէջ, որով իշխանապէս մարդոց ղժգոհութիւնն առաջ կրերէր, և յատկապէս Արրահամեանի, որ կձգտէր անխախտ քաղաքագլուխ մնալ և նոյն իշխանութիւնն իւր երէց որդուն Մկրտչին տալ, իսկ կրասերին Գրիգորին՝ Մագիստրաթի նախագահութիւնն, բայց առաւելապէս եկեղ. ճոխութիւնքն էին, որք չէին վերադարձել յեկեղ. Ն.-Նախիջևանայ: Երկոտասան եկեղեցեաց մէջ՝ դիցուք թէ քառասուն և յիսուն եկեղեցեաց զարդքն զետեղեց, մնացեալքն մնացին: Լուսաւորչի մէջ զրին Լուսաւորչի բար սասցեալ վէմն. ս. Նիկողայոսի մէջ զրին Փրկիչ (կափարիչ) քարն. ս. Սաչի մէջ զրին Թաղէոսի օծեալ վէմն\*): Իւրաքանչիւր եկեղեցիք բաշխեցին ցուցակօք արծաթի խաչեր, արծաթապատ Աւետարաններ, սկիհներ, արծաթի աշտանակներ և բազում ինչ: Զգետք քահանայական բազում յոյժ և մի արկի՝ լի արծաթի անօթովք, յորս կայր և արծաթապատ Աւետարան Լէոն Բ. որդւոյ Հեթմոյ զրեալ ձեռամբ Կոստանդին Կաթուղիկոսի հանդերձ պատկերաւ Լէոնի, ի թուականին Քրիստոսի, և Հայոց ի Լուսաւորիչ: Բայց սրբան եպիսկոպոսական թագերու պատուական ակունք և գեղեցիկ մար-

\*) Թաղէոս առաքելոյ անուամբ կառուցեալ եկեղեցւոյ Քէֆէի սեղանոյ օծեալ վէմն:

զարիտք, եպիսկոպոսական գաւազանաց գլուխք ականակուռ, քահանայական սաղաւարտից խաչեր հազուագիւտ զոհարներով զարդարուած, ոսկեծոյլ խաչեր, արծաթի ծանրագին անօթներ՝ թագաւորաց, թագուհեաց, արքայազանց յիշատակ տրուած, որ ոչ ցանկ ունէին և ոչ ցուցակ, և մնացել էին Գրիգոր վարդապետի ձեռքը\*), որ հնարիւք փոխադրել էր յԱստրախան:

Յոսէփայ հակառակօրդք այս կորուսեալ վանձուց ցուցակն բազմադիմի աշխատութեամբ, հարց ու փորձ անելով ի քահանայից և յերեսփոխանաց և ի ծերունեաց ի գիր արձանացուցին: Այս ցուցակի պատճէնն բազմաստորագիր վկայութեամբք վաւերացուցեալ՝ հասուցին առ Ներսէս վարդապետն (Աշտարակեցի): Քաջ գիտէր Ներսէս, թէ ինչպէս պիտի շարադրել բողոքագիրն և և որով սկսել դատափետութիւնն. ոչ միայն նախարտակներն յօրինեց և այլոց ձեռամբ պարզագրած՝ հասոյց առ հակառակօրդս Յոսէփայ, այլ և ուսոյց թէ ուստի արժան է սկիզբն առնել: Ներսէսի շարադրած աղերսագիր մի ձեռագրեալ և կնքեալ ի բազմաց հասուցին ի ձեռս Յոսէփայ: Աղերսագրի իմաստն այս էր. Տեսնելով որ մեր եկեղեցեաց, և մեր հարց ու նախահարց նուիրաբերեալ ճոխութիւնն մտել է եկեղեցականաց՝ բազում ուրիշ անխոհեմ և կասկածելի անօրէնութիւն, մինչ մեր նոր վաղթականք ունին բիրատեսակ կարիք և կձանրանան ոմանց մեծատանց վերայ, որոց քրիստոնէական եղբայրսիրութեան և ընկերսիրութեան անընդհատ առատաձեռնութիւնն կսպառնայ տնանկութիւն և չքաւորութիւն, ևս առաւել նշմարելով, որ այն եկեղեցեաց գանձն զէպ յԱստրախան կերթայ, մեք յերես անկեալ կխնդրենք, որ մեզ հետ իրաւախոհ լինիս:

Յոսէփ նայեցաւ, որ այն բազմաստորագիր ցուցակի և նամակի տակն չկայր ոչ Քարաքաշեանց, ոչ մահտեսի Յովհաննէսի, ոչ Սոջայեանց, ոչ Տէվէճեանց և ոչ միոյ ծանօթի ձեռքն, այլ

\*) Այս Գրիգոր վարդապետ (այպ՝ եպիսկոպոս) Զաքարեանը Յոսէփի վերայ մեծ ազդեցութիւն ունէր, տակաւին սարկաւազութեան ժամանակ յաճախ լինում էր Նախիջևան. արեղայ դարձաւ 1790 թուին: Յոսէփի մահուանից յետոյ էլ հրկար տարիներ խռովութեան պատճառ եղաւ Հնդու ապրանքներն պարտրկածին համար: Հրտ.

հարիւրաւոր անուն գրած է մի գրչով. համ մատերով գաւա, որ գլխաւոր երեք գրիչ է խաղացել՝ Շահինեան խարայ Մանուէլի, Դերիջանեան Մանուկի և Մարթինեան տիրացու Գարրիէլի:

Յոսէփ հրախրեց քաղաքի իշխանաց բազմութիւնն և ասաց. Դուք եկեղեցեաց ճոխութեանց աղաղաւ զանգատ ունիք ինձմէն, ինչ իրաւունք ունիք. եկեղեցեաց ճոխութիւնն ևս պիտի պահեմ պահպանեմ, որովհետեւ եկեղեցեաց պահպանն ևս եմ. չունիք իրաւունք անօրինել այն. ևս եմ տնօրէնն. Ազոններն երբ այս խօսքերն լսեցին, սկսան մեղադրել և կշտամբել քաղաքագլուխ Միքայէլ աղայ Կողբէթիանին, թէ Յոսէփայ կողմն է. և նա պարզմտութեամբ ասաց. ճշմարիտ կոսէ Հասարակութիւնն, Հայր Սրբազան. ինչո՞ւ հետապ չես տար ինչո՞ւ չիս ցուցունուր, թէ անախրլտայ աէօլվէթը ուր խոթեցիր, մենք հետապ կուզինք: Երկար բանակուիւ արարին և Յոսէփ համբերութեան ծայրն հասնելով՝ ասաց. Դուք Աստուծոյ դատաստանէն չէք երկնչիք: Քաղաքագլուխն, Դերիջանեան Մանուկ, տիրացու Գարրիէլ, խարայ Մանուէլ այնպէս հասկացան, թէ սրբազանն անէծքով կուզէ վախցնել. Կողբէթիանն առաջ եկաւ և ասաց, վարդապետ, մեզ անէծքով կուզես վախցնել. ահա գրակս. թափէ անէծքը սորա մէջ, ևս գլուխս կզնիմ. ասաց և ամէնքն դուրս եկան նորա մօտէն: Դանիէլ Քարաքաշեան մարդիկ ժողովեց ճրեպիտան մահաեսի Թորոս Տէր-Բարդուղիմէոսեանի տունն, որ Նոցա հաշտեցնեն, բայց Յովհաննէս Աբրահամեան, Դերիջանեան և այլք ընդդէմ կեցան:

Մինչ այս մինչ այն քաղաքագլուխն հիւանդացաւ. Յոսէփայ թշնամիք համբաւ տարածեցին՝ թէ Յոսէփ անիծել է և նա հիւանդացել: Յոսէփ այցելութեան գնաց հիւանդին. Քարաքաշեան, Բաբասինեան, Յար. Խաթրանեան, Գասպար Սալթիբեան, Աստուածատուր Լազարեան և այլք ուրախացան: Սրբազանն Դեմետրեայ Ռոստովացւոյ բերդէն զինուորական բժիշկ բերել տուեց. բայց հիւանդն ծանրացաւ և վախճանեցաւ: Ինքն Յոսէփ պատարագամատոյց եղև, դամբանական խօսեցաւ և մինչև ի գերեզման հետիոտս տարաւ:

Չօրեկ էր Աբրահամեանն յոյժ յոյժ. և նորա զօրեկ լինելով, ազբիւրն իւր մեծակառոյց վաճառանոցն էր, որովհետև ամենայն

երեւելիք և նոցա որդիք նորա մէջ խանութ ունէին, ոմանք մի մի, ոմանք երկերկու. անհնար էր իւրեանց օգտի պատճառաւ չլինել նորա կամացն հպատակ: Մահաեսի Եղիազար աղայի որդւոյ Պետրոս աղայի՝ որ վաճառապետ էր (պազիրկեան պաշի) խանութն էր ժողովաակղի, և երբ հարկաւոր համարուէր աղերսագիր կօմ բողոք տալ, անդ կգրուէր թուղթն և անդ կձեռագրուէր: Կուգայր աղայ Յովհաննէս Աբրահամեանն, կնստէր գահագլուխ, կխօսէր, կհամոզէր և ինչ թուղթ կամենայր, ստորագրել կուտայր: Բազումք թէև հասու լինէին, որ օրինաւոր չէ, բայց ի պատի կամ յերկիւղէ Աբրահամեանի կձեռագրէին: Բազում անգամ թուղթն իւր տանն գրել կուտայր, մանաւանդ սուսերէնն, և թէ երկուց կամ երեց յանգիման ընթեանուին, քսանն և երեսունն առանց ընթերցման կստորագրէին: Նորա կամաց հլու հպատակ էր մագիստրաթի հայ ատենագարի օգնական՝ Սիմէօն Մարազեանն, որոյ որդիք՝ Ծերօն և Մկրտիչ յետ ժամանակաց ծագկեցան և գրագրութեան պաշտօնիւ ծառայեցին քաղաքին: Այսպէս քաղաքն կուսակցութեանց բաժնուեցաւ. ոմանք եղեն Յոսէփեան, և այլք Աբրահամեան\*) և այս աւելի զօրացաւ օտարաց միջամտութեամբ:

Նոր-Նախիջևանցիք Ներսէսի խրատներէն համոզուեցան առաջ գրիմել առ Ղուկաս Կաթողիկոսի պաշտպանութիւնն. և յետոյ՝ յորժամ առան, թէ Կաթողիկոսի միջամտութիւնն չազդեց ինչ, ըստ ուղղութեան Ներսէսի վարդապետի յօժարեցան իւրեանց վէճն փոխադրել յաշխարհական ատեան և վերջապէս բողոքել առ Կայսր: Այս միջոցներս վախճանեցաւ Կայսրուհին Եկատերինէ և բազմեցաւ ի գահ ժառանգորդն նորա Պօղոս (Պաւլ)

\*) Աբրահամեանի կուսակիցներէն մէկն էր ոմն Փանոսի Օնոփ, որ ունէր մի գեղեցիկ աղջիկ Տիրուհի անունով, որ ստէպ նրթեկերով Աբրահամեանց տունն՝ ընտելացել էր Ռուսաց կնիցաղավարութեան. կհագնէր ռուսաց ձեով, գլուխն կըպահէր բաց առանց ֆէսի և հայերէն բարև տուողին ռուսերէն կպատասխանէր և կախորժէր ռուս պատանեկաց հետ շրջել. Տիրուհի անունն ևս ռուսաց յարմարեցնելով թարգմանել էին Տարիա: Սորա հօր տունն կգանուէր ս. Համբարձման և ս. Թորոս եկեղեցեաց միջոցն: Այս անունէն ծագել է Տարիայի մահլա խօսքը:

առաջին ի 26 նոյեմբերի 1796 ամի. առ սա հասաւ նոր Նախիջկանցոց աղաղակն: Յոսէփ հակառակ իւր բարիսէր կամաց՝ ստիպուեցաւ իւր հիմնած քաղաքի մէջ կառուցանել իւր լուսափայլ համբաւոյն նսեմացուցիչ կոթող: Անարժան իւր բարկութեան համարելով տիրացու Գաբրիէլ Մարթինեանն, հանեց նորա անունն իւր պատասխանի մէջէն և միայն թողեց Մանուկ Դերիջանեանի անունն, որովհետեւ նա մինչև վերջն մնաց անզիջ. և դատապարտեցաւ յաքսորս ի Սիբիր: Նոր-Նախիջկանցիք անունն Երանելի կոչեցին: Յոսէփ քաղաքի գործերն յարգարելու համար գնաց ի Դուռն Կայսեր և ի 4 յուլիսի 1797 ամի հրովարտակ հանել տուեց, որ Նախիջկան քաղաքն կառավարուի այնպէս, որպէս կկառավարուին այլ քաղաքք, որք ունին առանձին իրաւունքներ. օրինակ զայս:

Հրովարտակ յատկանուն՝ հրատարակեալ ի ձեներալ պրուկուրորէ, յաղագս կառավարութեան քաղաքին Նախիջկանայ ըստ ւրինակի այլոց քաղաքաց, որք գտանին ի վերայ առանձին իրաւունց:

Նորին Կայսերական Մեծութիւնն բարեհաճեցաւ վեհագոյն հրամայել զկնի ի գննութիւն առնլոյ զշարժառիթս՝ յորոց ի պատճառս գտան խոչընդակութիւնք ի մուծանել ի քաղաքն Նախիջկան՝ յորում բնակեալ կան հայազգիք և եթ՝ ընկալիալք ի հպատակութիւն ոռւսաց՝ զքաղաքական գրութիւնն, և առնել կարգադրութիւն, համեմատ որում քաղաքս այս հանդերձեալ է կառավարիլ այնպէս, որպէս կառավարին այնոքիկ քաղաքք, որք ունին զառանձին իրաւունս և արտօնութիւնս, որպիսի են Նարվա քաղաքն և այլք:

Այս բոլոր զէպքերն կատարուեցան Կարապետ Սահակեան Ախխաշեանի\*) քաղաքագլխութեան ժամանակ (1797, 98 և 99 թուերին): Նախիջկանցիք վերջապէս դատակնիք յօրինեցին, որ աղայ Յովհաննէս Աբրահամեանն և իւր որդիք Հասարակութեան գոր-

\*) Մեր հեղինակն այս եռամեակի համար անձշտութեամբ քաղաքագլուխ է նշանակում Ծառուկ Փիլիբան Ծառուկեանցին, որի և հրիտասարգութեան ժամանակի պատմութիւնն է անում ընդարձակօրէն: Հրտ.

ծէն հեռու մնան իսպառ: Այս ժամանակ էր, որ Յոսէփի ջանիւք Նախիջկանցիք ստացան նաև հետեւեալ Կայսերական հրովարտակն:

Հրովարտակ յատկանունն տուեալ ծերակուտին

Յաղագս հաստատութեան իրաւունց և արտօնութեանց՝ զորս շնորհեալ էր Կայսրուհին Եկատերինէ Երկրորդ Նախիջկանայ Հայոց հասարակութեան: Զիրաւունս և զարտօնութիւնս զորս ի 1779 ամի շնորհեալ է Ամենասիրելի Մայրն Մեր երանաւէտ յիշատակի արժանացեալ Կայսրուհին Եկատերինա Բ, և պատկերացուցեալ է յԱմենողորմ պարգևագրի համայն հասարակութեան Հայոց Նախիջկանայ ի յաւիտեանս ժամանակաց, հաստատեմք: Պաւել 1799 յունվ. 4:

ԺԵ.

Վասն ութերորդ եռամեակի 1800, 01 և 02 ամաց քաղաքագլուխ ընտրուեցաւ աղայ Կարապետ Յովհաննիսեան Սագիզեան\*): Այս ժամանակ Յոսէփ արհին ընտրուեցաւ Կաթուղիկոս և 1800 թուին եկաւ ի Նախիջկան վերջին անգամ տեսանել իր գաստակերտն և ս. Սաչ վանքն: Երջագայեցաւ ամէն եկեղեցիք և վերջապէս Լուսաւորչի փայտեայ եկեղեցոյ մէջ վերջին պատարագն մատուցանելով՝ ձեռնադրեց զտէր Յակոբն, որգի մահտեսի Թորոս Տէր-Բարդուղիմէոսեանի և բարեաւմնա ասելով գարձաւ յԱստրախան:

Տեսանք, որ Յոսէփայ ջանիւք Պողոս կայսրն 1799 թ. յունվարի 4-ին Հրովարտակ շնորհեց. բայց նոյն տարին սեպտ. 13-ին մի այլ հրովարտակ ևս ելաւ, որով առաջին երկու հրովարտակաց գորութիւնն ըստ մասին կողարարւորվել էր: Այս նոր հրովարտակի մէջ գրուած էր, թէ այն առաջին Պարգևագրի և նորա կազդուրիչ հրովարտակաց ազատութիւնք չեն կարող գՆախիջկանայ բնակիչս ազատ կացուցանել այն հարկէն, որ պի-

\*) Մեր հեղինակը դնում է մի ընդարձակ պատմութիւն այս խազէզ Կարապետի կեանքից, որ պատմել են նորա որդին Յովհաննէս և տապալի Պողոս. բայց որովհետև այդ պատմութիւնը զուտ անձնական է, ուստի և զեղչեցինք:

տի տան ընդհանուր հպատակք տէրութեան թղթատար սուր հանդակաց ծախուց մասին: Ահա այն հրամանի պատճենն:

Յամի 1799. սեպտ. 13. հմր. 1915.

Հրովարտակ յատկանուն յայտնեալ Ծերակուտին ընդ ձեռն հանրական Պրովարտորի յազգաս ոչ տարածանելոյ գարտօնութիւնս շնորհեալս հայազգեաց Նախիջևանայ ի պահպանութիւն թղթատար սուրհանդակաց և յայլ հարկատրութիւնս հասարակաց:

Ի պատճառս տարածայնութեան՝ որ ծագեալ է յԱռաջնում Հատուածաբաժնի (Դէպարտամենտ) վարչապետական Ծերակուտիս, թէ արդեօք պարտին հայք Նախիջևանայ ի վերայ հողոյ իւրեանց կրել զսուրհանդակական ձիահարկն և զայլ ծանրութիւնս հասարակաց, Նորին Կայսրարքայական Մեծութիւնն Վահագրին հրամայել ինձ համահաճեցաւ, յայտնել զՎեհագոյն կաման, զի Ամենողորմ շնորհեալն Հայոց արտօնութիւնք ոչ կարեն սփռիլ և ի վերայ պահպանութեան սուրհանդականոցաց և այլոց հասարակական հարկարութեանց նոցին՝ որպէս ի վերայ այնպիսի երկրամիջեան անտեսական տրամադրութեանց՝ որք անշուշտ հարկաւոր են և նոցա և առանց որոց և նոյն ինքն Հասարակութիւնն ոչ կարէ կեալ և կալ:

Այս հրովարտակն մինչև հասաւ Եկատերինուրաւեան գաւառապետութիւնն և անտի ի Նախիջևան, արդէն Յուսէփ քնարեալն ի կաթողիկոսութիւն գնացել էր Աստրախան, և մինչ Նախիջևանցիք մարդ ուղարկեցին, նա ուղևորուել էր Տփլիս: Մինչև յուղարկած պատգամաւորն վերադարձաւ և Նախիջևանցիք աճապարեցին առաքել զօրք ի Տփլիս, Կաթողիկոսացուի վախճանելոյ դառն լուրն հասաւ (1801 մարտի 10):

Այստեղ նոր հասկացան Նախիջևանցիք, որ մնացել են որք: Ճիշտ միւսնայն թուականին և ամսին վախճանեցաւ նաև Պօղոս Կայսրն և նորա անդրանիկ որդին Աղեքսանդր գահ բարձրացաւ (12 մարտի 1801):

Ազգապետ աղաներն աճապարեցին Ն. Նախիջևանէն ուղարկել պատգամաւորներ Կայսեր. դուռն: Մկ. աղայ Նազիրեան և աղայ Կարապետ Սահակեան Ախխաշեան գնացին Մոսկվա. այստեղ

տեսնուեցան սոքա Եփրեմ եպիսկոպոսի հետ և սորա աշխատութեամբ ընդունեցին հետեալ Կայսերական հրովարտակն \*):

Աստուծոյ յաջողեցուցիչ ողորմութեամբ Մենք Աղեքսանդր Առաջին Կայսր և ինքնակալ ամենայն Ռուսաց, Մոսկվայի, Կիևի, Վլադիմիրու, Նովգովորդի, Արքայ Ղազանու, Արքայ Հաշտուրխանու. Արքայ Սիբիրիայի, Արքայ Խերսոնիսա—Տաւրիկայ, Թագաւոր Պոկովի և Մեծ Իշխան Սմոլէնսկեան, Լիտովեան, Վոլինեան, և Պոդոլեան. Իշխան Էսլանդիոյ, Լիֆլանդիոյ, Կուռլանդիոյ և Սեմիգալիոյ, Սամաղեցիոյ, Կորելայի, Տփլիսի, Իւզոտի, Պերմի, Վելատսկի, Բոլգարիայի և այլոց. Թագաւոր և Մեծ Իշխան Նիգովեան Նովո-Գորոդի, Չեռնիգովի, Ռեալանու Պոլցկի, Ռստտովի, Եարոսլաւի, Բելոդերսկի, Ուզոբսկի, Օբչորսկի, Կոնդրսկի, Վիտեպսկի, Մոսխալաու և բոլոր Հիւսիսային աշխարհին հրամայող և Թագաւոր Իրերական, Կարթալիեան, Վրացի և Կաբարդինեան երկրներին, Չերեքասեան և լեռնաբնակ իշխանների և այլոց ժառանգութեամբ թագաւոր և Տէր, Ժառանգ Նորվիգիոյ, Դուքս Շլիզվիլդ—Հոլսթեյնեան, Ստորմանեան, Դիտմարսինեան և Օլդենբուրգեան և Թագաւոր Եւերեան և այլոց և այլոց և այլոց:

Նոր Ռուսիոյ նահանգի Նախիջևան քաղաքի հայոց հասարակութիւնն իւր պատգամաւոր Կարապետ Սահակեանի և Մկրտիչ Նազիրեանի ձեռքով առեց Մեզ ամենահպատակագոյն խնդիրը նոցա իրաւունքներն և առանձնաշնորհութիւնքը, պարզեաճ ի Տէր հանդուցեալների թագաւորների. Մեր նախնիքներէ ձեռքով հաստատելու համար. և Մենք Գերագոյն ողորմութեամբ ընդունեալով այդ խնդիրը և ցոյց տալու համար Մեր մշտական բարեհաճութիւնը դէպի Նախիջևանի Հայոց հասարակութեան անյողդողդ հաւատարմութիւնը և ջերմեանդութիւնը, այն բոլոր իրաւունքներն և արտօնութիւնք. որ սեպհականուած էին այդ հասարակութեան և մինչև այժմ պահպանուած էին անփոփոխ, որքան ժամանակ զօքա համաձայն են Թագաւորութեան ընդհանուր օրինանադրութիւնների հետ բարի ձանաչեցինք հաստատել և մշտնջինաւոր ժամանակով հաւատարմացնել որպէս և այս Հրովարտա-

\*) Դիւում ենք Մ. Նալբանդեանի թարգմանութեամբ. տ. Գարբիէլը բերում է այս հրովարտակի միայն մի փոքր մասը:

կով հաստատում ենք և հաւատարմացնում ենք այդ իրաւունքների և առանձնաշնորհութիւնների զօրութիւնն և անձեռնամերձ լինելը որի հաւատարմութեան համար Մեր այս վերատին շնորհած պարգևութեան սեպհական ձեռքով ստորագրեցինք և ամբացնել նորան թագաւորական կնքով հրամայեցինք: Տրուած է Սանկտ պետերբուրգ քաղաքում հաղարութհարիւրերի թուականին Դեկտեմբերի 21-ին, Մեր թագաւորութեան երկրորդ տարումը: Բնագրի վերայ Նորին Կայսերական Մեծութեան սեպհական ձեռքով ստորագրուած է այսպէս:

Աւելցանդր.

Թագաւորական կանցլեր Կոմս Աւելցանդր Վորոնցով:

Մենք տեսնելով վերը, թէ 1799 թուի Սեպտեմբերի 13-ի Հրովարտեալ Նախիջևանցիք պիտի հատուցանէին թղթատար սուրհանդակաց համար հարկէ Բայց Նախիջևանցիք իրենց վայելած արտօնագրի հիման վերայ բողոքել էին այդ կարգադրութեան դէմ և Ծերակոյտն հրամայել էր (1802 թուի Նոյեմբերի 29) որ առժամանակ զկայ առնու այժ հարկադանձութիւնն: Բայց յետ հինգ ամսոց 1803 ամի Պետրոս Խաղիզեանի քաղաքագլխութեան ժամանակ (1803, 1804 և 1805) ել հրովարտակ յատկանուն, որ նախընթաց հրովարտակն 1799 ամի մտանէ ի գործադրութիւն, և պահպանութիւնն սուրհանդականոցոց կարգադրութիւն, և այսոց սեպհական հողի վերայ:

Նախիջևանցիք արդէն տարածել էին իրանց առևտուրն մերձաւոր և հեռաւոր տեղեր և բազում անգամ չէին խորութիւն անէր գիմնել ներքին և անհերելի վաճառաշահի՝ նման այլոց վաճառականաց և սկսել էին տուրևառիկ առնել գերեօք: Եկատերի-նուալուեան Գաւառապետն Նեկրովսքի ամբաստանագիր էր մատուցել այսու աղագաւ ի Ծերակոյտն՝ որ Նախիջևանցի հայազգի վաճառականք կամ փոխանակութեամբ վաճառաց, կամ այլով որ և իցէ եղանակաւ՝ Խոսքան գետոյ միւս երեսէն ձեռք բերելով գերեօք՝ իրենց սեփական իշխաններէն՝ երկաթի շղթայքն ընդ քարշ կրիւ տալով՝ կը վարեն դէպի Խրիմ և կը վաճառեն թաթարաց կամ այլոց կալուածատերանց: Յատկանուն հրովար-

տակաւ 1804 թ. Փետր. 9-ին (21246) հրաման տրուեցաւ Քերսոնեան Ռազմական դաւառապետին՝ այդ տուրևառն սաստիկ արգելու:

Խաղէլ Պետրոսի քաղաքագլխութեան վերջին տարին էր՝ 1805 թ. վրջերը, երբ Նախիջևան եկաւ Սերովբէ վարժապետ Պատկանեանն:

X ԺԶ

Ի վերջ 1805 ամի եղև ընտրութիւն քաղաքագլխոյ և դատաւորաց մագիստրատի և քաղաքագլուխ ընտրուեցաւ 1806-7-8 ամաց համար աղայ Խաչերես Հալաճեան:

Նախիջևանցիք արդէն լսել էին, թէ Ղզլարցիք կամեցել են իւրեանց զաւակաց դաստիարակութիւնն Պատկանեան Սերովբէին յանձնել, բայց Եփրեմ Արքեպիս. չէ թոյլ տուել պատճառ բերելով, թէ նա խոստացել է Ասարախանցոց՝ Սերովբէին վարժապետ կարգել այն Դպրոցի մէջ, որ պիտի բացուէր աղայ Նիկողայոս Աղաբաբեանի հաշուով: Երբ Նախիջևանցիք Սերովբէի երեսն տեսան, ժողովեցան Առաջնորդարան, որ էր խոնախի գահիճում և խնդրեցին առաջնորդէն, որ թոյլ տայ Սերովբէին մնալ ի Նախիջևան վարժապետական պաշտօն կատարելու՝ որոշելով նորա համար ոտձիկ և քաղաքէն վարձեալ բնակարան և վառելիք:

Այս միջոց մանկավարժութիւն կանէր Յովհաննէս սարկաւազ մի Կոստանդնուպոլսեցի՝ լու ձայնաւոր, և որովհետև նորա ներգաշնակութիւնն նման էր բնիկ Խրիմեցոց եկեղեցական եղանակին, որ Յովսէփ Արճուոյն ազգեցութեամբ էջմիածնի երաժշտութեան հպատակելով՝ կորուսել էր իւր նախկին ոճն. սա նորագի էր ըստ առաջնոյն, վասն որոյ և հին և նոր եկեղեցականց ոմանց սիրելի էր և ոմանց առելի: *այս քաղաքէն չեալ*

Եփրեմ պատասխանեց նոյնն, ինչ պատասխանել էր և Ղզլարցոց: Բայց Նախիջևանցիք իւրեանց խօսքն ընդունելի անելոյ աղագաւ՝ ուրացան Յովհաննէս վարժապետի երեքամեայ աշխատութիւնն և սկսան նորա վերայ զանազան արատիք գնել:

Այլ նորա արատիքն այն էր միայն, որ ինքն բացի ժամակարգութենէն և շարականէն և մեղեդիէն չգիտէր այլ ինչ:

Սակայն և այս նորա թերութիւնն սակաւք ոմանք գիտէին, զորօրինակ թուֆլիկեան Մանուկ և Մարտիրոս աղայք, Մահտէսի Յարութիւն Արարատեան, Ստեփան աղայ Փէշլուանեան, որ զօրով աշակերտ, ճանաչել էին, և եփրեմ համոզել կամելով իշխանաց բազմութիւնն՝ երբ կառաջադրէր շատանալ այնքան գիտութեամբ՝ որչափ ունէր Յովհաննէս վարժապետն, որոյ ծայրագոյն պաշտպանքն էին աղայ Յարութիւն Խաթրանեան, որոյ թոռն Գէորգ Պօղոսեան կուսանէր այբուբեն, և Թամանցի Յակոբն, որոյ որդիք Սարգիս և Գէորգ էին աշակերտք Յոհան վարժապետի և աղայ Պետրոս մշտեսի եղիազարեան Բարասինեանց, որոյ աներջ որդին՝ պատանին Յարութիւն Պօղոսեան Խալիբեանց կերթեկէր խոնախ ուսուցիչ անուոյ մասին, թուֆլիկեանք յառաջ գալով ասացին. Հայր Սրբազան, Յովհաննէս վարժապետէն շնորհակալ լինէք. ինչ գիտէ, լաւ կուսուցանէ, ըստ մեր որդիք եկեղեցական ելինելոյ չեն, պիտի վաճառականութեան ծառային. նոցա հարկաւոր է գրչութիւն, որ կարողանան նամակ գրել. հրաւէր ուղարկենք Յովհաննէս վարժապետին, որ գոյ և Ձեր Սրբազնութեան առջևն մի նամակ գրէ. եթէ այդ նամակն հաւանիք դուք, մենք յօժար ենք հրաժարիլ մեր պահանջէն և թոյլ տալ ձեզ, որ Սերովբէ Պատկանեանին տաք Աստրախանայ վարժապետութիւնն:

Ըստ հրամանին եփրեմի եկաւ Յովհաննէս վարժապետն և նա ինքնին խոստովանեցաւ՝ որ գրչութիւն բնաւ չգիտէ, և իւր անունն հազիւ կը կրնայ գրել. եփրեմ մնաց անպատասխան: Ձկնի բազմաշիմի վիճարանութեան, քաղաքագլուխ Խաչերես Հալաճեանն ասաց. Սուրբազան, եթէ դու մեր խօսքը ստքի տակ կընես, գիտցիր, որ Նախիջևան առաջնորդ լինելու չիս, շտէ Գրիգորը, շինտիս ձիաւոր կուզարկենք և հոս տաւէթ կանինք: Մէջ մտաւ մհտսի Մանուկ թուֆլիկեան և ասաց. հարցնինք, կը յօժարի՞ Սերովբէ Պատկանեանն մնալ Նախիջևան. այն մարդն ոչ Սրբազանի ստրուկն է և ոչ մեր արձաթագին ծառայն: Յօժարացաւ եփրեմ: Գնացին այն սենեակ՝ ուր Ս. Պատկանեան եփրեմի հարկաւոր նամակներն կգրէր: Թուֆլիկեան և Փէշլուանեան պատմեցին անցից որպիսութիւնն և աղաչեցին, որ յօժարի մնալ Նախիջևան: Սերովբէ Պատկանեանն յանձն առաւ Նախիջևանայ վարժապետութիւնն, բայց այս պրայմանաւ, որ

Յովհաննէս վարժապետն չմերժուի, այլ մնայ ճայնաւորի վարժապետ: Այս թէպէտ առ ժամն ընդունեցին Նախիջևանայ իշխանք, բայց յետ ժամանակաց ճանապարհ ցուցին Յովհաննէս վարժապետին՝ դառնալ ի Պոլիս: Այսպէս ի 1806 ամի, յամսեան սեպտեմբերեանց Խաչերես վանքէն հալածեալ վարժապետն ի փոխարէն կամեցան քաղաքի մէջ վարժատուն ունենալ: Բայց տեսնենք, թէ քանի տարի տևեց այն:

Աղայ Խաչերես Հալաճեանի քաղաքագլուխ լինելոյ ժամանակն մազիստրաթի գահերէց էր Խաչէզ Պետրոս Յովհաննէսեան, երկրորդ դատաւոր՝ մահտեսի Մանուկ թուֆլիկեան. երրորդ դատաւոր՝ Պօղոս Յարութիւնեան Խաթրանեան. չորրորդ դատաւոր՝ Կարապետ Խաչատրեան Արախանեան և հինգերորդ դատաւոր՝ Մկրտիչ Նազըրեան: Ռուսաց ատենադպիր էր Լիւբենքով. Հայոց ատենադպիր Փէշլուանեանց և քաղաքի ոստիկանութեան քաղաքակալ՝ Խաչերես աղա Մխիթարեան:

Սերովբէ Պատկանեանն մտանելով վարժապետական պաշտօն, խնդրեց՝ որ վարժատունն ունենայ Հասարակութեան կողմէն մի առանձին վերակացու՝ Տեսուչ անուամբ, որոյ պաշտօնն լինի գոնէ շաբաթը երկու անգամ գալ վարժատուն և տեսնել, թէ աշակերտք ինչպէս կուսանին, միշտ կուզան: Աղայ Մանուէլ Շահինեան (Սարայ Մանիէլ) ասաց. մենք վարժատունն քեզ կը յանձնենք. ինչպէս կամիս, նայէ. մենք չունինք այնպիսի մարդ, որ նորան կարնանք տնչութիւն յանձնել: Պատկանեանն կրկնեց. գոնէ ինձ ցուցակ տուէք, թէ ինչ պիտի ուսուցանեմ: Աչաքովքի Սիմէոնն պատասխանեց. Գիտցածդ պիտի ուսուցանես, Պատկանեանն դարձեալ ասաց. Օգուտ չի լինիր հասարակութեան եթէ ես այբքէն կամ հեզ սաղմոս ուսուցանեմ և ժամանակս նորայ վերայ ոչնչացնեմ. դուք պիտի ընտրէք այնպիսի տղայք, որ արդէն գրավարժ լինին և փոքր ի շատէ գրել իմանան, որ ես նոցա սկսեմ քերականութիւն ուսուցանել: Վերջապէս որոշուեցաւ Ստամպուլէն քերականութիւն բերել տալ, որ աղայք քիչմը աչք բանան:



ԺԷ

Սերովբէ վարժապետն մնաց Նախիջևան: Դէպի Լուսաւորչի մեծ սրբոստան կը նայէր Առաջնորդարանն, որ խոնախ կասուէր (այժմ Թեմական դպրանոցը): Այս խոնախ շինուածքն փայտակերտ էր ի միջավայրի. երկու անկիւնքն կային քարակերտ երկու տուն, որոյ արեւմտեան անկեան տունն հանդերձ տեղեւան զնիկ էր 1801 թուին Յովսէփայ մահէն յետ՝ խառնակութեան ժամանակն՝ Բայազետցի Կարապետ վարդապետէն, որ ս. Սաշի վանքին վանահայր էր և Նախիջևանայ յաջորդ, մահտեսի Յահաննիսի անդրանիկ որդին Մարկոս աղայն. իսկ արևելեան անկեան տունն կըրնակէր Եփրեմայ թարգման և զբազիր Յակոբն (Եակֆ Մինայիչ): Թարգման Յակոբայ բնակարանին ղէմուղէմ փողոցի միւս երեսին էր երեք պատուհանաւ մի կըկնայարկ տուն՝ սեփականութիւն մտտի Աղաբէգի, որոյ ներքնայարկն կը բնակէր Աղբիրմանցի տէր Յոհաննէս քահանայի այրին՝ մատաղամարդ երիցուհին Բահայը՝ երեք սրբովք՝ որք էին Վրթանէս, Սարգիս և Եղիսաբէթ: Այդ տունն, որ զկնի տասնէկէնգ ամաց եղև սեփականութիւն աղայ Յարութիւն Պողոսեան Սալիպեանի, դէպի փողոց եղեալ կէսն վարձեցաւ ի բնակութիւն Սերովբէ վարժապետին:

Սերովբէ վարժապետն ընդ փոյթ այն վարժարանի մէջ տարրացոյց այն կարգն թէ ուսումնատուութեան և թէ դաստիարակութեան, ինչ տեսել էր Ղաղարու վանքի կամ Թրիեստի զըպրոցի նախակրթական դասատան մէջ, երեք հարիւրէն աւելի աշակերտք կային՝ առ հասարակ բոլորտք, որ վերացոյց հէքիմ Կարապետով աշակերտաց մէջէն, և որովհետև նորա աղբիւրն ըստ մեծի մասին կեղտոտութիւնն էր, քաղցր վիպասանութիւններով ընտելացոյց մաքրութեան, որայնուհետև աշակերտն վարժարանի մէջ չէր կարող երևիլ, եթէ ձեռքն և երեսն չլինէր լուացած և մաղերըն սանտրած: Երկու եղբարք Թուֆլիկեանք ստէպ վարժարանին յայց կելանէին և այն օգուտն ունեցաւ, որ վարժարանէն միշտ բարի համբաւներ կերթային դէպի սրճանոցներն, որոց երեքըն էին հանդէպ վարժարանին. առաջինն՝ Քարաքաշիան Դա-

ուր Կասաբէն որ Գաշիկ Եր Յիւսէփ

նիէլ աղայի սրճանոցն, երկրորդն՝ Լուսաւորչի սրահի հիւսիսայեաց դրան գլխին, և երրորդն՝ Թաղէոսի սրճանոցն, որ յետոյ եղև Թամանցոյ: Աղայ Պօղոս Սաթրանեանն և Պետրոս Եղիազարեան Բորասինեանն ևս սկսան յաճախել վարժարան. և վերջինս տեսնելով վարժատան նոր կարգն և ուսումն. մանաւանդ որ Աստուածաշունչ զրոց պատմութիւնն, Հայոց ազգային պատմութիւնն, Հռովմայեցոց և Յունաց պատմութիւնն հէքիաթի նման կը պատմէր, պատմածն կը հարցնէր տղայոց, միմեանց հարցմունք անիկ կուտար, իրար հետ վիճարանութիւն ու հակաձառութիւն, իւր աներորդին Յարութիւն պատանին Սալիպեան առաւ Յովհաննէս վարժապետէն, որ և կարճ միջոցի մէջ եղև աշակերտաց առաջին:

Սերովբէ վարժապետն եմոյժ վարժարանի մէջ նստարանների ձևն. նա հնարեց որ այբուբենն միասին սկսան աշակերտք սովորել ընթիւնուլ և գրել: Իւրաքանչիւր նստարան կը պարունակէր տասն աշակերտ. որոյ երկուքն նստարանի երկու ծայրն նստելով իւրեանց մերձանիստ չորսին կըլինէին ուսուցիչ և կասուէին չորրորդապետ: Այսպէս երեքհարիւր տղայք անխափան կուսանէին. մանաւանդ երբ կիմանային, որ վարժապետն պիտի պատմութիւն ասէ, համարներն կըլափէին: Երբ մէջերէն պարաստուեցան ըսան կամ ըսանէինգ աշակերտք, որ արդէն կարող էին քերականութիւն ուսանել, սկսաւ քերականութեան Համառոտութիւն ինչ գրել: Աշակերտաց գլխաւորքն էին Միքայէլ Մելքոնօղլու, Տէվէճի Սահակի որդի Բաղդասար, հէքիմ Կարապետի որդի Սաչատուր, և սորա սրբեգիր Կարապետ Եղիսայեան Սալիպեան, որ յետոյ եղև տէր Աստուածատուր Շարոշիքեան:

Դեռ ևս Եփրեմ սրբազանի առաջիկայութեան ժամանակն ստէպ խնջոյք, խրախճանք, ընթրիք կըխմբէին և Սերովբէ Պատկանեանն կըլինէր հրաւիրեալ: Մինչդեռ Յովհաննէս վարժապետն ի պատուի կայր ճայնաւոր երգերով նա կը զուարճացնէր խնձոյքները. իսկ երբ նա գնաց, այս ծանրութիւնն ևս մնաց Սերովբէի վերայ. և նա իւր աշակերտաց մէջէն ընտրեց քանի մի լաւ ճայնաւոր, որոց գլխաւորքն էին վերոյիշեալ Մելքոնօղլու Միքայէլն, Վրթանէս տէր Յովհաննիսեանն և Կարապետ

Սալախախչեանն. ուսոյց նոցա ինչ ինչ յերգոց Մխիթար արքայի  
և Բաղդասար դպրի և իւր գրածներէն. և երբ 1807 թուի բա-  
րեկենդանն մերձեցաւ, շարադրեց բարեկենդանի հրգն քաղեալ  
ի ժամանակակից կենցաղավարութենէ՝ Նախիջևանցոց, որք  
այն ժամանակ էին լաւ քան զբաղումս: Բարեկենդանի հրգը  
սկսվում է հետեւեալ խօսքերով.

Սիրով սուրբ Հոգւոյն կապակցեալ նոր Նախիջևանցիք  
Սրտիւք եռանդունք, միաբանք և բարեկեցիկք (անս Բն. Հյկ)  
Նախիջևանի մէջ աւելի տարածուած էր այս հրգոյ կցորդ յորդո-  
րակը, զոր ձայնաւոր աշակերտք նորա խմբովին կերգէին:  
Աստուած Հոգոր, Ամենակալ զողորմութեան զուսն բացցէ-  
Ձշահաւէտ կառավարիչ՝ ի ժամանակս մեր յարուսցէ,  
Կամ զիմաստուն զբառաւոր պետ և իշխան մեզ կարգեսցէ,  
Որ հաստատուն կայուն բնութեամբ զժողովուրդ իւր դատեսցէ:  
Վճիռ գրոյն ժողովողի յարմարապէս լրումն առնէ.  
Այր խոնական և խելամուտ աստի զօրեղ իմաստ հանէ.  
Առ Նախջուան հոչակաւոր վայելչութեամբ վերաբերէ,  
Ջրնաբանն իմաստալի բացատրութեամբ պարզարանէ.  
Այմատ և վէմ հիմն սղբութեան նոր քաղաքիս և կացութեան,  
Հմուտ դեսպան և զէպուտաա զիմեալ ի տուն կայսերութեան,  
Սոր իմաստիւք վառեալ՝ էառ զ Հրովարտակ ազատութեան  
Բօղբուրբովնիկ գերազնիշխան՝ Իւան Արրամիչ Արրամեան.  
Բոտամբ սրտի տենչայ ջանայ տալ զօգուտ մեծ ժողովրդեան.  
Այլ և խորհի ընդ մեծամեծս պարզ ծառայի կայսերութեան,  
Առաքինեաց փոյթ ի գովեստ և մոլելոց կշտամբութեան,  
Մահտեսի Սաչերես աղայ՝ Հալաճեան ներկայ գորովայն:  
Ժիր և ժուժկալ յամենայնի ի պաշտօնի դժուարութեան,  
Ոչ զանցառու զմանուածոյ խնդրով վիճի ի քննութեան,  
Կամ անաչառ հեղմամբ կրից, այլ անվրէպ ներողութեան,  
Մտաքսագործ Պետրոս աղայ ի մականուն Յոհաննիսեան:  
Անճառ զճիրս շնորհաց կրէ լուսափայլեալ իբր բնական,  
Արծնաւորեալ գործածութեամբ և ուսեալ ևս ստացական,  
Որովք փայլի հանճարիմաստ՝ զգօն, խոհեմ և ճոխարան,  
Մահտեսի այն Մանուկ աղայն՝ որ մականուամբ է Թուֆլիկեան:  
Պերճացեալ է նրբին մտօք և ընթացիւք պարկեշտական,

Վարուք համեստ, բնութեամբ խոնարհ, նաև ընչիւք փարթամական  
Քաղցրահայեաց, բայց ուղղախօս, միշտ ի վէճս ատենական,  
Սրբազնակոչ Պօղոս աղայ համբաւաւորն այն Սաթրանեան:  
Ե Երանեալ է յարգարութեան և զրուտտեալ ի հեղութեան,  
Որբոց այրեաց մխիթարիչ հանդիսացեալ ի գթութեան.  
Առաքինի և բարեպաշտ և յարածամ ի քաղցրութեան,  
Կարապետ աղայ բարեհոգի՝ մականուանեալ Ալախանեան:  
Մ Տատրակակերպ խոնարհ համբուն և ներբողեալ ի նրբութեան  
Երկայնամիտ խորհրդական և բազմայոյզ ի գննութեան.  
Այր կատարեալ յամենայնի և համբերող ի տրտմութեան,  
Մկրտիչ աղայ առատ սիրտ, որ մականուամբ է Նադիրեան:  
Ուրոյն պարզ և է յԱստուծոյ վիճակեալ մեզ իբր յուսադրիչ,  
Օրէնքսգէտ և իմաստուն՝ անել շաւղաց մտօք գտիչ.  
Հայազգասէր և բանիրուն՝ արժանաւոր կառավարիչ,  
Սէքրէթարըն Մագիստրաթի յանուն Տիմօֆէյ Նաւումիչ:  
Միապատիւ է ընդ նորա ի գովեստ և ի յարգութեան,  
Կառավարիչ թանկարանի և շուկայից կարգադրութեան.  
Արդար իշխան համարուեստից և կշտամբիչ պատիր մտրդկան,  
Վաճառապետ Պետրոս աղայ մահտեսի Եղիազարեան:  
Նախադասեալն վերերգելոց Հասարակաց հաճոյական,  
Անքուն ակամբ վերադիտող և քաղաքիս քաջ պահապան.  
Տիւ և գիշիր աշխատութեամբ եղև բազում չարեաց խափան  
Սաչերես աղայ նոր զորտանիչ, որ անուանի Մեսնիքովեան:  
Աստուծոյ փառք և գոհութիւն վասն անքնին անօրէնութեան,  
Ձի զամենայն ինչ սահմանէ լինել օգուտ ազգի մարդկան.  
Հողաբարձուք իսկ քաղաքիս՝ դատաւորաց են համաձայն,  
Վասն որոյ և քաղաքս կայ միշտ յերջանիկ խաղաղութեան:  
Սեփական է շքեղութիւն՝ յոր ծերունաց չորք պերճանան,  
Ծեր ի տանէք մի թերացի՝ Աստուծոյ իսկ սուրբ յարկք լուան  
Յարութիւն աղայք Մահտեսիք՝ Արարատեան և Սաթրանեան,  
Մահտեսի աղայ Աստուածատուր, Յակոբ աղայն իսկ Կիւզլիկեան:  
Ազնիւ բնութեամբ այր քաջընտիր բարեհամբաւ ի Ռուսաստան  
Դանիէլ աղայ Քարաքաշեան՝ գերայարգոյ յամենեսեան,  
Յովհաննէս աղայ Դրագոնեան, Գէորգ աղայ Օտարաշեան,  
Նիկողոս աղայ Գարրիէլեան, Գասպար աղայ մեր Սալթիքեան.

Յուզան յարդի ժողովրդեան Շահինդադէ Մանուէլ աղայն. Յակոր աղայն իսկ Թամանցի, Խարասուցի Մեկըոն աղայն. Տիրացու եղբայր մեր Լուսեղէն, Սարգիս աղայ Փոքրակոչեան Կարապետ աղայ Չարխճեան, կէն օ կէնօ Խաչատուր աղայն: Երեմակից են և սոցուեց Կարապետ աղայ հին գորովան\*) Խաչերես աղայ Ալաճալեան, Մահտեսի միւս Այտին աղայն. Մահտիսի Նազար Ախիսաշողու, հիւանդացոյց Կարապետ աղ. Չորայ Սահակ, Մանուկ աղայն և այլք օգնիչ բարեգրութեան: Ահա սորա արթուն հովիւք ի Քրիստոսէ օրինակեալ, Որովք ոչխարք Նախչուանայի գաղանաց կան դէրձ մնացեալ. Յաւէտ յայսմիկ դառնգարու՝ յոր վիշաք երկրի են բաղմացեալ Մինչդի չիք ինչ գաւառ երբէք՝ որ ոչ իցէ ալեկոծեալ: ✓ 1807 թուի մայիսի 20-ին Դանիէլ կաթուղիկոսն քաղաքական իշխանութեան օգնութեամբ յաղթելով իրան հակառակորդ Դաւիթին՝ հանդիսապէս բազմեցաւ Հայրապետական Աթոռն և ընդ ամենայն տեղիս տարածեց կոնդակ, որոյ Նախարտակն Եփրեմ գրել էր տուել Սերովբէ Պատկանեանին: Պոլսոյ կոնդակն տարաւ Յովհաննէս այն ինչ ձեռնադրեալ արքեպսկոսն Գայլակերեան (Գառնակերեան, որ յետ ժամանակաց եղև առաջնորդ Հայոց Ռուսաստանի), իսկ Ռուսաստանի կոնդակն բերեց Ներսէս և եկաւ Նախիջևան 1809 թուի վերջերն, ուր արդէն կըզանուէր Եփրեմ: Ներսէս իջևանեցաւ Առաջնորդարանի արևելեան անկեան քարաշէն տնակի մէջ, ուր կըբնակէր հայազգի աստիճանաւոր Յակորն: Ներսէս Նախիջևանի մէջ\*\*) կեցաւ մինչև որ Եփրեմ սրբազան առաջնորդն ստացաւ Դանիէլի կաթուղիկոսութեան հաստատութեան կայսերական հրովարտակն և ս. Աննայի առաջին կարդի ասպետական նշանը: Ներսէս վարդապետ պատրաստուեցաւ ի ճանապարհ. մի շաբաթ օր կիրակամտին հրաժարական ողջոյն տուեց ժողովրդեան՝ քարոզելով, որոյ բնաբանն էր. Երթ առ մըրջիւնն, ով վատ, և ուսիր զգործս նորա: Այս քարոզն այնպէս

\*) Կարապետ աղայ Ախիսաշեան

\*\*) Մեր հեղինակը Ներսէսի այս ժամանակի կեանքից մի քանի դէպքեր է յիշում, որ մենք անտեղի ենք համարում առաջ բերել:

թովեց կախարդեց ամենեցուն սիրտն և հոգին, որ չմնաց ոք Նախիջևանայ մէջ, որ Ներսէս վարդապետի երթալոյ համար չարտընչէր: Առաջին քաղաքազուլիս Խաչերես աղայ Հալաջեանն էր, որ ճղքելով ժողովրդական թանձրութիւնն եկաւ և իւր սովորական աղաղակաւ մեղոյ գոչեց և դառնալով առ Սրբազան Եփրեմ, ասաց. Հայր Սրբազան, ես քեզ աղէկ չիմ ասիլ, եթէ դուն ապուլ տաս աս մեր Ներսէս վարդապետին մեզիմէն երթալ. դորա հոս պայելու հօրօխը նայէ: Եփրեմ պատասխանեց, թէ նա պիտի երթայ, որ կայսերական հրովարտակն տանի և իբրև վարձ կախարդութիւն ստանայ:

Արդէն մութ էր, որ Լուսաւորչի փայտաշէն եկեղեցիէն ելաւ. ուղղակի Խաչերես աղայն իւր տուն տարաւ, ուր մինչև ի լոյս ուրախութիւն արտրին: Խաչերես աղան կասէր անդադար ինձ անպէսնակ կերեայ, որ վարդերեսիս Ստամբուլ կճամփիմ: Կիւրակի, զինի պատարագին Ներսէս վարդապետն ճանապարհ ել գէպի Համբարձման դաշտային գերեզմանատունն, ուր գհետ նորա գնացին հարիւրաւոր կառք, սկսեալ յԵփրեմէ կային ամենայն եկեղեցեաց աւագերիցունք, քաղաքազուլիս, քառաւորք, հոգաբարցուք և այլ բազմութիւն:

Ըստ երևութին Նախիջևանի քաղաքական տնտեսութեան գործերն Խաչերես Հալաճեանի օրով շատ խառնակուած էին, և Նախիջևանցոց կողմանէ գանգատաց տեղի տուած. որ կաւաճաւարութիւնն հարկ տեսաւ այդ քաղաքի դրամագումարաց հաշիւները պարզել: 1807 թուի մարտի 6-ին յատկանուն հրովարտակ տրուեցաւ Քերսոնեան Նահանգապետի անունով (թիւ 22581) այս օրինակ. Չննեալ զառաջարկութիւնն ձեր վասն բողոքարկութեանց մատուցելոց ի Հայոց յաղագս դժուարութեանց հաշուատեսութեան հասարակական դրամագումարաց նոցա՝ համաձայն վարկատրութեան ձերում առ ի բերել զգործս զայս ի պարզութիւն և ի վերջնական կարգաւորութիւն այնոցիկ հաշուոց, յանձնեմ ձեզ կարգել մասնաժողով ընդ նախագահութեամբ միոյ պաշտօնականի ի կողմանէ վարչապետութեան՝ ըստ ընտրութեան ձերում, և յերկուց անգամոց ընտրելոց ի միջոյ երկուց աց Հայոց և ձէնջ հաստատելոց:

ԺԸ

Նախիջևանայ տարեգրութեան մէջ սկսաւ մեծապէս արտայայտուիլ իր իրաւունքն ու իր անկախութիւնը իր ժողովուրդին հանդէպ: Առ այս ի 1809, 1810 և 1811 թուականաց համար քաղաքագրութիւն ընտրեցաւ երկրորդ անգամ Ախալցեան Կարապետ աղայն:

Սորա քաղաքագրութեան առաջին տարին վախճանեցաւ Դանիէլ կաթողիկոսն և Նիքիմ արքեպիսկոպոսն ընտրեցաւ կաթողիկոս, որոյ անուամբ ել կայսերական հրովարտակ ի 1809-սկսած: Սա յետ ընտրութեան եկն ի Նախիջևան. և տեսնելով որ Աղաբաբեան վարժարանն արդէն ամենայն իրօք պատրաստ է, առաջարկեց Սերովբէ վարժապետին տեղափոխել Աստրախան, որ և կատարուեցաւ:

Սերովբէ վարժապետի տեղը տուին Իսմայէլցի տիրացու Յովակիմին. որ էր աշակերտ Թադէոս Քիթապիւտան վարդապետին և թէպէտ նորա գիտութիւնէն բնաւ մասնակից եղած չէր, բայց նորա վինսկիրութեան եղել էր հաւատարիմ հետևող և վերջապէս գանակակոծ եղեալ աքսորուել էր:

Այս մասնաւոր դպրոցներու մէջ միմիայն Հայերէն կաւանդուէր. կային ցանկացողներ և Ռուսաց լեզուին հմտանալու և քաղաքն Ախալցեան Կարապետ աղայի օրով սահմանեց առաջին պաշտօնական դպրոցը բանալ Ռուսաց լեզուով: Այդ վարժատունն Նախիջևանի մէջ բացուեցաւ 1811 թուի յունիսի 4-ին ներկայութեամբ Թադանրոզի առետրական գիմնազիոնի տեսչին և Չերքեզ Յովհաննէս վարդապետին, որ այդ առթիւ Մազիստրաթի կարգադրութեամբ ծարող խօսեցաւ: Այդ դպրոցի մէջ բացի Ռուսերէնից և թուրքական 4 գործողութիւնից՝ աւանդում էր Հայերէն և Կրօն: Դպրոցի հակիչն էր երկրորդ դատաւոր Մելքոն Յովակիմեան Բառասուրով, իսկ ուսուցիչներ՝ Շմատկովսկի, տիրացու Կարապետ Եղիայեան Խալիփախանն (Շաբոշնիկով) որ ապա քահանայանալով տէր Աստուածատուր կոչուեցաւ:

Ախալցեանի քաղաքագրութեան ժամանակի միւս նշանակելի դէպքն է հարկի յաւելուած Նախիջևանցոց վերայ: Առ այս ի 1811 ամի մայիսի 19 եղև վեհագոյն հաստատեայ վարկատրութիւն Արքունական խորհրդարանի (հմն, 24636) որ ունէր այս իմաստ: Արքունական խորհրդարանն յընդհանուր Համախմբութեան զննեալ զօրադրութիւն Հատուածաբաժնի Տնտեսութեան ըստ առաջարկութեան նախարարին Եկամտից, յաղագս հարկաց յաւելուց ի վերայ վաճառականաց և տեղացիաց (մէշչեան), նոյնպէս և Գիւղականաց, յորոց վերայ եղեալ են 18 կոպէկ ըստ մարդաթուի, ի պահպանութիւն իրաւատեղեաց՝ զորս աղերսէ Նախիջևանայ Հայոց հասարակութիւնն ի բաց բառնալ յուսոց նոցա, և գտեալ զվճիւ Հատուածաբաժնի Տնտեսութեան ըստ գործոյս այսմիկ կանոնաւոր, համաձայն ընդ այնմ վարկատրութեան հնթաղըքէ, զհարկս ի Հայազգեաց յայնցանէ՝ առնուլ զայն իսկ, զորս նոքա ի 1810 ամէ՝ ըստ տնօրէնութեան էքսպեդիցեայի ի մասին արքունական եկամտից պարաւանդեալ են հատուցանել:

Ի սկիզբն 1812 ամի քաղաքագրութիւն ընտրուեցաւ երկրորդ անանրորդ եռամեակի 1812, 13 և 14 ամաց համար Խաչերես աղայի անդրանիկ որդին Վարդերես աղայ Հալաճեան:

Այդ Նապոլէոնի արշաւանքի տարինէր, երբ ի վերջոյ Աղեբասնդր կայսրն յաղթանակաւ Փարիզէն իւր տէրութիւնն դարձաւ և երբ ամենայն քաղաքներն Ռուսաստանի պատգամաւորներ առաքեցին ի մայրաքաղաքն ի խնդակցութիւն: Նախիջևանէն ընտրուեցաւ և ուղարկուեցաւ պատգամաւոր ինքն քաղաքագրութիւն Վարդերես աղայն Հալաճեան:

1812 թուին վերջերը Նախիջևան իւր վիճակին այցելութեան հիւանդաւոր անգամ Գառնակերեան Յովհաննէս արքեպիսկոպոսը որ առաջնորդ էր կարգուած 1811 թուին սպր. 19-ին. առաջին նուազին Նախիջևանցիք նորան քաղաք չընդունեցին՝ պատճառելով, թէ նորա համար պատրաստ տեղ չունին և ուղղակի տարան ս. Խաչ վանք: Բայց ս. Լուսաւորիչի աւագերէց տէր Յակոբ տէր Բարզուղիմէոսեանն \*) ըստ իւր խաղաղասէր բարուց

\*) Այս քահանայն Նապոլէոնի արշաւանքի ժամանակ Մոսկուայէն փախել էր իւր հայրենի քաղաքն Նախիջևան: Տէր Բարզուղիմէոսեան ազգանունն Լազարեանք փոխել դարձուցել էին Փոփով. կոչուում էր նաև Մանուկեան:

հաշտութիւնն ձգեց անպատուեալ Առաջնորդի և հասարակութեան մէջ և զհնի ամսօրեայ ժամանակի վարձեցին Ալաճալեան Սաչերես աղայի տունն և բերին անդ:

Յովհաննէս արքեպիսկոպոսն մի պարզմիտ, արդէտ և զրօսասէր անձն էր: Զբօսասէր Նախիջևանցիք Առաջնորդին ըսկասն հացկերոյթներ տալ և Յովհաննէսի Առաջնորդութիւնն միայն այնու կերևէր, որ բազմած կըլինէր իւր քանի մի ընտրեալ քահանայիք խնջոյց գահագլուխ և բաժակաց վրայ կը խաչակնքէր, քահանայք և տիրացուք շարականներ ու Աստուած հօր եզրը կերպէին բազում ուրեք Սաչերես աղայի տեղ Վարդերես զնելով: Ութ ամիս (մինչև յունիսի 10) մնաց Նախիջևան Յովհաննէս արքեպիսկոպոսն և նորա առաջնորդական գործն պարունակեցաւ յայն, որ իւրաքանչիւր եկեղեցեաց մէջ զրեց երկերկու տումար, մի՛ Վասն մտից և արդեանց և միւսն՝ Վասն ելից և ծախուց եկեղեցեաց, որք և մնացին այնպէս անգիր, որպէս և տուան ի ձեռս Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ տէր Գարրիէլ տէր Գարրիէլեան աւագ քահանայի: Նորա հեռանալէն զհնի աւարտեցաւ 1814 թուի օգոստոսին ս. Լուսաւորչի քարաշէն եկեղեցին, որ և յընթացս երեսունհինգ ամաց շինուեցաւ, և այն՝ անձնուէր անխոնջ ջանիք աղայ Պետրոսի Եղիազարեան Բարասինեան վաճառպետի յերեսփոխանորդութեան քաղմաշխատմահտեսի Սահակա Տէվէճեանի՝ որ էր հայր տիրացու Բաղդասարի Վարդերես աղայ Հալաճեանի վերջին տարին՝ 1814 թուականին հանրական կապարագծութեամբ եղնն բաշխոյք հողոյ ընակչաց քաղաքին, որով Նախիջևանի սահմանագլուխներն շրջապատեցան ազարակներով՝ իւրաքանչիւր ազարակի մէջ 400 կրկնօրավար հող պարունակելով:

Վարդերես աղա Հալաճեանէն վերջը երեքտասներորդ հառամեակի՛ այն է 1815, 1816 և 1817 ամաց համար քաղաքագլուխ ընտրուեցաւ Քարաքաչեան Դանիէլ աղայ Թորոսեան: Սորա քաղաքագլխութեան ժամանակ 1816 թուին Նախիջևան եկան Ալիքսանդր Պաւլովիչ կայսեր եզրայրքն Նիկոլայ և Միխայիլ Պաւլովիչներն և իջևանեցան Դանիէլ աղայի տունը: \*)

\*) Նախիջևանի ժողովրդի մէջ մտնող շոյալութեան առաջն առնելու համար 1817 թուի յունուարի 1-ին կազմուեցաւ մի ընդարձակ 39 յօդուածից կանոն անքակտիլի և ուխտ յաւիտենական. որ վաւերացաւ առաջնորդի կողմից և յանձնուեցաւ քաղաքագլուխ Դանիէլ աղայ Քարաքաչեանին ի գործադրութիւն: Այդ կանոնը գտնվում է Նախիջևանի Հոգեւոր կառավարութեան 1817

ԺԹ

Չորեքտասներորդ հառամեակի, այն է՝ 1818, 1819 և 1820 ամաց համար քաղաքագլուխ ընտրուեցաւ մեծահամբաւ աղայ Պօղոս Յարութիւնեան Սաթրանեան, որ Առաջնորդական աթոռակալ էր: Սորա վարչութեան առաջին տարին այցելութիւն արաւ Նախիջևան քաղաքն Ալիքսանդր Ա. կայսրն և իջևանեցաւ Մարկոս աղայի կրտսեր եղբօր Առեկաս աղայի տունն, որ է ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ հանգէպ, մեծ փողօցի զլուխն:

Աղայ Պօղոսը զբաղկալ գլուխ իւր լայնածաւալ առևտրական գործերով, որոյ վրայ և քաղաքի անտեսութիւնն աւելցաւ, չունեցաւ ժամանակ ոչ իւր անդրանիկ որդւոյն ինքեան վայելուչ կրթութիւն տալ և ոչ քաղաքավարժարանին ձեռնառութիւն, ուր ինչպէս ասացինք, կուսանէին Միքայէլ Մելքոնեան, որ ապա ձեռնամուխ եղև առևտրի, Բաղդասար Սահակեան Տէվէճեան և ախրացու Կարապետ Սալփախչեան: Աղայ Պօղոս Սաթրանեան երբ տեսաւ, որ իւր անդրանիկն զրկուեցաւ ուսման հրահանգներէն, հետեցաւ Գէորգ Օտարաչեանի բարի օրինակին և երբ նա ուղարկեց իւր երկրորդ որդի Դաւթին Մոսկուայի Լազարեան ձեմարանն, Սաթրանեանն ուղարկեց իւր երկրորդ որդի Յարութիւնին. սրա օրինակէն խրախուսուելով Պատի Մինաս կոչեցեալ Աւագեան վաճառականն իւր Յարութիւն ուղուհս ուղարկեց (որոյ եղբայր Սաչատուրն զնաց յիտոյ):

Դաւիթ Օտարաչեան, Յարութիւն Սաթրանեան և Յարութիւն Աւագեան էին առաջին, որ Նախիջևանի հասարակութեան մէջ բերին ձեմարանական և ըստ մասին Համալսարանական հրահանգ. զհնի սոցա կամ ընդ սոսա վերադարձել էր աղայ Պետրոս Սաղիղեանի որդին Յովհաննէս նոյնպէս կրթեալ ձեմարանական, յիտոյ եկաւ և Քուշարեան Մարտիրոս, որ վերոգրելոց նման սրճանոցների կամ թղթախաղի սեղանոյ գահագլուխ չեղաւ, այլ Մագիստրաթի մէջ զբազրութեան պաշտօն գտաւ և սորամէն յա-

թուականի գործերի մէջ: Բովանդակում է շատ հետաքրքրական տեղեկութիւններ թէ՛ հանդերձեղէների և թէ՛ ստեղծաց վերաբերմամբ:

ուջացաւ դատարանի միջի լաւ ձեռագիրն ու ազնիւ թարգմանութիւնը: Օրըստօրէ պիտի սոցա սպասասրութեամբ զօրանայր Նախիջևանայ մէջ ընթերցասիրութիւնն. բայց չեղև այդպէս. այս պարոնայք փոխանակ այլոց աղբային գաղափարներ ուսուցանեոյինքեանք սկսան ոոցա դատարկւպորտ կենցաղավարութեան աակերտել և փոխանակ եռանդուն լինելոյ վարժարանը իւր կործանեալ տեղէն նորէն կանգնելոյ, վարժատան հակառակորդաց հետ միացան: Աւագեան Աստրախան գաւառապետի մօտ պաշտօն գտաւ, իսկ Դաւիթ Օտարաշեան և Յարութիւն Խաթրանեան յետ ժամանակաց երեսպարզութեամբ դատարարական պաշտօն կրեցին:

Աղայ Պօղոս Խաթրանեանին յաջորդեց իբրև քաղաքագլուխ երկրորդ անգամ աղայ Վարդերես Հալաճեան և սկսաւ հնգետասաներորդ եռամեակն՝ 1821, 1822 և 1823 թուականներն: Վարդերես աղայն զուարթամիտ ու զուարթերես անձն էր. ամենեցուն հետ քաղցրութեամբ ու խնդալով անցոյց իւր քաղաքագլխութեան տարիններն:

Վարդերես աղա Հալաճեանի վերջին տարին՝ 1823 ամին նորոգեցաւ մի քսան և երեքամեայ հին մոռացեալ կարծուած պահանջ. եկատերինոսլաւեան քաղաքական պալատն հրամայել շէր երբեմն Նախիջևանի Մագիստրաթին՝ Որբոց ստացուածոց հախւն յօրինել կանոնադրեալ ձևով և ուղարկել. Բայց Նախիջևանի քաղաքագլուխն ու Մագիստրաթը հիմնուելով շնորհուած Արտօնագրոյն 5 կէտի վերայ անպատասխան էր թողած այդ պահանջը: Նոյն խնդիրը կրկնուեցաւ 1823 թուին և այն Պապիկօղլու Սիմաւոնի եղբոր ստացուածոց առթիւ, որոնց վրայ գանձարանական պահանջ կար. միւս կողմից ևս թամանցի Յակօրն ընկերական հաշիւ ունէր Արարհամեանի որդոց հետ: Նախիջևանի քաղաքագլուխն և Մագիստրաթն այս անգամ ևս ապաստանելով իրենց Արտօնագրոյն մերժեցին հաշիւ տալ Քաղաքական պալատին: Այս խնդիրն վերջէն բացատրութեան համար սենատ մտաւ, որ 1831 թուին տուաւ իւր բացատրութիւնն, թէ Նախիջևանի Մագիստրաթը պարտաւոր է Որբոց ստացուածոց մասին հաշիւ տալ եկատերինոսլաւեան քաղաքական պալատին:

Վարդերես աղա Հալաճեանի ձեռքով շինուեցան երկու աղիւսակերտ քաղաքադուռն սիւներն (որ մինչև այսօր ևս կան):

Ի

Վեշտասաներորդ եռամեակի համար (1824, 1825, 1826) քաղաքագլուխ ընտրեցին Օտարաշեան աղա Գէորգ Մարգարեանն, որ արժանաւոր անձն էր, մեծարարոյ և ազնուամիտ: Քառասնամեայ ժամանակաւ ընկերութիւն անելով Սախաւ Դանիէլ Բարասինեանի հետ, երբ ընկերն վախճանեցաւ, նորա բոլոր ստացուածքն իւր ձեռին պահելով շահեցոյց. երեք որբքն զարգացոյց, երկու դուստրն հարսնացոյց և որդին իւր զաւակաց հաւասարաբաժին ժառանգակից արաւ:

Սորա քաղաքագլխութեան ժամանակն իւր վիճակին այցելութեան եկաւ Յովհաննէս արքեպիսկոպոսն և քաղաքի զործակալութիւնն, Աթոռակալ անուամբ՝ յանձնեց քաղաքագլուխ աղայ Գէորգին... այս հին սովորութիւն էր Յովսէփայ օրերէն սկսեալ. բայց Գէորգ աղան հոգևոր զօրծերու մէջ խառնվիլ սիրող անձն չէր և քաղաքավարութեամբ ուսերէն հեռացոյց այդ լուծը. և ընդ կատակս ասաց, թէ այդ Արարատեան Կիրակոս աղայի սիրած զործն է: Եւ յիրաւի՝ Աթոռակալութիւնն պիտի անցնէր Կիրակոս աղային, եթէ Օտարաշեան Գէորգ աղայի փեսան Յարութիւն աղայ Խալպեանն միջամուխ չլինէր: Սա քաջահասու էր բնաւորութեանց թէ Արարատեանի, և թէ տէր Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանի, որ Աթոռային և Աւաջնորդական հասքն պիտի ժողովէր և համարատու լինէր Աթոռակալին: Տէր Գաբրիէլն, որ էր կրտսեր եղբայր Յովսէփ սրբազանի Սաշատուր սարկաւազի, անգրագէտ անձն էր, հպարտ ու յոխորտ, բայց և ընդ նմին քծնող մեծատանց և սիրելի բազմաց: Նորա գլխաւոր բարեկամքն էին Յարութիւն աղա Խալպեան, Խալաւաուլեան Մովսէս, Ալախանեան Սաշիկ, Յուսիկեանց Միքայէլ, Խաղիկեան Մարգիս Կարապետեան, զորոզնիչ Սաշերես Մեսնիքեան և այլք:

Կիրակոս աղայ Արարատեանն էր այր խորագէտ, ճարպիկ Լեհաստանի կողմն յաջողակ առևտուր ունենալով՝ առաւ Քարաքաշեան Յովհաննէս աղայի դուստրն և թէպէտ Լեհաստանի յեղա-

փոխութեանց ժամանակն կորուսել էր իւր դրամագլուխքն, բայց ճարտարութեամբ չէր արտաքս ընկել այն կարգէն, ուր միանգամ մտել էր իւր ճոխ օրերին: Էր նաև բարեկամ Յովհաննէս սրբազանին: Արդ Խալիպեանն քաջ տեղեակ լինելով Արարատեանի համարառութեան եղանակին և կամենալով պաշտպանել իւր բարեկամ տէր Գաբրիէլին՝ թոյլ չտուեց, որ Օտարաշեան Գէորգ աղան հրաժարի Աթոռակայութեան գործէն, այլ տէր Գաբրիէլի հաշիւներն ընդունի, որով Արարատեանն հեռի մնաց:

Խալիպեանն ոչ միայն այս դիպուածոյս մէջ, այլ և ամենայն մասամբք եղել էր Օտարաշեանի կամաց և յօժարութեանց տէր և բովանդակ հասարակութեան սանձն առել էր իւր ձեռն. իւր խոհմէմ ընթացքն, քաղցր բարքն և առատաձեռնութիւնն բազմաց սիրտն յանկուցել էին և ժողովքերի մէջ նորա կարծիքն սակաւ զանազանութիւն ունէր հրամանէն: Հեռատես լինելով իւր ապանեաց աղագաւ, Մագիստրաթի մէջ պաշտօնավարի անուն ընկալաւ և փոքրիկ աստիճանի տէր դառաւ և խափանեց Կիրակոս Արարատեանին Մագիստրաթի մէջ պաշտօն վարելով աստիճան ստանալ: Եւ երբ սա Հասարակութեան գործով կայսերական դուռն երթալով Յովհաննէս եպիսկոպոսի միջնորդութեամբ աստիճան ստացաւ իբրև Հոգևոր Կառավարութեան քարտուղար, աղա Գէորգ Օտարաշեան շիրթ ձգեց Հասարակութեան մէջ, թէ Կիրակոս աղայն ինքեան յանձնած դրամքն վատնել է աստիճան ստանալոյ աղագաւ, և խաժամուժ ամբոխը գնաց Կիրակոս աղայի տունը տեղը քանտելու. հազիւ ողորմելին երկու հազար ուրբիի մուրհակ տալով ազատուեցաւ՝ քաղաքի ու հասարակութեան գործերէն իսպառ մերժեալ:

1825 ամին Նախիջևանին երկրորդ այցելութիւն արաւ ինքնակալ կայսրն Ալեքսանդր Պաւլովիչն և իջևանեցաւ Պոպովեան Մըկըր աղա Յովակիմեանի տունն, որ այն ժամանակ քան դամենայն տունս էր վայելչական\*): Այս Մըկըր աղայն, որ առաջ Խաղէզ Մըկըր կասուէր (կամ խև Օվակիմի Մըկըր) էր մի ի սպա-

\*) Այդ տունն այժմ է սեպհականութիւն պ. Գէորգ Ալախանեանի (II Георгіевская № 5):

սաւորաց աղայ Պօլոս Խաթրանեանի, և ստացել էր այն ժամանակներն ճոխ անուն ու հարուստ համբաւ:

Վեհափառ հիւրն իսկոյն յիշեց, որ առաջին գալստեանն այն չէր նորա իջևանն և հրամայեց բերել տալ իւր նախկին իջևանի ասնուտէրն: Անմիջապէս Ղուկաս աղայ Պոպովեանն և իւր կինն, որ էր զուստը Տէվէճեան մահտեսի Սահակի՝ եկին և կայսրն միմի մատանի ընծայեց նոցա: Մըկըր աղայն և իւր կինն նոյնպէս չմնացին զուրկ. նոցա ևս պարզեացրեց, և երթալոյ ժամանակն խոստացաւ՝ թէ միւս անգամ մտանէ Նախիջևան, նոցա տունն իջևանի: Եւ յիրաւի երբ կամեցաւ երթալ այցելութեան Տաւրիկեան թերակղզոյն՝ նոյն տարին 1825 թուին կրկին եկաւ Նախիջևան և դարձեալ Մըկըր աղայ Պոպովեանի տունն արար իջևան: Նախիջևանցոց համար յաջողակ ժամանակներ էին խնդրել իրենց քաղաքի և Հասարակութեան համար արքայական ողորմութիւն, բայց Նախիջևանայ ընտրեալ անձինքն Կիրակոս Արարատեանի յաջադանօք էին զբաղած: Հասարակութեան մէջ արտնջացողներ կային ինչպէս Միտեքեանք Օքսէնտ և Միքայէլ Թամանցի Յակովբ և իւր երկու որդիք՝ Սարգիս և Գէորգ, Մինաս Պոպովեան Մըկըր աղայի եղբայրը, Օրցիեանք՝ Յովհաննէս, Մարտիրոս և Խաչատուր և այլք բազումք. և խնդրելոյ բան կար, օղոյ մաքսի (աքցիզի) գործը. քաղաքի բոլոր գետեղըն ցքահան քարաշէն մշակարաններով ծածկուած էր (և օղոյ վրայ նոր աքցիզ էր դրուած): Գէորգ աղայ Օտարաշեանն ժողովրդեան այս զանգատներն լսելով՝ օր մի ասել է Պետրոս Յակովբեան Հալաճեանին. մեր Պապուկի (Յարութիւն Խալիպեանն) երեսն սև ըլայ. նա եղաւ սեպէպ, որ ադ Քրսանդն ձեռքէս ապուլ տուի:

Թէև Խալիպեանի կուսակիցք արգէն միտքերու մէջ հաստատ դրել էին զկնի Օտարաշեան Գէորգ աղայի անմիջապէս Խալիպեանի տալ քաղաքագլխութիւնը, բայց Օտարաշեանի յորդորանօք քաղաքագլուխ ընտրեցին 1827, 1828 և 1829 եռամեակի համար Խաչատուր աղայ Մկրտչեան Խոճաճեանցն, որ 1815 թուերուն եկել էր Խրիմէն: Նոյն թուին ընտրուեցաւ առաջին դատաւոր Մարտիրոս աղա Թոճատեան Խոճայեանց, իսկ երկրորդ դատաւորներ՝ Ազամ աղայ Յարութիւնեան Գարայեանց. աղայ Պետրոս Եղիազարեան Բաբասինեանց. Խաչուկ աղայ Կարապետ-

եան Ալախանեանց. Ղազարոս աղայ Աստուածատրեան Ղազարեան: Գանձապետ՝ Միրայել Ասմայեան. քարտուղար Մադիստարթի Մկրտիչ Սիմոնեան Մարագեան, որոյ հղբայրն Ծերոն էր օգնական Որբոց իրաւարանի պրագրի Սիմէոն աղայ Աչաքովեանի:

Սաչատուր Սումաճեանն խորհրդով Հասարակութեան ընկալաւ ինքեան օգնական երկու անձն՝ Ծերոնի Մկրտիչ աղայ Նազրեան և Կիրակոս աղայ Արարատեան՝ օրինաւոր սոճիկ կարգելով նոցա, որ քաղաքի ելից և մտից տոմարներն պահեն, ոչ միայն նոր հարկն կամ կամաւոր տուրքն հաւաքեն, այլ և վաղանցեալ ժամանակաց ազառիկներն ստանան: Մինչև այսօր ելից և մտից տումարն քաղաքապետոյ ձեռին կըլինէր և ինչ կըստանայր, ինչ կըմխտէր, ինքն գիտէր. զկնի եռամեակին պիտի տար հաշիւ և այս հաշուատուութիւնն կըլինէր միշտ առիթ խռովութեան. այժմ ել ու մուտն գիտեն քաղաքի հոգաբարձուքն:

Սաչատուր Սումաճեանի միւս կարևոր գործն եղաւ վարժարանի շինութիւնը: Նա գտաւ ոսկերիչ Մանուէլ (տէր) Մկրտչոանի կտակը\*), որ իւր անձն աղքատաց հղբայր կոչելով՝ կտակել էր իւր բոլոր ստացուածքն՝ որ մի աղքատանոց շինուի Նախիջևան. բայց Սումաճեանի համոզելով այն դրամապետով մի վարժարան շինուեցաւ: Այնուհետև սկսան վարժապետ որոնել: Նախիջևան կար արդէն մի պատանի Մկրտիչ Եկանեան անուն՝ լատինադաւան, որ որպէս թէ կրթեալ էր ի վենետիկ ի Վանս ք. Ղազարու, որ թէպէտ չգիտէր հայերէն քերականութիւն, բայց ունէր սքանչելի ձեռագիր. և վարդերես աղայ Հալաճեանի շնորհաց արժանաւորելով՝ գտաւ ժողովրդականութիւն. շատ յայտնի անձինք իրենց գաւակները տուել էին Մկրտիչ վարժապետին, որ ուսումն անուէն: Ժամանակի միւս վարժապետն էր Յովակիմ Ամասիացին, որ թէև գիտէր քերականութիւն, բայց Եկանեանի արտաքին փաղփիւնն չուէր: Հասարակութեան մէջէն շատերը

\*) Այս Մանուէլ Մկրտչեանը Սումաճեանի հետ եղել է դատարար 1818 և 1819 թուերին և վախճանել է 1819 թուի յունիսին: Հետաքրքրական է այն թուղթը, որ գրել է 1819 թ. յունուարի 13-ին Հոգևոր Կառավարութեան, յորդորելով քահանաներին ուշադրութիւն դարձնել հայ մանուկների դաստիարակութեան: Հրատ.

կըլիշէին Սերովբէ Պատկանեան վարժապետն, որ ձերանալով հանգիստ կը վայելէր իւր որդւոյն Գաբրիէլ սարկաւազի տունն յԱստրախան:

Նախիջևանցիք այն միջոցներն ստէպ երթևեկ կանէին յԱստրախան իւրեանց առևտրոյ պատճառաւ՝ ինչպէս Սարգիս Սահրադեանց (Ալթը պարմախ կոչեցեալն), Յովակիմ աղայ Հէքիմ Գրիգորեան, Յովհաննէս Թուֆլիկեան, Մկրտիչ Սաչատուրեան Կոկոյեան և այլք: Սոքա միշտ տեսակցութիւն կանէին Սերովբէ վարժապետի հետ և երբ 1826 թուոյ վերջին ամիսներն Սաչատուր աղայ Սումաճեանն քաղաքապետն ընտրուեցաւ, կամեցան, որ Սերովբէ վարժապետն իւր Գաբրիէլ որդւոյն հետ Նախիջևան գայ, ուստի խնդրեցին, որ նա շնորհաւորութիւն գրէ Սաչատուր աղային ընտրութեան ազագաւ, որ և գրեց իսկ և պատասխան ընկալաւ մի երկար բազմաստորագիր հրաւէր, որով կըխնդրէին Սերովբէն հանդերձ գերդաստանաւ գալ Նախիջևան և ի ձեռն որդւոց Գաբրիէլ սարկաւազի և տիրացու Պետրոսի՝ տալ քաղաքի մանկանց դաստիարակութիւն: Ի սկիզբն սեպտեմբերի 1827 ամի եկն ի Նախիջևան հանդերձ գերդաստանաւ Սերովբէ վարժապետն. և զկնի վերացման Սաչի տօնին Գաբրիէլ սարկաւազն և իւր հղբայրն տիրացու Պետրոսն մտին ի պաշտօն վարժապետութեան. և յամսեանն նոյեմբերի արկաւ հիմն վարժատունի, որ շինեցաւ, ինչպէս ասացինք, պրամապետով տէր Մկրտչեան Մանուէլի:

Նախիջևանի համար 1827 թիւն անյաջող տարի չէր. քառասուն և եօթնամեայ քաղաքն նոր զարթել էր իւր հոգեկան թմրութենէն և իւր զաւակաց դաստիարակութեան համար կրթարանի հիմն էր դրել, որ Պատկանեանք քրտնաջան կաշխատէին երէքճարիւրէն աւելի աշակերտաց համար: Վերոյիշեալ վարժապետներէն Ամասիացի Յովակիմ վարժապետն ևս ընդունեցին իւրեանց մէջ. նոքա վասն գեղեցիկ ձեռագրին ցանկացան հրաւիրել և զԵկանեան Մկրտիչ վարժապետն, բայց ոչ Սաչատուր Սումաճեան քաղաքապետն և ոչ աղայ Գէորգ Օտարաշեան յօժարեցան:

Նախիջևանայ մէջ Եւրոպական կրթութեան կայծերն օրըստօրէ կաւելանային. Մոսկուայի Լազարեան ուսումնարանի աշա-



կերտաց մին սկսել էր օրիորդաց և պատանեկաց մէջ կաքաւ և պար տարրացնել. սա էր Աստուածատուր Եղիայիան Բիբլիկեան, որ խն Եղիայի որդի կասէին, որ իւր հայրենեաց այդ պարաւորութեամբ մեծ օգուտ տուեց. ընտելացան շրջագայելոյ, ընդ առաջ ելանելոյ կամ ուղևորելոյ ձևոց և եղանակաց. հին թաթարի ծէսերն փոքր ինչ մերժեցան՝ քանի մի տներէ: Այսպիսի նորաձևութեանց պաշտպան էին Մըկըր աղայ Պոպովեանի տունն, Վարդերես աղայ Հալաճեանի գերդաստանն, Ղազարոս աղայ Լազարեանի ազգատոհմն:

Գարբիէլ սարկաւազն մի մեծ երկրագունդ և մի հատ նոյն չափ երկնագունդ ճախարակել տուեց փայտակերտ. նորա հորիզոնի և Հասարակածի պղնձի գօտիներն շինել տուեց տեղացի ոսկերչաց, փորագրել տուեց զինագործ զարբնաց, և միջօրէական գծերն չափելոյ և նշանակելոյ ժամանակն՝ օգնեցին այն աշակերտք, որ Մկրտիչ Եկանեանի մօտ էին սովորել Վայելչագրութիւնն, յորս երեւիլ էին Ստեփան Սաչատուրեան և Ստեփան Յովհաննիսեան Սոմաճեանք. առաջինն այնքան առաջացաւ, որ շարադրեց փոքրիկ պատմութիւն Հայոց ի Հայկայ մինչև ի Գաւիթ-բէզ և օգնութեամբ իւր նախկին դաստիարակի պատկերներով զարդարեց. իսկ երկրորդն շարադրեց Յովսէփ Գեղեցկի բանաստեղծութիւնն ըստ շաւղի Կեսների Մահուն Արելի:

Կը գարմանային Նախիջևանցիք և կը գովէին, այլ սակաւը կային, որ ի սրտէ լինէին ուրախ: Մըկըր աղայ Պոպովեանն, որ իւր երկուց կորարց դատերքն և միոյ ուստրն ևս տուել էր՝ թագանրոզ յուսումն և Նախիջևանայ մէջ հովանաւոր էր Եկանեանին և Բիբլիկեանին՝ հակառակ էր Գարբիէլ սարկաւազի ուսումնատուութեան և իւր կուսակցաց, մանաւանդ Աստուածածնի եկեղեցւոյ ժողովրդականաց մէջ անդադար կը բարոզէր ոչ թէ միայն վարժարան շինելոյ աւելորդութիւնն, այլ և Հայոց լեզուի և գպրութեան անպիտանութիւնն՝ ասելով. Նախիջըվանէն էլլիս, Չալթըրէն անցնիս, տահա անդին հայնակ գիտցող չկայ. խաղախնակ պիտի կալաճի անիս. հայնակ քերականութիւն ինչերուս պէտքն է. մեղի թող խաղախնակ սովորցնու: Ինչ որ կասէր Մըկըր աղայն, միայն իրմէն չէր. Սերովբէ Վարժապետի հրաւիրանաց թղթի տակն ութսուն և հինգ ստորա-

զրոզաց մէջէն հազիւ տասնհինգ հոգիք կային, որ ի սրտէ կամենային Վարժարանի շինութիւնն, կամ հայերէն լեզուի ուսումնատուութիւնն. քսան և հինգ հազար հայազգի ժողովրդեան մէջէն\*) հազիւ թէ գտնուէին երկուհարիւր հոգիք՝ որ գպրութեան հարկաւորութիւնն ճանաչէին, և այս երկու հարիւրի մէջէն հարիւր հօթանասուն և հինգն կուզէին որ իւրեանց որդիք ուսանին գրել կարդալ, բայց ուսեւրէն: Հայերէն լեզու սովորելոյ համար թէ կամենայիր գտանել ցանկացող, քսան համարել չէիր կարող:

Վարժատունն կը շինուէր Սաչատուր Սոմաճեան քաղաքագլխոյ անձնադիր ջանիւք և դեռ ծածկուած չէր, որ օգոստոսի սկիզբն (1828 ամի) եկաւ Ներսէս Սրբազան արքեպիսկոպոսն, որում տուել էր կայսրն և կաթողիկոսն կոչումն «Ծայրագոյն Վարչապետի Հոգևորական գործոց եկեղեցւոյն Հայոց»: Ազգասէր Ներսէս արհին մտաւ Նախիջևան քաղաք այն դռնով՝ ընդ որ քսան տարի առաջ ելել էր և ընդունուեցաւ Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ մէջ թագաւորավայել պատուով. Սաչատուր աղայն Յարութիւն աղայ Սալիպեանի հետ ընդ առաջ էր գնացել մինչև Տէլի Ծերոնի (Շմաթեանի) ազարակն: Եկեղեցւոյ մէջ Գարբիէլ սարկաւազն ոտանաւոր ճառ ասաց, զկնի որոյ ինքն ևս մի քարոզ ասաց, որոյ բնաբանն էր Ալլահ էքպէլ—Մեծ է Աստուած: Նոյն փառօք և հանդիսաւորութեամբ հլ և դնաց Ներսէս արհին Սաչատուր աղայի տունն\*\*): Ճանապարհին երբ տեսաւ իւր վաղածանօթ խւնախն, որուն կից կը բարձրանայր վարժարանի շինուածքն, իսկոյն կառքն կանգնեցոյց և շինութեան վրայ բարձրացաւ և նայելով բարձրաւանդակէն քաղաքի վերայ՝ ասաց. այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ: Սաչատուր աղայի ճաշը արքայավայել էր. նստած էին իշխանք և նոցա կարգին Սերովբէ վարժապետն և Գարբիէլ սարկաւազն: 1828 հոկտ. ամսին վար-

\*) Այս թիւը 1827 թուականի համար շատ մեծ է. 1816 թուականի աշխարհահամարով Նախիջևանի մէջ կար մօտ 10 հազար հայ բնակիչ: Իսկ շրջակայ հինգ գիւղերում հազիւ մի հազար: Հրտ.

\*\*\*) Այժմ Մարտ. Մանուէլ. Կասսանայեանի տունը, 26 գիծ № 3:

ժարանի օրհնութիւնն կատարեցին և աշակերտք փոխադրուեցան անդր: Տիրացու Գարրիէլն աղաչանք պաղատանք տարածեց առաջի երեւելիաց, որ մի փոքրիկ տպարան ունենան, որոյ երկու մասուլքն տակաւին Աստրախան գոլով գնիլ էր Շոթլանդեան քարոզիչներէն. այս գործը գլուխ չեկաւ, որովհետեւ հակառակորդներ կային: Բայց Նախիջևանայ մէջ բարեհոգի անձինք ևս կային բազումք: Տակաւին առաջին տարին կացրդական հանդէսի մէջ տեսնելով որ լաւ պատասխան տուող աշակերտք ոտնբաց բոկոտն են կամ պատառտուն զգեստ ունին, գանուեցան այնպիսի անձինք, որ այն աշակերտաց մէջէն ազգային բարիք գուշակելով՝ խոստացան որ մի աշակերտի, որն երկուսի տարեկան զգենլիաց հոգն ապահովել. այսպէս վարժատան մէջ աւելի քան քառասուն մանկունք սկսան խնամք գտանել ի բարեգութ անձանց: Այս տարիներն նախիջևանցոց յաջողակ տարիներն էին. նորա իրենց առևտրական գործունէութիւնն տարածել էին բազում ուրեք. ցորենի, բուրգի, երկաթի առևտուր բազմաց ձեռքն կը գտնուէր. սկսան ձիոց երամակներ գնել խալմուխի, լիթարի և նոշայի անապատներէն և վարել մինչև Լեհաստան. սկսան ոչխարաց հօտեր, եղանց և կովուց անդեաներ գնել ոչ միայն բուրգի, այլ և մորթոյ և ճարպի համար, որք առևտրական առարկայք էին. սկսան Սիբիրի կողմն երթալ և մեծ մեծ քանակօք արգար եղ բերել և Պօլիս, Իտալիա, Յունաստան, Փրանսիա և Անգլիա տարածել. երկու եղբարք՝ Կարապետ և Սաչերիս Իււնովեանք (Աւանեանք)՝ Մոլլայի աղայ մականուանեալք, վշոյ և կանեփի սերմն սկսան ցանել տալ և ի վաճառ մուծանել, որ ոչ միայն Նախիջևանի, այլ և բոլոր Ռուսաստանի առևտրական նիւթոց երեւելի տեղն գրաւեց՝ իւրաքանչիւր տարի միլիոնաւոր փութերով եւրոպա գնալով:

ԻԱ.

1830 թուին լրացաւ Սաչատուր աղայ Սոմաճեանի\*) քա-

\*) Ունէր երեք ուստիրս և երեք դստիրս. ուստիրքն էին՝ Ստեփան, Մկրտիչ և Կարապետ, դստիրքն՝ Եղիշարէթ և Դշխոյ: Եղիշարէթ հարսնացեալ էր Սարգիս Ալաճալեանի (Իրակոն թու-

ղաքագլխութեան ժամանակն և հնարագիտութեամբ Յարութիւն աղայ Սալիպեանի ընտրուեցաւ քաղաքագլուխ 1830, 1831 և 1832 թուոց համար աղայ Մարկոս մհտսի Յոհաննիսեան Պոպովեան: Այս հասմեակի դատաւորք էին՝ Գարրիէլ Սոճայեան. Սարգիս Սալիպեան. Ազսինդ Միեսիրով. Օվանէս Չախրոով և Լուսպարոն Սալթիբով:

Մարկոս աղայն ունէր ճօխ ազգականութիւն. թողունք իւր եղբայրն և քորքն, ինքն ամուսնացած էր մհտսի Աստուածատուր Լազարեանի դստերն և իւր աներորդիքն՝ Դազարոս և Յակովբ Լազարեանք յայտնի էին քաղաքի մէջ: Դազարոս Լազարեանն ամուսնացած էր Իրակոն Գէորգի դստեր Մարիամի հետ, որոյ եղբայրն Սարգիս Գէորգեան Ալաճալեան առեալ էր ի հարսնութիւն Սաթրանեան Պօղոս աղայի դուստրն Ակիւլինէ\*): Իսկ Յակովբ Լազարեանի, որ էր տանուէր բնակարանի Սերովբէ վարժապետի, դուստրն էր կին Պիտրոս Սաչերիսեան Ալաճալեանի:—Մարկոս աղայի անդրանիկ դուստրն էր կին Մինասայ Գէորգեան Շըլթեանց. երկրորդ դուստրն էր ամուսնացած Բաղդասար Սալթիկեանի. իսկ կրտսերն հարսնացել էր Մարտիրոս աղայ Սոճայեանի որդւոյն Սարգսին:—Մարկոս աղայի եղբայր Դուկաս աղայն ևս ունէր դստերք, որոց մին տուեց Մարազեան Ծերոնին, երկրորդն Կապուտկածի Սաչուկ աղայ Շորշորովի որդւոյն, իսկ երրորդն՝ Սարգիս Յովհաննիսեան Սահրատեանին, որոյ եղբայրն Աստուածատուր համախոհ էր Մարկոս Աղային յամենայն խառնութիւնս:

Մարկոս աղայն երբ ժողով կը գումարէր, նորա հրաւիրեալք կը լինէին այն անձինք, որ նորա հետ միաւորուած էին ազգա-

մասի որդւոյն). Բերսաբէն՝ Գէորգ Օտարաշեանի կրտսեր որդւոյն՝ Յովհաննիսին, իսկ Դշխոյն՝ նախ Մկրտիչ Յարութիւնեան Չոլախեանին և ապա՝ Յարութիւն Մինասեան Աւազեանին (Փոքրակոչեան):

\*) Դազարոս Լազարեանն իւր սեպհական տունը կտակեց հայ աղքատաց. այդ տունը այժմ եկ. Հոգ. ձեռքն է. այդտեղ է քաղաքային վարչութիւնը: Իսկ Ակիւլինէ Պաւլովայի փողով շինուեցաւ գերեզմանոցի ս. Կարապետ եկեղեցին. նորա տունն ևս անցաւ եկ. Հոգ. ձեռքը, ուր այժմ Սաթրանեան սրբանոցն է հաստատուած:

կանութեամբ և խնամութեամբ, վասն որոյ ինչ կամէր, կանէր: Նորա առաջին գործն եղաւ վարժապետաց եկամուտն նուազեցնել: Նա գրաւից նաև վարժարանի վերատեսչութիւնն և սկսաւ ջանալ, որ վարժարանն հանէ հասարակութեան տնօրէնութիւնէն և արկանէ Ռուսաց վարժարանական իշխանութեան ներքոյ: Մի նոր ուսու վարժապետ Սաքուն մականուանեալ՝ խոստացաւ Մարկոս աղային արքունական պարգև և նա սկսաւ այդ ջանքն յառաջ վարել. բայց երբ տեսաւ, որ մինչդեռ տիրացու Գաբրիէլն կայ, չէ կարող գլուխ բերել, սկսաւ նորա հետ ոգորելու—1831 ամի սկիզբն Աստրախանայ կողմէն եկաւ ժանդարտն, որուն զոհ գնաց Տէր Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանն: Ըստ կարգի վարժարանաց ուսաց վարժարանն փակուեցաւ ամիսուկէս ժամանակամիջոցաւ: Ներսէս սրբազանն հրամայել էր Տէր Գաբրիէլին և տիրացու Գաբրիէլին գալ ի Քիշնև, որ Քիշնևի Հոգևոր Կառավարութիւնն փոխակերպին ի Կոնսիստորիա, զի Ներսէս սրբազան Արհին կայսերական հրամանաւ հաստատուել էր Առաջնորդ Նախիջևանայ և Բեսարաբիոյ թեմին: Հրամանն եկաւ Տէր Գաբրիէլի թաղման միւս օրն, որոյ համար թշնամիք ասացին, թէ նա տիրացու Գաբրիէլի ձեռքէն յուսահատեալ թոյն է կերել մեռել է:

Իրպուկ ժամ երեցաւ Մարկոս աղային և Սալիպեան Յարութիւն աղային տիրացու Գաբրիէլի և Ներսէսի մէջ ատելութիւն սերմանելոյ. Տիրացու Գաբրիէլի վրայ հարկ կայր որ Հասարակութենէն արձակուրդ ունենալ երթալ ի Քիշնև: Մարկոս աղայն հանդերձ մակագրութեամբ յետ գարձոյց խնդիրն՝ թէ ունիս հրաման երթալ, բայց այնու պայմանաւ, որ միւս անգամ յետ չդառնաս Նախիջևան, որովհետև քո վարժապետութիւնն հարկաւոր չէ:

Յունիսի 28-ին ելաւ Նախիջևանէն և 6-ին հասաւ Քիշնև: Սուրհանդակն նամակներ բերեց և Ներսէս սրբազան գտաւ Կիրակոս Արարատեանի և այլոց մինչև երկու հարիւր ոգի բողոքագիրն, որով կը գոհագոտէին Մարկոս աղայէն, որ կը կամենայ նորաչէն վարժատունն խանգարել և յետոյ զովելով տիրացու Գաբրիէլի վարքն ու բարքը՝ կողերսէին որ քահանայական աստիճան շնորհէ և միւսանգամ վարժապետութիւնն նորան

յանձնէ, որ նոցա զաւակունքը չզրկուին: Երկրորդ նամակի մէջէն երեցաւ Մարկոս աղայի ամբաստանութիւնը տիրացու Գաբրիէլէն՝ ձեռամբ Ծիրոն Մարագեանի գրած՝ որ նա փոխանակ վարժապետութիւն անելոյ՝ աշակերտաց միայն պատմութիւններ և հէքէաթներ կը սովորեցնէ. և որ քան զամէնն աւելի է, քաղաքագլուխ Մարկոս աղային անպատիւ կանէ. վերջաբանութիւնն այս էր, որ Հասարակութիւնն չկամի, որ տիրացու Գաբրիէլն միւս անգամ վերադառնայ Նախիջևան: Ես Մարկոս աղային պատասխան կը գրեմ, ասաց Սրբազանն, թէ տիրացու Գաբրիէլն միւս անգամ չի գար Նախիջևան, այլ նորա տեղն կուզայ Տէր Գաբրիէլն, և փոխանակ քաղաքական վարժարանի՝ կուսենայ Հոգևոր վարժարան: Այդտեղ գրանն երեցաւ Թադէոս սարկաւազն (որ յետոյ եղաւ Թադէոս վարդապետ յաջորդ Խրիմու և վերջապէս Թադէոս եպիսկոպոս՝ առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի), և Ներսէս ասաց. առաջնորդէ տիրացու Գաբրիէլին և լաւ հանգիստ ընակարան տուր: Տիրացու Գաբրիէլն ընտրեց իւր համար Գրիգոր սրբազանի բաղանիսն, և սկսեց մաքրել և յարգարել: Նոյն օրն մողձացաւ հանդիպեցաւ տիրացու Գաբրիէլն. Ներսէս եկաւ և Գաիթ բժշկի պատուիրած տեղն տուեց և իւր ամս բժշկապետին Սիմաշկային հրամայեց ծանուցանել և ինքն պատրաստուեցաւ երթալ Գրիգորիպոլիս:

Մինչդեռ տիրացու Գաբրիէլն Քիշնև էր, Յարութիւն վարդ. Ալամդարեանն եկել էր Նախիջևան և իջևանել էր Սիրովբէ վարժապետի տունն: Յարութիւն վարդապետն ինչպէս որ 1822 թուին եկել էր յԱստրախան և կամեցել էր տիրացու Գաբրիէլի տեղն գրաւել, բայց չէր յաջողել առնել ինչ, գնացել էր յետ Մոսկվա, նոյնպէս և այժմ իմանալով որ տիրացու Գաբրիէլի հակառակորդը Նախիջևանի մէջ աւելի զօրեղ են, անցել էր նոցա կողմն. Բանի մի օր մնալէն յետ Նախիջևանի մէջ, իւր հետ ունելով Ներսէս Սրբազանի ընտրողին՝ Զաքարիա Յովհաննիսեան Շահազիզեանցն եկել էր Գրիգորիպոլիս. յետ տեսակցութիւն կատարելոյ Ներսէս Սրբազանի հետ՝ եկել էր Քիշնև:

Վերափոխման կերակէին մինչ հոգևորականք և աշխարհականք ամենեքին համբուրեցին սրբազանի աջն, յետոյ քան զամի-

հետին յառաջ մատեաւ տիրացու Գաբրիէլն: Ներսէս արհին բարձր ձայնով ասաց. կաց այդ տեղ և մի շարժիր. բերանն բացեց և սկսու նախատինք տալ տիրացու Գաբրիէլին. սկսու պատմել 1802 թուէն մինչ Գաբրիէլն ութամեայ մանուկ էր, յետոյ պատմութեամբ հասաւ մինչև 1820 թուին, երբ հրամայել էր, որ տիրացու Գաբրիէլն երթայ Տփլիս և չէր գնացել, և յետոյ Գէորգ աղայ Արծրունւոյ միջնորդութեամբ Տէր Յարութիւն Ալամդարեանին էր վարժապետական պաշտօն անուշարկել. և ինքն 1827 թուին կկել է Նախիջևան և այնտեղ շփոթներ է հանել, որոյ պատճառաւ Տէր Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանն միտել է. և այս պատճառաւ Նախիջևանցիք նորան քաղաքէն արտաքսել են և ինձ ևս գտնվատ են գրել և Յարութիւն Վարդապետի բերանով ապսպարել, որ միւսանգամ նորան Նախիջևանցւոց երեսն ցոյց չտամ: Այդ ժամանակ թղթաբերն սրբազան Առաջնորդի հանդէպ դրաւ Հիւսիսային Մեղու (Северная пчела) կոչեալ օրագիրն: Ներսէս տուեց արքայազիր էին. առաջինն. Եփրեմ Կաթողիկոսի անուամբ՝ որով արձակուրդ կուտար Հայրապետական պաշտօնէն: Երկրորդն՝ դարձեալ յանուն Եփրեմի՝ որ խնդրել էր իւր տեղ Հայրապետական Աթոռն տալ Յովհաննէս Արքեպիսկոպոսին Կարբեցւոյ. երրորդն յանուն Յովհաննէս Արքեպիսկոպոսի, որով կը հրամայէր նորան ընդունել Հայրապետական Աթոռն և ձեռնադրութիւն:

Կայծակնահար կղաւ Ներսէս. ես չեմ թողնիր, ասաց, որ Յովհաննէս իւր նստելովն Հայրապետական Աթոռն պղծէ—պատերազմ ունիմ Նիքոլայի դէմ. նա իւր կայսերական խոստումն պիտի կատարէ\*):

1832 թուի յունվարի 17-ին կիւրակէ Գրիգորիոսպոլիսի մէջ կղաւ ձեռնադրութիւն տէր Գաբրիէլի և նոյն օրն աղայ Աստուածատուր Սաթովհանն կտ ճաշկերոյթ մեծ: Փետրվարի 28-ին

\*) Այստեղ ընդարձակօրէն պատմում է տ. Գաբրիէլը անձնական ղէպքեր, որ գտնեց կառնենք մէջ բերել, մանաւանդ որ պ. Նահապիղը մէջ է բերում այս ու այն նախընթաց և հետևորդ հատուածները, բառացի առնելով Նոր-Նախիջևանի Հարբերամեակից:

լրացաւ տէր Գաբրիէլի նորընծայութեան քառասունքն և տէր Գաբրիէլ պատարագ մատուց ս. Նշան կկեղեցւոյ մէջ. Սաւառնցոց խնդրով ևս նոցա կկեղեցւոյ մէջ պատարագեց:—Գրիգորիպոլսոյ ժողովուրդ գաղթեալ էին Քիլի, Իսմայէլ, Սաւառն, Ախքերման և այլ քաղաքներէ: Ունէին երկու քահանայ. աւագերէցն էր ութսուն և եօթնամեայ տէր Գէորգն, որ ի քառասուն և հինգ ամաց հետէ ունէր աւագ քահանայութիւնն, այլ ճարտարախօս և հնարագէտ. իսկ խաւառնցւոց կկեղեցւոյ քահանայն էր տէր Յովհաննէս իննսունամեայ քահանայն՝ այլ յաղթահասակ և զեղիցկաղէմ: Սորա բաջ տեղեակ էին Սրբիմու հայոց ղէպի Նախիջևան գաղթականութեան և սորա ասացին, թէ Դաւիթ բէգն ունի իւր հօր սուա էլչի Ստեփանի ձեռամբ գրած այն պատմութիւն, որ ինչպէս տէր Մարկոսն և տէր Բարդուղիմէոսն երկու հարիւր ութսուն և հինգ հոգով գնացել է յօգնութիւն Դաւիթ բէգին: Նորընծայ տէր Գաբրիէլն այս լսելով խնդրել և առել է Դաւիթ բէգէն այս ինքնաձեռագիր գրած տետրակն և կարդացել ու ուղարկել է առ Ներսէս սրբազան և նա տուել է Յարութիւն վարդապետին ընթեռնուր: Երբ Ստեփան վարդապետն Կաշի մականանուհալ պիտի երթայր էջմիածին, Ներսէս տուել է այն տետրակն, որ հասուցանէ Դաւիթ բէգին. բայց Ստեփան վարդապետն այն տետրակն տարաւ յէջմիածին և տէր Գաբրիէլն իմացաւ, որ այն տետրակն կորաւ յաւիտեան\*):

Ներսէսի հրամանով տ. Գաբրիէլ դարձաւ Քիչնև, բայց Չատկի չորեքշաբթին առաւօտն գնաց Ախքերման, ուր յաւուրց Գրիգորի արքեպիսկոպոսի կային մնացած մաքսաբանի մէջ բազում ինչ առաջնորդական. ամենայն ինչ կատարեց նա: Վերջապէս մայիսի 10-ին դարձաւ ի Նախիջևան՝ ընդ ամէնն իբրև մեռած սան ամիս մնալով ի Քիչնև:

ԻԲ

Տէր Գաբրիէլն հասաւ Նախիջևան: Տեսնենք թէ քաղաքա-

\*) Այս Դաւիթ բէգն վախճանեցաւ Քառասուն Մանկանց շաբթու Նախընթաց հինգշաբթին: Սրբազանն Ներսէս ասաց մի դամբանական, որ հիացոյց զամենեսին:

գլուխ Մարկոս աղայն թնչ էր արել: Նախ և առջ հազար ուսուցիչ ուսուցիչն վարժապետաց նուազեցուցել էր մինչև չորս հարիւր, պատճառելով թէ տիրացու Գարրիէլն գնացել է Քիշնև: Երկրորդ՝ Նախիջևանցիք տօնավաճառ ունէին Ռոստովցուց հետ ընկերաբար. որովհետև մաղձացաւի պատճառու Նախիջևանցիք չգնացին տօնավաճառ, Մարկոս աղայն պայմանեալ կրպակավարձն չհատուց, որով պատճառ ետ Ռոստովցուց իսպառ մերժել Նախիջևանցիներն ընկերութեանէն տօնավաճառին. յերկուց կողմանց բողոքներ գնացին պալատ և ի ծերակոյտ՝ և զկնի մեծամեծ գումարներ մսխելոյ՝ Նախիջևան զրկուեցաւ յիրաւանց տօնավաճառին զկնի յիսնամեայ ընկերութեան: Դժնաւիս գիտոյ վերայ Նախիջևանցիք և Ռոստովցիք ունէին ընկերական կամուրջ: Ռոստովցիք տեսնելով թէ տօնավաճառի գործն յաջող կերթայ, կամեցան կամուրջն իսպառ խլել Նախիջևանցուց ձեռքէն, որ թէպէտ և չմարթացան, բայց որովհետև վէճն ծագեալ էր արդէն, բացվել էր ապագայ քաղաքազլխոց համար լայն գուռն ծախուց:

Մարկոս աղայն իւր սկսեալ մեծագործութիւնն կամելով ի կատար ածել, յայտնեց յուլիսի սկիզբն, որ որովհետև տէր Գարրիէլն Պատկանեան Հոգևորական Կառավարութեան մէջ պաշտօն պիտի վարէ, վասն որոյ և մնացեալ չորս հարիւր ուսուցիչն, որ կատանային Սերովբէ վարժապետն և տիրացու Պետրոսն այսուհետև չունի այլ ևս հատուցանել. վասն որոյ և նորա իսպառ հրատարեցան Քաղաքական Վարժարանէն, և տէր Գարրիէլն հրահրամանաւ Ներսէոյ արհույն բացեց Հոգևոր Դպրոց (Սերմնարան), ուր և սկսաւ աշակերտ ժողովել\*): Մարկոս ա-

\*) Սկզբնապէս տէր Գարրիէլը Հոգևոր Կառավարութեան բոլոր գործերն էր գրում, ինչպէս որ ցոյց են տալիս բոլոր սևագրութիւնները նորա ձեռքով կատարուած. և արդէն իսկ Կառավարութեան գործերը կարգի ձգելու համար Ներսէսը նրան ուղարկած էր:—Սերմնարանը բացուեցաւ 1832 թուի օգոստոսի 9-ին: Ուսանելի առարկաներն էին. Այբեհարան՝ հայերէն և ռուսերէն, Հեգ Սողոմոս, Քրիստոնէական վարդապետութիւն՝ աշխարհիկ մեկնութեամբ, Պատմութիւն ս. Գրոց աշխարհիկ լեզուով և Ռուսերէն. Քերականութիւն. Աշխարհագրութիւն. Պատմութիւն Հայոց, Ճարտասանութիւն, Պարզագրութիւն և Պատմութիւն Ռուսաց: Աշակերտները պէտք է երկուշաբթի, չորեք-

դոյն օգնութեամբ այլոց ընկերաց սկսաւ զանազան որոգայթներ լարել քննդէմ Հոգևոր Վարժարանին՝ նորա աշակերտաց ծնողացն նեղութիւն տալով\*): Մկրր և Մարկոս աղայն տեսնելով որ միայն Մկրտիչ (Եկանեան) Վարժապետի ընդգիմութեամբ չեն դրեր Հոգևորական Վարժարանին այնքան վնաս տալ, մի այլ վարժապետ ևս հնարեցին քաղաքի մէջ. սա էր ուսումնական Թէոդորոս Խատամեան՝ ի ձեռատուն աշակերտաց Յովակիմ վարդապետի Սալլաթեանց, որոյ աշակերտ եղաւ աղա Կարապետ Մարգարեան Հայրապետեան: Նոր-Նախիջևան ունէր չորս վարժարան, առաջինն էր Քաղաքական նորաշէն Վարժարանն, ուր վարժապետ էր Թիքիճի Օհանն. երկրորդն էր՝ Հոգևորական Վարժարան. երրորդն էր՝ Մկրտիչ Եկանեան վարժապետի Վարժարանն, ուր գեղեցիկ գրչութիւնն միշտ կը մնայր միօրինակ ծաղկման մէջ, և չորրորդն էր Խատամեանի Վարժատունն՝ ուր միայն 80 աշակերտը կային:

Ներսէս Արհիւն հրամայեց, որ վախճանեալ տէր Գարրիէլ տէր Գարրիէլեանի ծուխն արուի նորընծայ տէր Գարրիէլ Պատկանեանին: Տէր Գարրիէլ իւր ծուխն ի սկզբանէ անձամբ հովուած չէր, այլ ձեռամբ տէր Մինասի և ապա տէր Աստուածատուր Շաբոշնիկեանի: Ահա այստեղ սկսաւ շփոթ ու խռովութիւն մեծ: Բայց ի վերջոյ այնպէս կարգադրուեցաւ որ ցանկացողք

շաբթի և ուրբաթ պէտք է հայերէն սովորէին, իսկ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ՝ ռուսերէն: Բոլոր գպրոցը երկու դասարան ունէր, բայց բաժանուած էր եօթը տարուայ ընթացքի: Ուսուցիչներն էին. տ. Գարրիէլ Պատկանեանց, տիրացու Պետրոս Պատկանեանց և նոյա հայրը՝ Սերովբէ վարժապետը, որ պիտի ուսուցանէր ճարտասանութիւն: Եկեղեցիներէն յատկացուած էր 2500 ռուբլի, որից 1820 ռուբլին արոււմ էր ուսուցիչներին: Սերմնարանի համար վարձուեցաւ Յակովբ Աստուածատուրեան Լազարեանի տունը (այժմ՝ Պլոտնիկեանց տունը) 300 ռուբլիով: Դպրոցը իւր գոյութիւնը շարունակեց մինչև 1835 թմի մայիս ամիսը: Ունէր թէ հոգևորականների և թէ աշխարհականների որդիք:

\*) Այստեղ էլ ձգում ենք գուտ անձնական բնաւորութիւն կրող հատուած:

լինին Տէր Գաբրիէլի ծուխք, (թէ և 1832 թուի հոկտեմբերի 10-ին արել էր Նախիջևանի դումը իւր բրիկաւորը\*):

ԻԳ

Եւ ոչ ումիք անգամ զարմանալի չհղաւ Յարութիւն աղա Պօղոսեան Սալիպեանի ընտրութիւնն 1833, 1834 և 1835 ամաց քաղաքապետութեան համար: Տարեմտի օրն 1833 ամի կատարուեցաւ երգումն նորընտիր քաղաքապետոյն և նոյն օրն Պատարագամատոյցն էր տէր Գաբրիէլ Պատկանեան, և ինքն կատարեց երգմանցոցն պաշտօն: Չկնի երգման գնացին ամենեքին ի մագիսարաթ, ուր նախկին քաղաքապետ Մարկոս աղայն յանձնեց քաղաքի խորհրդարանն ու Հասարակութեան գործերն և նորընտիր դատաւորներն նոյնպէս, որք էին. առաջին դատաւոր՝ Լոյսպարոն Սալթիկով, երկրորդ դատաւորն իր՝ Սաչուկ Շուշուով, Պօղոս Մելքոնով. Աղամ Քարայով և Համբարձում Մարգարով:

Սկսեալ յօրէ հիմնարկութեան Նախիջևանայ՝ ոչ որ յերեկիաց նորս ունեցել է այնքան յաջողութիւն և ձեռնահասութիւն քաղաքին և Հասարակութեան աննկ բարի, և յատկապէս պաշտպան լինել ուսման և ծաղկեցնել հայոց լեզուն, որքան կարողութիւն ունէր աղա Յարութիւն Սալիպեանը. այլ ոչ որ այնքան պատճառ չէ հղիալ այս ամենայն բարեմասնութեանց նահանջման և յետադիմութեան, մանաւանդ վարժարանաց, որքան նա:

1833 թուի ամառը սաստիկ երաշտ եղաւ և հացի թանկութիւն: Տէր Գաբրիէլն եկեղեցիաց զբաժներն՝ ձեռամբ Չախրեան Յովհաննէս աղայի, որ Լուսաւորչի աւագ եկեղեցոյ հրեսփոխան էր, հանելով ի ներքոյ կնքոյ՝ հաց գնել տուեց, որով այն ամառը մեծ թեթևութիւն եղև աղքատաց, և այն սովատանջ տարին անցուցին առանց մեծ ինչ նեղութեան:

Այլ Սալիպեանի քաղաքապետութիւնն կը հանդերձէր ի

\*) Չգում ենք ընդարձակ հատուած: Բրիկաւորը տես եր. Շահազիզի Տէր Գաբրիէլը, եր. 130:

զուրի քաղաքին բերել այլ մնաս, որ չէր ինչ նուազ քան զայն: Ի 1833 ամէ հետէ Սալիպեան սկսել է ջանալ, որ Գանձարանն արքունի որպէս կընդունէր Թագանրոզի, Ռոստովու և այլ շրջակայ քաղաքաց քարակերտ շինուածքն գրաւական արքունի կապալաուութեանց մէջ, Նախիջևանայ շինուածքն ևս ընդունի նոցա հաւասար: Սալիպեանի ճիգն պսակեցաւ. 1834 մարտի 7 համար 6875 հրովարտակ հրատարակեցաւ ծերակուտէն:

Մեծ ուրախութիւն պատճառեց Նախիջևանայ մէջ քարապատուստ շինուածոց տէրանց և մանաւանդ համախոհից աղայ Յարութիւն Սալիպեանի, որ իւր յաղթանակի հանդիսովհանութիւնն սկսաւ տօնախմբել, և նորա կուսակիցք Մըկըր աղայ Փոփովեան, Մարկոս Փոփովեան, երեսփոխան Յովհաննէս Չախրեան, Յովհաննէս Սահրատեան, Սարգիս աղայն, Չէնկիւն Կարապետան, Մէլրոխ Սաչատուրեան Կոնոյեանց, Գրիգոր Չէթունեանց, Մովսէս Սալտուաուիսեան, Ալէքսան Դոխլիանչիքեան, Սաչատուր Կարապետեան Ալախանեան և Գրիգոր Յովհաննիսեան Աբրահամեան միծապէս ուրախացան:

Աղայ Յարութիւն Սալիպեանն մագիստրաթն պահեց ի նոյն զրութեան, յոր իջուցել էր իւր նախորդ Մարկոս Փոփովեան՝ մատնելով ի կամս և ի հաճոյս Մկրտիչ Սիմոնեան Մարագեանի: Վարժատունն պահեց այն խաւարի մէջ, ուր ընկղմել էր իւր նախընթաց պաշտօնավարն. հարիւրաւոր անմեղ մանկունք երթեակ կանէին վարժատուն (խօնախ) միայն անկարգութեանց մէջ զարգանալոյ համար: Սակաւք ոմանք մարթացան իւրեանց դաւակաց մէջէն մին ազատել այս կամաւոր կուրութեան խօթութեանէն. աղայ Մանուկ Ալաճալեան իւր Խոսհակ որդին առաքեց ի Մոսկուա, որ այս վերջինս հետամուտ եղև բժկութեան. Մովսէս աղայ Սալտուաուիսեանի փեսայն Պերպերեանն իւր որդին առաքեց նոյնպէս ի Մոսկուա, ուր և ուսաւ բժշկութիւն: Յառաջ քան զնոսս գնացեալ էին ի Մոսկուա երկու կորարք Տիգրանեանք, որոնց մին եղև բարեհամբաւ վարժապետ ի Նոր-Նախիջևան և յետոյ ի Թէրզասիա Սարգիս Տիգրանեան, և միւսն Գէորդ Տիգրանեան, որև ստացաւ զովտորութիւն: Յետոյ յաւելան և երկու հղբարք Սալիպեանք: Ընդ սոսա զասելի է և

անունն Լէօն Արքահամհանի բժշկի, որ յերիտասարգական տիս փոխեցաւ յաստիացս, և անունն Ալեքսանիոսի Շըլթեան, որ վարէ զպաշտօն բժշկութեան յայլ քաղաքս:

Սորա նման եղև և Սարգիս Տիգրանեանի վարժապետութիւնն: Մերձաւոր ազգական էր Մարկոս աղայի և կողմնապահ Սալիպեանի. քաջավարժ էր ի համալսարանական գիտութիւնս և հմուտ բնորոժ Եւրոպական լեզուաց: Ընկեր էր երևելի ձեմարանաց, որոց և խնդրովք արար Հայոց քերականութիւն և Եղիշէի Պատմագրութեան թարգմանութիւնն ի լեզու Գաղղիացւոց, և ի հայ բարբառ ի լոյս ընծայեաց ի Մոսկուա զԳիթոզիայն՝ ողբերգութիւնն Ռասինայ: Այլ վարժապետութիւնն նորա երեր այսքան պտուղ, զի բազումք յաշակերտաց նորա ճանաչեցին, թէ ինչ գաղափար ունէին Գաղղիոյ յեղաշրջութեան շարժառիթ իմաստասէրք եկեղեցւոյ և ընդհանրապէս քրիստոնէական եկեղեցւոյ և կրօնի վերայ: Սա քանի տմ վարժապետութիւն արաւ և ապա հրաւիրեցաւ լինել վերատեսուչ Սալիպեան զպրոցի ի Թէոդոսիա. յետ խանգարման որոյ մեկուսացաւ իւր դատեր կալուածքն և անդ անցոյց իւր կենաց մնացորդն:

(Սալիպեանի օրով Նախիջևան եկան Ալթունեան Մանուէլ վ. Կիւմիշխանցին և Սալլանթեան Միքայէլ վարդապետն, որոյ մասին երկարօրէն խօսում է տէր Գարրիէլն, որ զանց կանհնք, որովհետև պ. Ե. Շահազիզը այս գրքից առնելով այդ ամենը մէջ է բերում իւր Տէր Գարրիէլ Պատկանեանց գրուածքի մէջ):

Գլուխ ԻԴ

Աղայ Գարրիէլ Սոջայեան 1836, 1837 և 1838 նստաւ քաղաքագլխութեան աթոռն որպէս զբաստ բեռնակիր, որոյ պախուրցն մնաց Սալիպեան Յարութիւն աղայի ձեռքն: Սոջայեանն էր վաճառական և ոչ այլ ինչ: Իսկզբան կծծի կենցաղավարութեամբ և աղքատաբար ապրելով փոքրիկ գրամագլուխ գոյացուցանելով և ընկերակցաց մէջ զօշաքաղութիւն անելով և ծառայից ու գործակցաց մշակավարձն հատանելով, այն զբամագլուխն օրբասօրէ աճեցուցանելով և քանի անգամ հետզհետէ աջողակ առևտրի հանդիպելով՝ առաջին անգամ բախտն ժպտե-

ցաւ նորան այնու՝ որ առաւ իւր ի կնութիւն Նիկողայոս աղայ կողոտեանի զուտրն, և երկրորդ՝ որ Մըկըր աղայ Փոփովեանն եղև նորա քենակալն և երրորդ՝ բազում անգամ քուէ վաստակեցաւ և ստորագաս դատաւորական աթոռ նստաւ քանիցս և վերջապէս առաջին դատաւոր ևս ընտրեցաւ հանգոյն եղբօր իւրոյ աղայ Մարտիրոսի: Ի 1830 ամէն սկսեալ սպրդեցաւ ի թիւս մեծատանց՝ երբեմն Օտարաշեանին քծնելով և երբեմն Սալիպեանին և Սեմաճեանին յարելով. և բազում անգամ Մարկոս Աղային թիաքարչ լինելով. ոչ ճարտարախօս էր նման կիրակոս աղայ Արարտեանի, ոչ հանձարեղ հանգոյն մահտեսի Մանուկ Թուֆլիկեանի. ոչ առատաձեռնութեամբ Պետրոս աղայ Բաբասինեանի զարգարեալ և ոչ սեղանաբացութեամբ Միքայէլ աղայ Յուսիկեանի պերճացեալ:

Թեւազրութեամբ Սալիպեանի եմուտ ի վարչութիւն քաղաքագլխութեան, այլ ել անտի կրկնապատիկ ձոխացեալ:

Սալիպեանն հրամայեալ էր Մարկոս աղայ Փոփովեանին նուազեցուցանել զվարձ պաշտօնավարաց, զի ինքն յորժամ քաղաքագլուխ նստի՝ աւելցնու, որ ասուի թէ լաւ մարդ է, և եղել էր այնպէս: Այժմ նոյն հրաման տուեց և Գարրիէլ աղայ աղա՛մ Սոջայեանին, որ նա պաշտօնատարաց վարձն պակսեցնէ, երկուցանելով, թէ եթէ քաղաքական եկամուտն չձածկէ քաղաքական ծախքն՝ քո ծոցն հատուցանել կը բռնադատենք: Սոջայեան արար ըստ այնմ: Բայց Սալիպեան որոց միանգամ կամեցաւ, միջնորդեց և աւելցնել տուեց, որով ինքն հանդիսացաւ բարերար, իսկ Սոջայեանն թշնամի:

Սալիպեանն ստէպ կերթայր ի Թագանրոզ վասն իւրոյ առևտրական գործոց, կամ այլոց դատափետութեանց, որովհետև չէր սիրեր որևիցէ գործ առանց դատաստանի և վիճաբանութեան աւարտել: Վասն ուրոյ և Սալիպեանն բազմաց հետ գործ ունենալով, պարտաւոր էր քաղմաց տալ կաշառս և պարգևս. բայց քանզի չսիրէր ի ծոցոյ իւրմէ առատաձեռնել, կը հրամայէր Սոջայեանին տալ վասն քաղաքական գործոց այսքան այսմ և այնքան՝ այնմ. և նա ոչ կարէր զլանալ: Սալիպեանն խոստանայր խրախճանս տալ պաշտօնատարաց քաղաքակալութեան և Սոջայ-

եանն հատուցանէր զծախս, և գրէր ի քաղաքական տօմարի ելից, թէ այսքան ծախք ի պէտս քաղաքի և հասարակութեան եղին:

Դատաստանն մնայր ի նոյնութեան, որպէս և էր յաւուրս Մարկոսի և Սալիպեանի. երկու եղբարք Մարազեանք թագաւորէին. մին Մկրտիչ ի Մագիստրաթի, միւսն Ծերոն՝ յիրաւարանի Որբոց: Մարտիրոս Քուշնարեանն պարապէր ի թարգմանութիւնս: Եւ զինչ էր նիւթ սորա թարգմանութեան: Մկրտիչ Մարազեանն զոր և իցէ վէճ որ ունէր ի կողմն Հայոց ատենադպրութեան, զի-զարդէր զթուղթս ի վերայ հիման Դատաստանագրոյն Հայոց կոչեցեալ: Յորժամ աղքատանային դատախազք և ոսոխք և յուսահատէին, ապաստանէին յօրէնս Ռուսաց. ահա զայսոսիկ թուղթս ունէին թարգմանել, զի հասու լինիցի ատենադպիրն Ռուսաց:

Բազում ինչ գայր և յՈրբոց իրաւարանէ. ուր կան ի մատեանս հաշիւք որբոց և այրեաց, այլ դրամք նոցա եղեալ են պարտք քաղաքի և իւրաքանչիւր քաղաքագլուխ փոխանակ պարտքն հատուցանելոյ և նուազեցնելոյ, անդադար կաւելացնէր: Մինչդեռ կենդանի էր Ծերունին Սիմէոն Աչաքովսքի, Յորբոց իրաւարանի գործերն չէին այնքան կնճակալ. այլ երբ նա քանի ամօք յառաջ քան զմահ իւր հեռացաւ ի պաշտօնէն և քարտուղարութիւնն մնաց ի ձեռս Ծերոն Մարազեանի և յետ ժամանակաց էանց ի ձեռս Թէոփորոս Սատամեանի, որ ի մանկավարժութենէ եղև քարտուղար, հաշիւք այս բարի և մարդասիրական նպատակաւ կարգադրեալ Հաստատութեան փոխեցան ի լապիւրինթոս: 1831 սեպտեմբերի 30 վարչապետական ծերակուտէն ելաւ այն Հրովարտակն, որով որոշուեցաւ, որ յայնմհետէ Նոր-Նախիջևանայ մագիստրաթն՝ ըստ գործոց Որբոց և Այրեաց Հոգաբարձութեան լինի կախեալ Եկատերինոսաւեան Քաղաքական Պալատէն և այս անօրէնութեանն շարժառիթն էր այս, որ Եկատերինոսաւեան Քաղաքական Պալատն բողոքել է առ Վարչապետական Ծերակոյտն, թէ Նոր-Նախիջևանի որբոց և այրեաց գանգատքն անընդհատ կը հասնեն առ Պալատս. և մինչ Պալատն հարցուփորձ կսկսի անել, Նոր-Նախիջևանայ մագիստրաթն կը պատասխանէ, թէ մագիստրաթն ունի Ամենողորմ շնորհեալ պարզեալիւր և նորա զօրութեամբ կը վարուի, վասն որոյ և

չի համարիր զինքն պարտաւոր հաշիւ տալ ումեք և նորա հաշուեցուցակն կը վաւերացուցանէ քաղաքագլուխն: Այս կարգն լաւ էր, եթէ ամենայն քաղաքագլուխը լինէին այնպէս արդարակորով, որպէս էր աղայ Միքայէլ Կողպէթլեան և այլք, և ատենադպիրք լինէին հաւատարիմ անձինք, որպէս էր Ստեփան Փէշլիվանեան:

Վարիչն Նախարարութեան աշխարհմիջեան իրողութեանց Նովոսելցովը ևս խնդրէր ի Ծերակուտէն ի 1831 ամի վճիռ ինչ թէ զիմօրդ պարտ է վարել ինքն այս հանգամանաց մէջ, որովհետև վեհաճոյն հրամանագրութեամբ տէրութեան մէջ նոր կարգադրուեցան դատապետութիւնք և ըստ այնմ կարգադրութեան հանդերձեալ է մտանել և որբոց և այրեաց Հոգաբարձութեանց կանոն. այլ Նոր-Նախիջևանայ մագիստրաթն և քաղաքագլուխն կը մերժեն զայն յինչով իրենց Պարզեալոյն, որ շնորհեալ է նոցա ի 1779 նոյեմ. 14: Այս առաջարկութեան վերայ հրատարակուեցաւ այն հրովարտակն ի ծերակուտէն ի 1831 սեպտ. 30, որով հրաման եղև, որ Նոր-Նախիջևանայ իրաւարանն Որբոց և այրեաց լինի ընդ իշխանութեամբ քաղաքական Պալատին, որպէս և Քրէսկան մասն դատաստանի մագիստրաթին էր ի սկզբանէ անախ ընդ տեսչութեամբ Քրէսկան Պալատին: Նախիջևանայ մէջ այս նոր հրովարտակն հրատարակուեցաւ ի վերջին աւուրս Օտտարաշևան Գեորգ աղայի քաղաքագլխութեան: Բայց այս հրովարտակն ևս գործագրութիւն չգտաւ Նախիջևանի մէջ Սալիպեանի քաղաքագլխութեան ժամանակ: Աննհրելի էր Յարութիւն աղայ Սալիպեանի նենգամիտ անփութութիւնն որբոց և այրեաց հաշուոց կարգադրութեան մասին, որոյ ազագու միշտ յեկեղեցոյ քարոզելով կը որոտայր տէր Գաբրիէլ Պատկանեան, որոյ առաջնակարգ աշակերտաց մին՝ Գրիգոր Կարապետեան Մաղլըմեան կըմաշուէր որբոց և այրեաց իրաւարանն երթեկելով:

Սալիպեան փոյթ չունեցաւ որբոց հաշիւները պարզել. ինչ կասկած կայր որ և Գաբրիէլ աղայ Սոջայեանին ևս պիտի ճանապարհ չտայր որ նա անէր. այսպէս անցաւ և այս երբօրդ եռամեակն:

Գաբրիէլ աղայ Սոջայեանի ժամանակ ևս վարժարանն մնաց



այն աստիճանի մէջ, ուր իջուցիլ էր զնա ուսումնասիրութիւն Մարկոս աղայի, պահել էր ազգասիրութիւնն Սալիպեան Յարութիւն աղայի: Քաղաքի տուրեւանքին կը ճոխանայր, քաղաքացոց մտաց աղջամուղջն կը թանձրանայր. բուսական և զգայական կենօք շատանալ, մի քանի հազարի տէր լինել, պէզէսթէն մի կրպակ ունենալ, ուտել, խմել և քէֆ անել, այս էր նոցա նպատակ:

Գարբիէլ աղայ Սոջայեանի քաղաքագլխութեան ժամանակն 1836 թ. հկաւ յէջմիածնէն Վեհապետեան Յովսէփ արքեպիսկոպոսն Փոքր կոչեցեալ, որ էր սպասաւոր Սրբազան Հայրապետին եփրեմի:

Ի վերջ 1836 ամի յառաջնում տարւոջ քաղաքագլխութեան Գարբիէլ աղայ Սոջայեանի տէր Գարբիէլն զրկեցաւ ի բահանայագործութենէ. Հոգևոր վարժարանն փակեցաւ. ուստի զնաց ի մերձակայ քաղաքն Ռոստով, ուր կայր արդէն նահանգական վարժարան և անդ արկեալ իւր անձն ընդ ըննութեամբ ընկալաւ զվկայական և զիրաւունս բանալոյ առանձին զերկլիզուեան վարժարան Հայոց և Ռուսաց. Ի 1837 ամի զնեաց զնոր տուն\*), ուր և փոխադրեաց զիւր վարժարան, ուր աշակերտեցան նման՝ Յակովբ Մատթէոսեան Խըլճճեան՝ մի ի նախկին աշակերտաց Մկրտիչ վարժապետի Եկանեան, Պօղոս Ստեփանեան և եղբայր նորա Մարգիս Նազրեանց, և Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց (Ուստայեան, Գարբինեան), Գրիգոր Կարապետեան Սալթիքեան (Սարամբղայեան) և այլք:

(Այստեղ հեղինակը երկարօրէն խօսում է իւր անձի մասին. այս կտորները բերուած են Եր. Շահազիզի Պատկանեանի մէջ):

Գլ. ԻԵ

Քսաներորդ առաջնորդ հռամեակ

(1839, 1840 և 1841)

Հասարակութիւնն ի հեռաստանէ կը զուշակէր իւր հան-

\*) Այս տունը Կոտոշի Դանիէլին է պատկանել. անցել է տէր Գարբիէլին. ապա Պոպովենց և այժմ սեպհականութիւն է Սոսուլեան Յակովբին: Հրատ.

զերձեալ չարաքաստիկ վիճակն, որոյ մէջ պիտի կորնչէր Սալիպեան ա. Յարութիւնի և նորա շաւղաց հետևողաց շնորհօք, որ արդէն նորա զպրօցի մէջ դաստիարակուելով կը պատրաստուէին, որ ժամանակաւ նստելով քաղաքագլխութեան աթոռն՝ հանդիսանան հասարակաց գանձուն գող և աւաղակ: Հասարակութեան մէջ քաղաքի օգտին նախանձախնդիր մարդիկ կային. Ղոյսպարոն Սալթիքեան, Նիկողայոս Սոմաճեան, Պետրոս Սախաւեան երբեմն նստան գատաւորական աթոռ. այլ որովհետև համաձայն Սալիպեանի սրնգին ու տաւղին չկաքաւեցին, միւս անգամ քուէ չվաստակեցան: Այս անարատ մարդիկ ինքեանք ևս ցանկացող չէին աթոռոյն: Ո՞վ էր քան զՍտեփան աղայն Նազրեան պարկեշտ, ճշմարիտ և արդարախոհ. սակայն նա երբեք չէր հրաւիրուէր ժողով, որովհետև ի հաճոյս Սալիպեանի չպիտի խօսէր և ընդգէմ իւր խղճի և համոզմանց ձայն հանէր: Փոխանակ նորա միշտ հասարակութեան ժողովոց մէջ կը գտնուէր Քերովբէ Սալթիքեան, որ Սալիպի լրտեսն էր: Սորա նման էր և Գրիգոր Զէյթունեանն և երկու եղբարք խանթարճի Ազայեկեանք, Մինաս և Գրիգոր Շլթեանք և այլք բազումք:

Գարբիէլ աղայ Սոջայեանէն վերջը քաղաքացիք բաժանուեցան երկու կուսակցութիւն, որոց մին կը կամենայր քաղաքագլխութիւնն տալ ծերունի Յակովբ աղայ Թամանցեանին, որ խօսեմ ու հանձարեղ անձն էր, արդարակորով և ճշտօմարան. միւսն անընդհատ կը յիշէր Սաչատուր աղայ Սոմաճեանի անբիծ ծառայութիւնն: Հասաւ ընտրութեան զիշերն և ընտրողք իւրեանց քուէքն տուին ըստ հաճոյից Սալիպեանի, և Սաչատուր Սոմաճեանն ընտրուեցաւ այս անգամ ևս երկու շուէց սուսուլութեամբ. Սաչատուր Սոմաճեանն նստաւ քաղաքագլխ Սոջայեանի 1839 թուին:

Սաչատուր աղայն զիտէր որ այս եռամեկի քաղաքագլխութիւնն տրուեցաւ նորան անցեալ եռամեկի յիշատակաւ, և կարծեց՝ թէ այն եռամեկի անարատ անուան ներքոյ կարող է այս եռամեկի մէջ անել իւր աւաղակութիւնն. Սաչատուր Սոմաճեանէն սկսան երես դարձնել իւր համախօհք՝ պաղիրկեան պաշի Պետրոս աղայ Պապասինեան, Մինաս (Պապուկ) աղ. Յովակիմեան՝ Մըկըր աղ. եղբայրն, Օքսենդ Միսեբեան, Յակովբ Թամանցեան,

Յովհաննէս, Նիկողայոս և Եղիա Խումաճեանք, Պետրոս աղայ Հալաճեան, Պօղոս աղայ Խաթրանեան և նոյն իսկ Մարկոս աղայն, որ համարձակ կը երգիծանէր: Հասարակութեան Հոգաբարձուաց ժողով որ լինէր, ոչ միայն վերոյիշեալ պատուելի ծերունիք չէին գար, այլ և երիտասարդաց մէջէն Մանուկ Ալաճալեան, Սարգիս Գէորգեան Ալաճալեան, Լոյսպարոն Սալթիբեան, Գէորգ Խաթրանեան և այլք:

Խաչատուր աղայ Խումաճեանն քաղաքագլուխ էր ոչ միայն առևտրական վկայագիր նա պիտի տայր, այլ և անցաթուղթ առնողէն քաղաքական հարկն ստանալոյ աղաղաւ ստացագիր տարյալայց յայսմանէ որովհետև առաջնորդական գործակատար էր, պսակի հրաման ևս պիտի տայր, որ առաջնորդական կամ աթոռահաս պսակըրամն չկորչի: Բայց քաղաքագլուխ էր Խալիբեանն. սա ինչ ասէր, Խումաճեանն որպէս աստուածառաք պատգամ կընդունէր:

1836 թուականին եկել էր Եկատերինոսլաւեան Պալատէն հրովարտակ՝ առնուլ Նախիջևանցւոց գլխահարկն հաւասար այլոց հպատակաց Ռուսաստանի, որով նոցա Արտօնագրի եղծման սկիզբն էր եղել, և հաւաքել էին 1836, 37, 38, 39 և 40 ամաց գլխահարկն և պահած ունէին քաղաքական պանձարանի մէջ և որովհետև 1836 ամին իսկ Գաբրիէլ Սոջայեանի քաղաքագլխութեան ժամանակն բողոք էին մատուցել, կըսպասէին վճռոյն որ իմանան, թէ ինչ ունին առնել:

Երբ որ հասաւ 1840 թիւն, համբաւ տարածուեցաւ թէ ընդհանուր դաւառսպետն Նորոյ Ռուսաստանի՝ կոմսն Միխայէլ Սիմոնեան Վորոնցովն սկսել է այց ելանել քաղաքաց՝ որ յանձնուած են իւրում տեսչութեան: Լուր հասաւ թէ նա եկել է մերձակայ Ռոստով քաղաքն և ի վաղիւ պիտի գայ Նոր-Նախիջևան: Թէպէտ քաղաքագլուխն էր Խաչատուր Խումաճեան, սակայն համեմատութեամբ Խալիպեանի առաւել խրատելիակի նման էր քան իշխանաւորի: Խալիպեան գնաց և բերեց Թագանրոզէն այն կողմանց քաղաքակալ բարոն Օթթօ Ֆրանքն, որ նոցա աջակից լինի, երբ աղերս արկանեն Վորոնցովի առաջն քաղաքացեաց գլխահարկն առնուլ և նոցա ընդարձակութիւն տալ որ ըստ հա-

ճոյից իւրեանց քաղաքէն ցրուին և ազարակաց մէջ ընակին, կալուածատերանց հողն մշակին և նոցա գլխահարկն կալուածատեարք հատուցանին: Մարկոս աղայն յայտնի կասէր, թէ մենք ծառայից և աղախնայց մեծամեծ վարձ կուտանք, բայց հայագգի ծառայ և աղախին չկայ. այլ վարձն օտարագրիք, մանաւանդ ուսագրիք կստանան: Մըկըր աղայն և Խալիպեանն հաստատել էին իւրեանց մտքի մէջ, որ չքաւորք գերդաստանաւ երթան նոցա ազարակի մէջ ընակին և նոցա հողն մշակին: Բայց այս մտաց տէր Գաբրիէլն հակառակ էր, ուստի երբ Վորոնցով կոմսն հասաւ ս. Լուսաւորիչ եկեղեցին, տէր Գաբրիէլն հանեց ծոցէն պատրաստեալ ճառի թուղթն և սկսաւ ընթեռնուլ, որոյ իմաստն այս էր, թէ գլխահարկ չլինի, այլ ինչպէս արտօնագրի մէջ նշանակուած է՝ լինի առհարկ: Կոմսն ասաց. իմ կողմանէ վստահացուցէք ժողովրդեան բազմութիւնն որ ես կանկանեմ առաջի վեհագոյն գահին ինքնակալին՝ այս քաղաքէն բառնալ այն լուծն, որ չէ գրած Արտօնագրին մէջ: Ժողովրդի հրճուանաց չափ ու սահման չկայր:—Կոմսն Վորոնցով քաղաքակալ Բարօն Օթթօ Ֆրանքի հետ գնաց Խաչատուր աղայ Խումաճեանի տուն, ուր կայր նախաձաշիկ պատրաստած, որոյ մինչև յաւարտելն խօսեցաւ թէ քաղաքակալ Բարօն Օթթօ Ֆրանքի, թէ քաղաքագլուխ Խաչատուր Խումաճեանի և թէ տէր Գաբրիէլի հետ միայն այն խընդրոյ մասին:

(Օթթօ Ֆրանք Բարոնն էր մի ի սիրելիաց Վորոնցով կոմսի, և տուել էր նորան Թագանրոզի քաղաքակալութիւնն, որ ճոխանայ հարստութեամբ. և շարժառիթ այս շնորհաց այն էր, որ կոմսուհի տիկինն Վորոնցով տուել էր ի կնութիւն Բարոն Օթթօ Ֆրանքին իւր սիրելի օրիորդաց մին, որ ունէր մեծ ճոխութիւն, բայց չունէր պատուական անուն. իսկ Օթթօ Ֆրանք ունէր Բարոնութեան արտոյոս, այլ էր աղքատ, և յապարանս Վորոնցով կոմսի ունէր պաշտօն դաւեշտարար դուրաճախօսի: Ճոխ օրիորդն տուել էր պաշտատական Բարօն Օթթօ Ֆրանքին հարիւր հազար ուրլի արծաթ, այնու պայմանաւ, որ գլխի պսակազրութեան միւս անգամ իրերաց երես չտեսնեն: Սորա ժամանակն էր, Ռոստով քաղաքն ելաւ Թագանրոզի իշխանութեան

ի ներքուստ, այլ Նախիջևան մնաց, որովհետև Սալիպեանին աւելի հաճոյ էր լինել ընդ իշխանութեամբ Թագանրոզի անմիջապէս, որով Նախիջևան պիտի կրէր երկու լուծ, մին՝ Թագանրոզի քաղաքակալութեան, միւս՝ Եկատերինոսքուեան գաւառապետութեան: Ընդ փոխարէն այս մտերմութեան՝ և քաղաքական Բարձր Օթթօ Պրանք տուել էր Նախիջևան քաղաքն Սալիպեանի ձեռքն նորա նախկին քաղաքագլխութեան ժամանակն, վասն որոյ և թէպէտ իւր հռամեակն աւարտելոյն զկնի Յարութիւն Սալիպեանն ել քաղաքագլխութեան պաշտօնէն, բայց Սոջայիանի և Սոմաճեանի օրով Սալիպեանն էր խկապէս քաղաքագլուխ):

Սուլթանշահեան Գրիգոր աղայն ունէր երեք որդիք և երեք դստերք, որոց երեցագոյնն էր կին Սիրովբէ Յովհաննիսեան Չորչոփեանի, միջինն՝ Մերկեան ժամկոչեան Գաբրիէլեանի (եղբոր ժամակոչեան տէր Յարութիւն քահանայի), և երրորդն հարսնացաւ Ալեքսանդր Սաչերեսեան Ալաճալիանին: Որդոց մին Սիմէոնն աշակերտեալ Լազարեանց ճեմարանի՝ իւր վայելչագլուխեան ձրիւք հասել էր ճեներալութեան աստիճանի և ամուսնացել էր ճեներալ Ալեքսանդր Մարգարեան Սուտաբաշեանի դստերն. իսկ միւս որդին Պօղոս՝ առևտրական, առել էր ի հարսնութիւն աղայ Գաբրիէլ Սոճայեանի զուստր Եղիսարէթն. իսկ երրորդն Գէորգ փեսայացաւ Նիկողայոս Սոմաճեանին: Արդ՝ երբ Վորոնցովն գնաց ի Պետերբուրգ, իսկոյն սկսաւ Նախիջևանայ գործն շարժել: Սիմէոն Գրիգորեան Սուլթանշահեան զրեց իւր հղբօրն Պօղոսին, թէ կոմսն Վորոնցով ազերսարկու եղև ի Ծերակոյտն և սա վճռեց գլխահարկն փոխել ի տնահարկ և թղթագրամն՝ յարձաթ: Այսու ազգաւ Պօղոսի տանն եղև մեծ ուրախութիւն, ուր չէին հրաւիրեալ ոչ Սոմաճեանն, և ոչ տէր Գաբրիէլն, բայց Սալիպեանք հրաւիրեալ էին: Սոմաճեանն սկսաւ զայրանալ և ազազակել. սով է Սալիպին Պապուկը, Ում շունն է Սուլթանշահի Պապուկը. Վորոնցովն մեր տունն էր. չոխտամն է սր կոռելի գող Սուլթանշահը մարդ եղել է:

Յետ իբր հօթն ամսոց եկն արքունական հրաման, որով միջնորդութիւնն Վորոնցով կոմսի ընկալեալ՝ Ծերակոյտն հաստատել էր զամենայն հայցուածս Նոր-Նախիջևանայ Հասարակու-

թեան, որով այնքանամեայ բարդեալ գլխահարկն ունէին հաշուել փոխանակ տնահարկաց յիտադայ ամաց բազմաց: Արժան համարուեցաւ զօհացողական հանդէս կատարել յեկեղեցւոյ և բերին ի սուրբ Սաչ վանից հրամանաւ Սոմաճեանի զՄկրտիչ վարդապետն, որ հանդիսաւոր պատարագ մատուցանէ, և ի քարոզի Սուլթանշահեան Սիմէոնի անունն հռչակէ, որպէս թէ նա է այս ամէնի նախապատճառն:

Գլ. ԻԶ

Թէպէտ Սաչատուր աղայ Սոմաճեանն իւր կողմն ամրացնել կամելով արաւ խնամութիւն Գաբրիէլ աղայ Սոջայիանի հետ, այլ նորա քաղաքագլխութեան վերջին տարին, այսինքն 1841 թուին, արդէն անհետ էր եղել Սոմաճեան կուսակցութիւնն. իւր քեռորդիք անգամ երես էին գարձուցել: Հասաւ ընտրութեան ժամանակն և համայնից 72 քուէիւք ընտրեցաւ Յարութիւն աղայ Սալիպեանն: Բոլոր հասարակութիւնն էր մի շունչ և մի հոգի:

Սալիպեանի առաջին բարին այն եղև, որ Հասարակութեան ծախիւք հիմնեալ վարժարանն արար արքունի ծխական վարժարան և ինքն իւր վերայ էաւ վերատեսչութիւնն, բայց վարժապետաց կարգն պահեց ի նոյնութեան, որպէս էր յաւուրս Մարկոս աղայի: Քաղաքացւոց տրոց ծանրութիւնն եղև կրկնապատիկ: Թագանրոզի քաղաքապետն պիտի գայ, այսքան դրամ շնորհեցէք, կը պահանջէր Սալիպեանն. դրամքն կը մտնեն ի Դուսն. յայնմհետէ պիտի չհամարձակի որ ոչ թէ միայն հարցունել, այլ և զմտաւ ածել, թէ ուր գնացին այնքան դրամքն:

1842 թուին յանկարծ համբաւ տարածուեցաւ, թէ պիտի կոմս Վորոնցովն գայ: Կոմսն եկաւ և եկեղեցիէն ուղղակի գնաց Յարութիւն աղայ Սալիպեանի տունն, և կրկին հրամայեց հրաւէր ուղարկել առ տէր Գաբրիէլն գալ անդ:

Համբաւ տարածուեցաւ նաև քաղաքի մէջ, որ Յարութիւն Սալիպեանի միակ որդին և ժառանգն գեղեցկատեսիլ Պօղոս պատանին սկսել է հագալ. ոմանք ասացին թէ ծածուկ ոգելից ըմպելիք վնասել է թոքին: Քաղաքի մէջ կը բնակէր մի երևելի

բժիշկ Գրիգոր Վասիլիչ Եւստափիեվ որ ազատատէր էր և հեռացել էր այն ամենայն վայրաց շրջակայքէն, ուր կայր ոստիկանութեան բռնութիւնն և ընտրել էր Նոր-Նախիջևան քաղաքն (1832 թուէն), ուր ոստիկան էր Խաչերես աղայ Մեսնիքեան, որ հայր էր հասարակաց և բարեկամ համայնից: Այս բժշկապետն չէր արծաթասէր, այլ էր իգասէր և անձնատուր թղթախաղի. 1827-էն սկսեալ մինչև 1832 կը բնակէր Ռոստով և պատճառն այն էր, որ սիրունին անդ կը բնակէր: Տիրացու Գարբրիէլ Պատկանեան ծանօթացաւ այս բժշկապետի հետ 1827 թուին հոկտեմբերին, երբ քոստ աշակերտաց բոսն փոխադրեցաւ ի նա: Բարեկամք խորհուրդ տուին Խալիպեանին Եւստափիեվին ևս առնել հրատէր և նա տէր Գարբրիէլի միջոցով կոչեց նորան: Մի քանի ամիս վերջը մեռաւ Պօղոս պատանին և թաղուեցաւ ս. Նիկողայոս եկեղեցւոյ գերեզմանի մէջ: Ամենեքեան ասացին. Յարութիւն ազան այսուհետեւ կսկսի Հասարակաց բարիքն մտածել, բայց նորա բնաւորութեան քաջածանօթ անձինք հակառակը կը վկայէին:

✓ Էանց Յարութիւն աղայ Խալիպեանի այս երկրորդ եռամեակի երկրորդ 1843 տարին ևս և եկաւ 1844 թուականն: Խալիպեանն ըստ առաջնոյն սկսաւ ուտել և ըմպել, արբեմալ, իւր տան մէջ յօգնականութիւն կնոջ իւրոյ Կատարինեայ պահել գեղեցիկ պճնադարեալ նախշտք, զորս և կը հարանացուցանէր իւր ճորտից: Միայն սգաւորութիւն նորա կերեէր յայնմ, որ ի Զատկի և ի տօնի Զրօրհնեաց կը փակէր իւր դուռն, և բացի միոյ քահանայէ չէր ընդուներ զայլ ոք, իսկ այլ գործք քաղաքագլխութեան կային ի կամս Աստուծոյ ապաստան. զրամագլուխք որբոց և այրաց իսպառ անհետ եղեալ, ի բանդէն ստէպ արգելականք կը խուսափէին, քաղաքէն մարդիկ աներևոյթ կը լինէին. շուկայք անմաքուր և աղտողի. գէշք սատակեալ շանց, կատուաց և այլն ամսորեայ ժամանակօք կը մնային ի փողոցամէջս, զողութիւնք կը յաճախէին, առևանգութիւնք եղին սովորական ինչ. երեք հզրարք ուսագզի համբաւաւոր աւազակք՝ արտաքսեալք ի Ռոսթովէ, եկան բնակեցան Նախիջևանայ մէջ. նոցա բարեկամք եղին քանի մի աւազակաբարոյ երիտասարդք՝ չէփչիկի Խաչուկ, Խարալխուշի որգիք, գեղացի Յարութիւն և յօրինեցին մի կազմա-

կերպեալ ընկերութիւն: Մի երեկի գող և աւազակ Սեմիժոն մականուանեալ յԱխսայէ ի Բաթայքէ և Ռոսթովէ քսորեալ՝ եղիտ ասպնջականութիւն ի Նոր-Նախիջևան հովանաւորութեամբ աղայ Յարութիւն Խալիպեանի: Փեսայն նորա Սերէոփայ կոչեալ շնորհօք մշտադարուն գեղեցկութեան կնոջ իւրոյ վայելէր յառանձնաշնորհ խնամարկութեան Խալիպեանի. այլ յորժամ կամեցաւ միջնորմ կանգնել ի մէջ կնոջ իւրոյ և Խալիպեանի, անհետ կորեաւ:

Որգին Խաչատուր աղայ Խումաճեանի Ստեփան զկնի մահուան կնոջ իւրոյ ժողովեալ զամենայն զրամագումար հօր իւրոյ՝ երեսուն հազար արծաթ՝ հո առանց մորհակի աղայ Յարութիւն Խալիպեանին և ինքն եմուտ ընդ հովանեաւ նորան. Ստեփանն մեռաւ յետ ոչ բաղում աւուրց, մնաց Խումաճեանն աղքատ: Այսպէս և Զէնկին Կարապետ էր տուեալ ի պահեստ զամենայն ճոխութիւն իւր, և ամենայն ճոխութիւն Մկրտիչ Կոկոյեանի և Մերկեան Կողպէթլեանի էին ի ձեռս նորա, զի էին ընկերք՝ իմիասին ընդ Աբրահամ Սիմօնեան Պալապանեանի. ի դէպ ժամուկորդեցին նորա ձեռքէն իւրեանց ստացուածքն. Կոկոյեանի կինն ստացաւ իւրն, իսկ Զէնկին Կարապետի և Խումաճեանի զրամագումարքն որպէս արդար վաստակ մնացին ի վայելս Խալիպեանի և նորա ժառանգորդաց: Բայց որքան անյայտ գումարք ևս անհետ կորեան ի ձեռս նորա:

Այս տարին շինուեցաւ Սուլթանշահանց գերդաստանի հաշուով Լուսաւորչի մեծ խաչք. ինչպէս և Յուսիկ Յուսիկեան ս. Խաչ վանից բարձրաւանդակէն դէպի յաղբիւրն շինեց մարմարեայ սանդուղք՝ ի մեծ գիւրութիւն ուխտաւորաց:

Գլ. Ի՛նչ

Տակաւին 1843 թուականին լուր տարածուեցաւ, թէ կայսրն Նիկողայոս Ա. հրամայել է Վարչապետական Ծերակոյտին տոարել մի մի ծերակուտական անձն, որ վերահասու լինիցին լայնատարած աշխարհի պիտոյից և կարեաց: Նախիջևանայ մերձակայ քաղաքք թագանրոզ և Մարիամպոլ քան զՆախիջևան աւելի բարե-

բաստիկ չէին. Բարոն Օթթօ Ֆրանք որ Նախիջևան քաղաքն տուել էր ի կամս Խալիպիանի, Մարիամպոլն տուել էր մի յու- նազգույ և զԹագանբոզ այլում: Ամենայն երեկի քաղաքք Ռու- սաստանի ունէին միմի այսպիսի ազրուկք, որք հասարակու- թեան արիւնն կըծծէին, և բարեբախտ էր այն քաղաքն, որ ունէր մի ազրուկ. մեծամեծ քաղաքք ունէին երկու, երեք և աւելի ազրուկք:

Եկատերինոսլաւեան զաւառապետութեան դատաքննիչ էր կարգեալ ծերակուտական անձն ճեներալ Ժեմչուժնիքովն՝ այր լըջամիտ, անկաշառ, արդարամիտ և անձանձիր. ուր որ միան- գամ կերթայր, բնաջինջ կանէր որ և իցէ խարդախութիւն, զօշա- քաղութիւն և այլն. և այս թերութեանց յանցաւորքն չէին մնայր անպատիժ:

Ահա այս Ժեմչուժնիքովն էր որ ի սկիզբն աշնան 1844 ամի եկն ի Նոր-Նախիջևան և սկսաւ մագիստրաթի քննութիւնն: Նա նստելով յատենի՝ պահանջել է այս ու այն դատափետելոց գրա-ւոր գործքն և գտել է բազմազիմի անտեղութիւնք, որով թէ դատաւորք և թէ քաղաքապետին Խալիպիան ընկել են ընդ ծանր բարկութեամբ նորա և կենդանւոյն մեռեալ են. բայց տէր Գարբիէլ Պատկանեանի միջնորդութեամբ նոցա ներել է:

Ժեմչուժնիքովն իջևանել էր Մարկոս աղայի տունն\*): Նորա գալտեան երկրորդ կիւրակէն քաղաքն տուեց մեծածախս երե-կոյթ վարժարանի դահլիճի մէջ, ուր եկել էր և Թագանբոզի քա-ղաքակալն Բարոն Օթթօ Ֆրանք: Երիցս կրկնեալ երեկոյթքն, որոյ վերջինն եղև Մկրտիչ Սաչերեսեան Կոկոյիանի տունն, Խա-լիպիանի վիճակն նոյնպէս ապահովեց, որ տակաւին 1844 թիւն չէր վերջացել, մինչ սկսաւ հասարակութեան մէջ ասուել, թէ հան-դերձեալ եւամեկի քաղաքապետութիւնն դարձեալ պիտի յանձն լինի Խալիպեանին: Եւ արդարև քուէից մեծամասնութեամբ ընտրուեցաւ երրորդ անգամ Յարութիւն աղայ Խալիպեան՝ 1845, 1846 և 1847 ամաց համար:

1845 թուին յուլիսին Ֆէոդորով, որ ի տեղի կոմսին Վորոն-

\*) Այս տունն գտնուում է թեմական դպրանոցին կից, արև-մտեան կողմը:

ցովի ստացել էր իշխանութիւն Նորոյ Ռուսիոյ, եկն ի Նախի-ջևան: Տէր Գարբիէլն Պատկանեան Սուլթանշահեանց նուիրեալ մեծ Խաչն ի ձեռին ել ի դուրս և եմոյժ զնա յիկեղեցի: Եւ դար-ձեալ առ Յարութիւն աղայ Խալիպիան ասաց. ինչ կարիք որ ունի հասարակութիւնն ու քաղաքն, կարես ուղղակի ինձ յայտնել և յինէն ահնուենել ամենայն բարեաց, ինչպէս որ խնդրեաց տէր Հայրն:

Նոյն թուականի հոկտեմբեր ամսի տասն և հինգին լուր առին, թէ արքայորդին Ռուսաց մեծ իշխան Կոստանդին Նիկո-լայեիչն, արդէն եկել է ի Ռոսթով: Խալիպեան իւր աթլը խա-բաւուլ գեղացի Ստեփան սպասուորի ձեռքով հրաւիրեց զՄկրտ-տիչ վարդ, որ արքայորդուն ընդ առաջ ելանէ: Արքայորդին եկաւ կառօք. նորա հետ կայր իւր դաստիարակն փոխ—ծովա-կալ իշխանն Լիթքէ, և մինչ արքայորդին իջաւ կառքէն, ահա Մկրտիչ վարդ. ել յիկեղեցւոյն զգիստաւորեալ և մեծ խաչն զրեց ընդ սուրբ Մեծի իշխանին, իսկ Եղիա տէր Աստուածա-տրեան սարկաւազն ասաց ուստիւն զՏէր աղաչեսցուք:

Ի սկիզբն նոյեմբերի եկաւ Վեհափառն Ներսէս և նորա ընդ-ատաջ զնացին Յարութիւն աղայ Խալիպեանն, Գէորգ ա. Խա-թրանեանն, Գանիէլ Օտարաշեանն՝ առեալ իւրեանց հետ զՏէր Մարտիրոսն: Ընդ սոսա էր Խաչատուր ա. Խոմաճեանն և խնա-մին իւր Գարբիէլ Խոջայեանն: Սորա հասին մի զիւղակ, որ էր ի մէջ Թագանբոզի և Մարիամպոլի և հանդիպեցան Վեհափառ Կաթուղիկոսին: Վեհափառն իջել էր կառքէն և մտել էր ի դահ-լիճ կայարանին, ուր պիտի փոխուէին կառածիզ գրաստքն: Զկնի սուղ ինչ միջոցի՝ Խալիպեանն որպէս քաղաքապետ ի հրաւիրե-ցաւ ի ներքս ի դահլիճն և դուռն փակեցաւ: Վերջապէս բացաւ դուռն և ամենքին մտին ի դահլիճն: Խալիպեան կանգնեցոյց զԶէնկին Կարապետն յանդիման Վեհափառին և ասաց. ահա սուրբազան Հայրապետ Չեր իջևանի տանուտէրն\*). և նա յար-դարեց մի արքայավայել նախաճաշ:

Երբ պատրաստուեցան ձիանն, Հայրապետն նստաւ ալայ

\*) Զէնկին Կարապետի տունը այժմ Խրլլըճեանց է պատ-կանում:

Յարութիւն Խալիպեանի կառքն և սկսաւ չուն զէպի Թագանորդ: Այն զիշերն անցուցին ի ճանապարհի. երկրորդ օրն հասին ի Նախիջևան: Վեհափառ Հայրապետն մտաւ ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցին, ուստի ելել էր 1828 օգոստոսի վերջին աւուրքն: Սրբազան Հայրապետն դարձաւ առ ժողովուրդն և սկսաւ քարոզել սէր և խաղաղութիւն ընդ ամենեսին և մանաւանդ ընդ Ռուսաց:

Վեհափառ Հայրապետն իւր գալստեան միւս օրն արդար դատաստանի ատեան կարգեց դատելու տէր Գարրիէլ Պատկանեանին: Սա գնաց Ձէնկին Կարապետին տունը ինն ժամու և տեսաւ որ ատեանն խմբեալ էր. տէր Խաչատուրն Սէթեան նստած էր. յաջմէ և յահեկէ նորա քաղաքի մեծամեծքն՝ բայց յերից Փոփովեանց Մարկոս, Մըկըր և Պապուկ աղայից: Վեհափառն կայր ուրոյն բազմեալ, հանդէպ նորա սեղանակ և ի վերայ նորա քողածածուկ Խաչ և Աւետարան. ի յետուստ Վեհափառին կային Հոգևոր կառավարութեան երեք անդամքն, որոց հետ կը շնչէին անդադար Թաղէոս վարդ. և տէր Մարտիրոսն և նոցա փեսայն Սարգիս Թուֆլիկեան: Այս դատին արգասիքն այս եղաւ, որ տէր Գարրիէլն Թիֆլիս հեռացնելու որոշումն եղաւ և տրուեցաւ երեք կոնդակ. առաջին կոնդակաւ շնորհեց Մկրտիչ Եկանեանին Լուսաւորչեան հայ անունն և հայ մանկանց վարժապետութիւնն, և հրամայեց որ ամէն հոգևորակամք հայոց երթան ուսանին Մկրտիչ վարժապետէն և առանց նորա ընդարձակելոյն ոչ ուրար ստանան, ոչ սորկաւազութիւն և ոչ քահանայութիւն: Երկրորդ կոնդակաւ հաստատեց տէր Մարտիրոսի աւագ քահանայութիւնն և նորա իրաւասութիւնն ամենայն եկեղեցականաց վերայ՝ կրկին կարգելով նախանգամ Հոգևոր կառավարութեան Նոր-Նախիջևանայ: Երրորդ կոնդակաւ շնորհեց քաղաքագլուխ աղայ Յարութիւն Խալիպեանին լիակատար իշխանութիւն ամենայն հոգևոր և եկեղեցական գործոց թէ քաղաքին, թէ ս. Խաչ Վանից և թէ շրջակայ հինգ գիւղօրէից, նորա իրաւասութեան ենթարկելով և գործակատարութիւնն և եկեղեցեաց առձեռն պատրաստ դրամքն և ամենայն երկրաստան եկեղեցեաց արդիւնքն և վարժատան տնօրէնութիւնքն:

Դեկտեմբերի 1, 1845 թուականին Վեհափառ Հայրապետն

եկն ի սուրբ Լուսաւորչի աւագ եկեղեցին տալ իւր Հայրապետական վերջին օրհնութիւնն. իսկ 1846 թուի յունվարի 20-ին յուզի անկաւ Թիֆլիս տէր Գարրիէլ Պատկանեանն: Ուզեկից էին միայն իւր նոր խնամին Մարկոս աղայն, Յուսիկ Կուսիկեան և Միքայէլ Նալբանդեան աշակերտն:

Գլ. ԻԷ

Քսաներորդ չորրորդ եռամեկի համար վասն 1848, 1849 և 1850 ամաց դարձեալ քաղաքագլուխ ընտրուեցաւ աղայ Յարութիւն Խալիպեանն: Յիշատակութեան անցք եռամեկիս էր այս, զի կոնդակաւ Սրբազան Կաթողիկոսին Ներսէսի եկն ի քաղաքն Նոր-Նախիջևան Սրբազան արքեպիսկոպոսն Մատթէոս: Սա էր ամս բազումս գանձապետ Էջմիածնի, և յաւուրս հայրապետութեան Յովհաննու Կարբեցոյ էր առաջնորդ վիճակին Շամախոյ: Սա արհիմերորդ առաջնորդ էր Նախիջևանայ (Յովսէփ, Եփրեմ, Յովհաննէս Գաւնակերեան և Ներսէս) իսկ և իսկ ընդձեռն Նախարարութեան Աշխարհմիջեան գործոց փոքր առ փոքր ամփոփեաց զիշխանութիւն Խալիպեանի և սկսաւ պահանջել զհաշիւ եկեղեցական դրամագլխոց. այլ Խալիպեան չկամէր տալ հաշիւ առաջնորդին: Խալիպեան զժխական վարժարանն եհան ի կարգ Նահանգական վարժարանաց ի 1850 ամի և ինքն կարգեցաւ վերատեսուչ: Նոր Նախիջևանայ Նահանգական ուսումնարանն վեհագոյն հաստատեցաւ ի 1849 ի յուլիսի 4 և ունի կանոնս պարունակեալս ի 13 յօդ. Յեօթներորդին գրեալ է. յիւրաքանչիւր երիս դասարանս աւանդին. ա) Կրօնագիտութիւն դաւանութեան Հայոց. բ) Լեզու ուսաց՝ փաղառութեամբ և վերին մասին քերականութեան. գ) Հայոց լեզու. դ) Թուրքանութիւն. ե) Երկրաչափութիւն՝ մինչև ի Հաստատաչափութիւն փաղառութեամբ, այլ առանց ապացուցի: զ) Աշխարհագրութիւն. է) Պատմութիւն Ռուսաց և Ընդհանուր պատմութիւն, այլ Պատմութիւն Հայոց համառօտ. ը) Գեղեցիկ գրութիւն, զձագրութիւն և նկար: Վեհագոյն հաստատեալ պաշտօնացուցակ նահանգական վարժարանին.

Վերատեսչին . . . . .	214 ո. 45 կ.
Երկից վարժապետաց ուսմանց . . . . .	536 — 16 —

Վարժապետին Հայոց լեզուի և Պատմութեան . . . . .	214 — 43 —
Կրօնուսուցչի . . . . .	85 — 75 —
Ուսուցչին նկարուց, գծագրութեան և գեղագրութեան . . . . .	78 — 4 —
Ի պարզ և աշակերտաց . . . . .	14 — 25 —
Ի մատենադարանն և յուսումնական օժանդակութիւնս . . . . .	42 — 85 —
Ի պահպանութիւն տանն, պահպանին և այլ ծախք . . . . .	214 — 25 —
	<hr/>
	1410 — 16 —

Եհաս Նոր-Նախիջևանայ քսան վեցերորդ եռամեակն և ազա-Մանուկ Ալաճալեան եղև քաղաքազուլս վասն 1854, 1855 և 1856 ամաց: Սա խոհեմութիւն համարեցաւ ընթանալ շաւղօք Խալիպեանի և ստէպ խորհուրդ հարցանել ի նմանէ և վարել քաղաքական գործն ակնարկութեամբ նորա, որով և անկաւ ընդ բամբասանօք հակառակորդաց Խալիպեանի, որք յոյս ունէին ի ձեռն Մանուկ աղայի ազատիլ:

Խալիպեան ընդարձակեաց աղայ Գէորդ Խաթրանեանին, որ էր երեսօխան Լուսաւորչի և Հոգաբարձու ս. Խաչ Վանից, զպարտէզն ս. Խաչի զարդարել առանց խնայելոյ զեկեղեցական դրամագլուխն. Խաթրանեան կատարեաց զհրաման նորա ի 1854 ամի: Սորա ընկերակից եղև անգլանիկ որդին Մարկոս աղայի Յովհաննէս Մարկոսեան, որ շինեց այն պարտէզի մէջ մի գեղեցիկ հովանոց (Ռոթոնս) և ընդ նմին տուն մի փոքրիկ: Ի նմին ամի ի ձմեռն 1854 ամի ամիսք յունվար և փետրվար եղին ձիւնալի և ցուրտ սաստիկ, որով աղքատք վտանգեցան. այլ երիտասարդք կազմեցին Մարդասիրական ընկերութիւնն և մեծ օգուտ ցուցին նեղելոց:

Գլ. ԻԸ

Ի քսան և եօթներորդ եռամեկի քաղաքազուլս ընտրուեցաւ յաղաղս 1857, 1858 և 1859 ամաց աղայ Սիմէոն Խաչերեսեան Ալաճալեան՝ կրտսեր եղբայր նախորդ քաղաքազլոյ: Սա

թէպէտ և չուներ հակառակութիւն ինչ ընդդէմ Յարութիւն Խալիպեանի և կըպատուէր զնա որպէս մեծարոյ ծեր և քաղաքի բազմաժամանակեայ պաշտօնավար, սակայն չմտաւ նորա ձեռքի տակ և ընդ ամենեսին քաղցրութեամբ և քաղաքավարութեամբ կենցաղավարելով՝ իւր անձը պահեց անբամբաս և խրեանց գերգաստանի պատիւն անբասիր:

Երանելի էր երբեմն գերզաստան Ալաճալեանց՝ որոց էին շատաիդք չորք: Առաջին շատաիդէն մնացել էին մի ուսար Վրթանէս անուն և մի դուստր, որ եղև կին պարկեշտ հարսնացած Շլթեան Գէորդ աղայի որդւոյ Կարապետի. իսկ Վրթանէս էառ յիւր կնութիւն զգուստր տէր Աստուածատուր աւագ քահ. Շարոշիքեանց: Երկրորդ շատաիդն էր Դրակոն Գէորդի, որոյ միակ դուստրն Մարիամ հարսնացած էր Լազարեան Աստուածատուր աղայի և մնաց անգաւակ. և միակ որդին Սարգիս փեսայացաւ տանն Խաթրանեան, եղև հայր բազում զաւակաց, զորս և մի առ մի թաղեաց, որով տունն այն շիջաւ իսպառ: Երրորդ շատաիդն էր զրակոն Թոմասու, որոյ միակ դուստրն էր կին Սալթիկեան Լոյսպտրոն աղայի, իսկ միակ որդին Սարգիս փեսայացաւ տանն Խոմաճեան Խաչատրոյ, բայց տունն այն անհետացաւ: Իսկ չորրորդ շատաիդն էր Ալաճալեան Խաչերեսի, որ ունէր վեց որդիք և մի դուստր. վախճանեցաւ որդին Մերոն անուն ի ծաղկեալ տիս պատանեկութեան և մնացին Պետրոս, Մանուկ, Սիմէոն, Աղեքսանդր և Յոհաննջան: Սոցա մայրն էր դուստր Հեքիմ Գրիգորի՝ Խաթրն, որ զարգացոյց զնոսա և մի առ մի փեսայացոյց:

Աւարտեցաւ և այս եռամեակ և վասն 1860, 1861 և 1862 ամաց ընտրեցաւ աղայ Կարապետ Մարգարեան Հայրապետեան: Սա ուրախութեամբ յանձն էառ ուսումնարանի վերատեսչութիւնը միաբան խորհրդով առաջին զատուոր աղայ Մանուկ Դանիէլեան Քարաքաշեանի: Հայրապետեան հաստատեց 1860 թուին նոր ժողովրդանոց (քլուպ), որով երիտասարդութիւնն ազատեցաւ սրճանոցաց ազտեղութենէն:

Պատկանեանի ի Նախիջևան զալստեան առաջին տարին 1827 ամի Պոպովեան Մըկըր աղայի օրինակին հետեկելով, որ իւր եր-

կուց եղբարց դատերն տուել էր Թագանրոզի օրիորդաց կրթարանն, նորա քննակալ աղայ Գաբրիէլ Խոջայեան և Թորոս Կոզոտեանն իւրեանց դատերն տուել էին Պատկանեանին որ ուսանին. այլ երբ ընկաւ Մարկոս աղայի գժտութիւնն, այնուհետև Պատկանեան չընդունեց աղջիկ աշակերտք. այլ Մկր. Սիմ. Եկանեանն կուսուցանէր. և օրիորդաց մէջ գեղեցիկ ձեռագիր ունեցող աղջկունք կային ոչ սակաւ. այլ այսու ամենայնիւ օրիորդաց կրթութիւնն աւելի նուազ էր: Խոջայեան Մարտիրոս աղայի որդին Սարգիս իւր միակ դստեր կրթութեան ազագաւ վարձեց և բերեց Աստրախանէն մի առսազգի ազնուական կին, որոյ դուստրն Աննա Փեթրոֆայ Փոփովեան աւարտել էր իւր ուսման ընթացքն Աստրախանայ օրիորդաց կրթարանի մէջ. և սա եղև առաջին որ իւր դստեր կրթութեան ազագաւ յօժարեցաւ իւր վաստակոց մասն զոհել. Նախիջևանայ աղջկունք սկսան կրթութիւն ստանալ:

Աննա Փեթրոֆայի մասնաւոր կրթարանն բացել էր բազմաց օչքն տեսնել նորա անբաւականութիւնը. և Հայրապետեան հոգ տարաւ այդ մասին և Նախիջևան քաղաքի մէջ բացաւ օրիորդաց դպրոց:

Ի 1863 ամի ի 11 հոկտ. եկն թագաժառանգ կայսրդին Նիկոլայ Ալեքսանդրովիչ յայցելութիւն Նոր-Նախիջևան քաղաքի, զոր մեծաւ պատուով ընկալաւ քաղաքագլուխն Հայրապետեան և իջևանեցոյց ի տան Ալեքսանդր Ալաճալեանի, որ և ետ քաղաքն ճաշ մեծածախ:

Աղայ. Կարապետ Հայրապետեան Հնդկաստանի հրիտակք յաջողեցոյց հասուցանել յօգնութիւն Նոր-Նախիջևանայ: Ի խորհրդեան ժողովոյն սմանք խորհուրդ տային զՅարութիւն Աճեմեանն առաքել, զի նա քանիցս արարեալ էր ճանապարհորդութիւն ի Պօլիս և ի բազում ծովեզերեայ քաղաքս Եւրոպիոյ. այլ տէր Գաբրիէլ Պատկանեանն առանձին համոզեաց զաղայ Կարապետ Հայրապետեան և զՄանուէլ Քարաբաշեանն առաքել զՄիքայէլ Նալբանդեանն, որ և առաքեցաւ իսկ: Զկնի մահուան սորա երախտագէտ Կարապետ Հայրապետեանն բազում զժուարութեամբ ստացաւ հրաման փոխազրել զմարմին ի Նոր-Նախիջևան և մե-

ծաւ փառօք ետ թաղել զնա ի սրահի ս. Խաչ վանից: Տէր Եղիա Շարոշնիքեան ամբաստան եղև, և բացաւ սարսափելի փութախէ ի վերայ աղայ Կարապետի Հայրապետեան գուն գործէին արկանել զճանձախարիթ, որպէս թէ նա կամեցել է յանդիման կացուցանել զմահ Միքայէլ Նալբանդեանի որպէս զկատարած Մարտիրոսի ճշմարտութեան:

Ի 1864 ս. Խաչ վանքի հօթանասունամեայ ձերութիւնն պահանջեց նորոգութիւն. Կ. Հայրապետեան մեծամեծ նուիրարերութեամբ սկսաւ և աւարտեց նորա շինութիւնն, որոյ հոգաբարձուք էին Գէորգ Սաթրեանեան և Ալեքսանդր Ալաճալեան:

Ի հինգերորդ ամի քաղաքագլխութեան իւրոյ հիւանդացաւ աղայ Կ. Հայրապետեան և բռնադատեցաւ կամաւ հեռանալ յաթոռոյն: Սա աշակերտել էր Լազարեանց ճեմարանի աշակերտ թէղորոս Սատամեանին, որ բարեկենդանի համար իւր աշակերտաց հետ խաղացել էր Վարդան Մամիկոնեան հղերիբուցութիւնն. այս թատերախաղին մէջ Կ. Հայրապետեան ունէր քաջին Վարդանայ դերն:

Գլ. ԻԹ

1866, 1867 և 1868 եռամիկի համար քաղաքագլուխ ընտրուեցաւ Սաղաթիէլ Գաթեան Քայալեանց, որ ի մանկութենէ սպասուոր էր կրպակին Մատթէոս Յակովբեան Սլճճեանի և էառ ի հարսնութիւն նորա երկրորդ դուստրն: Սորա առաջին զործն այն եղաւ, որ ինչ իւր նախորդաց ժամանակն հիմնած էր յօգուտ քաղաքի, սա որպէս աւանդ ոչ միայն պահեց, այլ և հոգեով չափ աշխատեցաւ ևս առաւել կազդուրել: Յառաջին ամի իւրոյ քաղաքագլխութեան տէրութենէն հաստատութիւն խնդրեց Բարեգործական Ընկերութեան ազագաւ և ընկալաւ:

Ի 1867 թուականի ի սեպտ. 4 Վեհափառ կաթողիկոսն ամենայն Հայոց Գէորգ եկն և իջևանեցաւ աղայ Ալեքսանդր Ալաճալեանի տունն, զի բան զայն լաւ այլ ոչ գոյր տեղի իջևանի:

Ի 1868 մագիստրաթն վերացաւ, որ արտօնագրով էր շնորհեալ և Նախիջևան քաղաքն վարեցաւ նովաւ ութսուն և ութ ամ: Փոխանակ նորա հաստատեցաւ նոր Հաշտարար կարգադրութիւն,





բայց սորա հետ Նախիջևան զրկուեցաւ առանձին ինքնագլուխ քաղաք լինելէն, այլ մտաւ ի կողար Ռոստով քաղաքի որպէս մի արուարձան նորա: Զօրութեամբ կուսակցաց Սալիպեանի առաջին անգամ ընտրեցաւ խազախ Ալէքսանի որդին բժիշկ Մինաս Ալեքսանդրեան Սալիպեանն հաշտարար դատաւոր:

Սաղաթիէլ Քայալեանի քաղաքագլխութեան վերջին տարին, այսինքն՝ 1868 թուականին սկսան քաղաքի բանի մի գլխաւոր փոփոցքն քարայտակ ծածկել, և ոմանք քարայտակ մայթիւք պատասպարել:

1869, 1870 և 1871 ամաց համար քաղաքագլուխ ընտրուեցաւ Մատթէոս Փլոթնիքեանն, որ գոլով երեսփոխան՝ Երեսփոխան ևս կը մականուանէր: Սա ս. Գէորգ եկեղեցին շատ գեղեցկացոյց թէ ներքուստ և թէ արտաքուստ, բայց քան զչափն աւելի կամելով եկեղեցին արդիւնաւորել պատճառ եղև որ Ստրէլէզն խափանեցաւ, հայրենաւանդ այն հոգևոր զբօսանքն անհետ կորեաւ: (Այժմ էլ կայ):

Այս Մատթէոս Փլոթնիքեանի ժամանակ 1870 թուականին Նախիջևանայ ազատութիւնն խապառ վերացաւ և Նախիջևան ձգուեցաւ ընդ իշխանութեամբ Ռոստովու սուրիկանութեան, յորմէ նշանակեցաւ մի թաղապետ հանդերձ երեք օգնականօք: Այս փոփոխութիւնն առիթ առեց, որ Մատթէոս Փլոթնիքեանն զկնի աւարտման իւր եսամեկի մնաց այլ ևս տարի մի, որով ժամանակ քաղաքագլխութեան նորա տեկց չորս ամ:

1873, 1874, 1875 և 1876 թուականաց համար քաղաքագլուխ ընտրուեցաւ Սալիպեանի փեսայն Գաբրիէլ աղայ Սոջայեանի որդին Գէորգ: 1872 թուին հաստատուել էր Նախիջևանայ մէջ նոր քաղաքական զրութիւն և ահա սորա զօրութեամբ կարգադրուեցաւ նոր խորհրդարան. ընտրուեցան 72 քուէարկուք և քաղաքագլուխ Գէորգ աղ. Սոջայեանն: |

Սորա առաջին գործն եղաւ որ 1873 թուին շինեց իւր տան առաջ քաղաքի ծախիւք ծառատունկն (պուլվառ), որ եղև զբօսավայր արանց և կանանց\*): Այս ծառատունկն 1829 թուա-

\*) Այժմ չկայ:

կանին կամեցաւ շինել Յուսիկ Կուսիկեան, բայց արգելք եղան:

1874 թուին գլուխ բերին այն խորհուրդն, որ 1827 թուին կամեցել էր Սաջատուր աղ. Սոմաճեանն, և 1860 թուին աղայ Կար. Հայրապետեանն, այն էր շինութիւն երկուց կամրջոց Գոնաւիս գետոյ վերայ, որով գետի միւս երեսէն անխափան կուգան բեռնաւորաւ սայլք ուղղակի Նախիջևանի շուկայն, որք ցայն վար կերթային կամ ի Ռոսթով և կամ յԱխսայ:

1877, 1878, 1879 և 1880 թուականաց համար ընտրեցաւ քաղաքագլուխ բժիշկ Իսահակ Ալաճալեան, երբեմն քաղաքագլուխ եղեալ Մանուկ աղայ Ալաճալեանի որդին:

Սորա առաջին գործն այն եղև, որ նահանգական վարժատունն կերպարանափոխ արար կարգադրութեամբ նախարարութեան Համազդային լուսաւորութեան և կոչուեցաւ Քաղաքային Ուսումնարան: Սահակեան և Մեսրոպեան, Միքայէլ Նալբանդեանի Հնդկաստանէն բերած հրիտակաց արդեամբք:

Նոյն 1877 թուականին, ըստ կտակի դստեր աղայ Պօղոս Սաթրանեանի Կիւլպիքէի (Վարդուհետ) ամուսնոյն ագնիւ Սարգիս Գէորգեան Ալաճալեանի, շինեցաւ Լուսաւորչի գերեզմանատան հոյակապ եկեղեցին յանուն ս. Յովհաննու, ձեռամբ եղբորորդոյն իւրոյ Յովհաննէս Գէորգեան Սաթրանեանի: Սորա առընթեր կանգնեցաւ ըստ կտակին և մի գեղեցիկ տուն որպէս պատրաստական սեղանատուն, ուր կարեն հոգաբարձք պատրաստել ճաշկերոյթ վասն հոգւոց հանգուցելոց:

Ի 1878 թուին շինեցաւ ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շուրջն երկաթեայ վանդակաւ որմ աղայ Պօղոս Մկրտչեան Նազրեանի երեսփոխանութեան ժամանակն, որ քանի ամ մարտեցաւ խոչընդակաց դէմ: Ի 1879 ս. Սաջ վանից պարտիզի մէջ կառուցաւ գեղեցիկ հովանոց (աթոնա) վերակացութեամբ Գրիգոր Կարապ. Սալթիքեանի և Սաջատուր Տէր Պօղոսեան Ստեփանոսեանի:

\* Վերջապէս 1879 թուին ածուեցաւ հանդիսաւոր կերպով քաղաքի հարիւրամեակը: Իսահակ Ալաճալեանը 1879 թուի հոկտեմբերի 11-ին հրաժարուեցաւ և նորա փոխարէն ընտրուեցաւ Միքայէլ Պօղոսեան Կարապետեան (1879—1881): Ապա քաղաքագլուխ դարձաւ Գրիգոր Կարապետեան Սալթիկեանը

(Քարամրզայեան), որ վարեց իւր պաշտօնը 1881 թուի մարտի 4-ից մինչև 1888 թուի դեկտեմբերը, երբ քաղաքագլուխ ընտրուեցաւ Մինաս Եղիայեան Պալապանեան (1888—1898): Այնուհետև ընտրուեցաւ Յարութիւն Գաբրիէլեան Մեղրոնեան-Նգեկեան (1898 հոկտ. 10—1899 մայ. 19) և ապա Պօղոս Կէորզեան Խաթրանեան (1899 մայ. 19—1901 սեպտ. 20): Երկրորդ անգամ Մինաս Եղ. Պալապանեան (1901 սեպտ.—1905 հոկտ. 12) և ապա Քերովբէ Միքայէլեան Պուպով 1905 հոկտ. 12—1909 հոկտ. 10): Երրորդ անգամ քաղաքագլուխ ընտրուեցաւ Մինաս Եղ. Պալապանեան (1909 հոկտ. 10—1913 սեպտ. 15): Այս ժամանակ առաջին անգամ քաղաքային իրաւասու ընտրուեցան նաև մի քանի ուսաներ:

Վերջին հայ քաղաքագլուխ դարձաւ կրկին Քերովբէ Միքայէլեան Պուպով (1913 սեպտ. 15—1917 սեպտ), որ է սերունդ յայտնի Տէր Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանի, եղբօր Յովսէփ Կախկոպոսի Քաչատուր սարկաւաղին: Սկսուեցաւ յեղափոխութիւնը և քաղաքային վարչութիւնն ու խորհրդարանն ամբողջապէս անցաւ ոտս յեղափոխականների ձեռքը:



ՄԼ Գայագիտական գրադարան



MAL003119

